373
S-73.

ՀՍԽՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՍԵԿՏՈՐ

ԾՐԱԳԻՐ

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ

(Քաղաքի յեվ գյուղի)

(Հաստատված ԼԺԿ կոլեգիայի կողմից)

IV ՊՐԱԿ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

5—8-րդ խմբերի համար

373
Մ-73

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

1928

2 APR 2013

Պատասխան խմբագիր՝ Ա. Առաքելյան
Տեխ. խմբագիր՝ Գ. Զենյան
Սրբագրիչ Ա. Ցերիցյան
Հանձնված է արտադրության 14 ոգոստոսի 1933 թ.
Ստորագրված է տպելու 8 սեպտեմբերի 1933 թ.

Պատվեր 1858 Հրատ 2701 Գլավլիտ 8265 (բ) տիրաժ 3000

31.790

5-73
սկ

136

- MAR 2010

832
38

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ

1932 թվին կազմված աշխարհագրության ծրագրի հիմնական պակասությունը, վոր մատնանշված է «Տարրական ու միջնակարգ դպրոցների ուսման ծրագրերի և ռեժիմի մասին» Համակոմկուսի (բ) Կենտկոմի 1932 թվի ոգոստոսի 25-ի վորոշման մեջ, «քարտեզի վրա կողմնորոշվելու բացակայությունն» է:

Քարտեզի վրա կողմնորոշվելու այդ բացակայությունը կարմիր թելով անցնում է 1932 թվի ծրագրի բոլոր բաժիններով:

Հինգերորդ տարվա ֆիզիկական աշխարհագրության բաժնում դա արտահայտված է ծրագրի հենց կառուցվածքի մեջ. ծրագիրը մայր ցամաքների տեսությանը 80 ժամից հատկացնելով ընդամենը 10 ժամ, մնացած ժամերը տալիս է ընդհանուր յերկրագիտության տարրերին, վորոնց մասին խոսվում է գեոֆիզիկայում, առանց քարտեզի վրա կողմնորոշման:

ԽՍՀՄ-ի աշխարհագրության բաժնում (վեցերորդ տարի) և կապիտալիստական յերկրների աշխարհագրության մեջ (յոթերորդ տարի) այդ թերությունները ավելի խիստ եյին արտահայտված:

Այստեղ պետք է նշել.—

1. Բացակայում է անհրաժեշտությունը դեպի բնական պայմանները, վորոնք կամ բոլորովին անտեսված են, կամ թե չարադրված չափազանց համառոտ՝ առանց թվելու աշխարհագրական նոմենկլատուրան և առանց ցույց տալու բնական պայմանների ազդեցությունը յերկրների և շրջանների եկոնոմիկայի վրա:

2. ԽՍՀՄ-ի և կապիտալիստական յերկրների դասընթացում շրջանները և յերկրները դասավորված եյին ըստ նրանց տիպի և վոչ ըստ սահմանակցության, այսինքն աշխարհագրական դասընթացում բացակայում եր աշխարհագրական կարգը, մի հանգամանք, վորն առաջին անգամ նյութին անցնելիս չափազանց դժվարացնում եր քարտեզի յուրացումը:

3. Եկոնոմիկայի և քաղաքականության տարրերի դերակշռումը հանդես աշխարհագրական տարրերի, ըստ վորում թե եկոնոմիկան, թե քաղաքականությունը տրվում էին առանց նրանց աշխարհագրական արտահայտվածության:

Այս ամենը վերջին հաշվով հանգում էր նրան, վոր աշխարհագրությունը ֆիզիկական աշխարհագրության բնագավառում փոխարինվում էր ընդհանուր յերկրագիտությամբ, իսկ տնտեսական աշխարհագրության բնագավառում՝ տնտեսական քաղաքականությամբ ու հասարակագիտությամբ և այդպիսով աշխարհագրությունը կրկնում էր հասարակագիտության և տնտեսական քաղաքականության դասընթացը:

Համկոմկուսի (բ) Կենտկոմի 1932 թ. օգոստոսի 25-ի վորոշումը հրահանգում է՝ «Աշխարհագրության ծրագիրը պիտի ապահովի քարտեզը, մանավանդ ԽՍՀՄ քարտեզը իմանալը, ֆիզիկական աշխարհագրության հիմնական հասկացողությունները, ԽՍՀՄ-ի, ինչպես ամբողջ Միության, այնպես՝ ել յուրաքանչյուր հանրապետության, յերկրի և մարդի ֆիզիկական, բնական ու տնտեսական աշխարհագրության հիմնական տարրերը: Աշխարհագրության ուսման ծրագրերի մեջ պատշաճ ծավալով պիտի տեղ գտնեն նաև կապիտալիստական յերկրների աշխարհագրության տվյալները»:

Այդ դիրեկտիվներն ել հենց դրված են այս ծրագրի հիմքում:

Հինգերորդ տարվա ծրագրի կառուցվածքում, վոր նվիրված է ֆիզիկական աշխարհագրության, զգալի չափով ավելացրած է մայր ցամաքների տեսությանը հատկացվող ժամանակը,— 10 ժամով մեկ միացյալ թեմայի փոխարեն ամեն մայր ցամաքի հատկացված են մի/շարք թեմաներ, ընդամենը 33 ժամով: Բացի այդ, փոքր ինչ ուժեղացրած է աշխարհագրական քարտեզին վերաբերող թեմայի ժամերի թիվը, մտցնելով այդտեղ տեղագրության անհրաժեշտ ելեմենտները, ի հաշիվ սովորողների համար խիստ դժվար պրոյեկցիաների բաժնի:

Տեղագրական (տոպոգրաֆիկ) քարտեզին գործնականորեն ծանոթանալու համար անհրաժեշտ է 1—2 անգամ դաշտ դուրս գալ:

Ընդհանուր յերկրագիտության տարրերին նվիրված թեմաներում մտցրված են մի շարք փոփոխություններ, ինչպես դժվար մատչելի նյութերը բեռնաթափելու գծով, նույնպես և քարտեզի վրա կողմնորոշումն ուժեղացնելու գծով:

Դասատուն պիտի առանձին ուշադրություն դարձնի այն բաներին, վոր ընդհանուր յերկրագիտության բաժնից, հնարավորության սահմաններում, եյական դրությունները առանց իլյուստրացիայի չմնան. դրա համար անհրաժեշտ կոնկրետ որինակները պիտի ցույց տրվեն քարտեզի վրա, ըստ վորում որինակները պիտի վերցնել գլխավորապես ԽՍՀՄ-ի տերրիտորիայից: Միայն այդ դեպքում անհրաժեշտ չափով կապահովվեն տվյալ բաժնի ամանդման կոնկրետությունն ու աշխարհագրականությունը և միաժամանակ կդյուրանա մյուս բաժնի՝ աշխարհամասերի տեսության մշակումը:

Ավելի եյական փոփոխություններ են մտցրված ուսման վեցերորդ, յոթներորդ և ութներորդ տարիների ծրագրերի կառուցվածքում: Հիմնական կառուցվածքային փոփոխությունը վերաբերում է ԽՍՀՄ-ի և կապիտալիստական յերկրների աշխարհագրությունն անցնելու հաջորդականությանը: Ներկա ծրագրերով կապիտալիստական յերկրների աշխարհագրությունն անցվում է վոչ թե ԽՍՀՄ-ի աշխարհագրությունից հետո, այլ առաջ: Սա այն առավելությունն ունի, վոր հնարավորություն է տալիս ԽՍՀՄ-ի աշխարհագրությունն անցնել ուսանողների փոքր ի չատե ավելի բարձր մակարդակ և ընդհանուր զարդացում ունենալու պայմաններում, յերբ ուսանողները ձեռք բերած են լինում աշխարհագրական բնութագրումների մեթոդոլոգիական ունակություններ: Բացի այս, այդ կարգն ապահովում է սոցիալիստական շինարարության նվաճումների ցուցադրումը կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի ֆոնի վրա:

Կապիտալիստական յերկրների աշխարհագրությանն ուսման վեցերորդ տարվա առաջին կիսամյակում հատկացված է 40 ժամ, վորը յենթադրում է կապիտալիստական յերկրների աշխարհագրության լրացուցիչ և ավելի ծավալուն դասընթաց ուսման 9-րդ տարում: Վեցերորդ տարվա առաջին կիսամյակում հարկ յեղավ սահմանափակվել մի քանի կարևոր յերկրներով, այն է՝ Անգլիա, Գերմանիա, Ֆրանսիա Միացյալ Նահանգներ, Խորհրդային Միության հարևաններ Ճապոնիա ու Չինաստան: 40 ժամի համար տալ սրանից ավելի նյութ՝ կնշանակեր դիմել ծանրաբեռնման և իջեցնել մշակման վորակը:

Վերը շարադրած դրույթների համաձայն, թեմաների կառուցվածքն ըստ յերկրների տրվում է այս կերպ.—

1. Ընդհանուր տեղեկություններ՝ դիրքը, սահմանները,

կազմությունը, տարածությունը, նշանավոր քաղաքները։ Սրանով միանգամից տրվում է կողմնորոշումը քարտեզի վրա։

2. Բնական պայմանները՝ աշխարհագրական անունների անհրաժեշտ մինիմումի թվարկմամբ։

Այս բաժինը մշակումից հետո սովորողները պիտի կարողանան ցույց տալ յուրաքանչյուր անցած յերկիր վոչ միայն քաղաքական, այլ և ֆիզիկական քարտեզի վրա (առանց քաղաքական սահմանների)։

3. Պատմա-աշխարհագրական ակնարկ, ուր, համաձայն պատմականության տարրերի մասին տրված ցուցմունքների, շատ համառոտ նշվում են յերկրի սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն ետապները, հատուկ ուշադրություն դարձնելով այն մոմենտների վրա, վորոնք ունեն տարածական արտահայտություն (բնակություն հաստատելը, տերրիտորիալ փոփոխությունները և այլն)։

4. Տնտեսական բնութագիր, վորը տալիս է տնտեսության տիպն ու կազմությունը, նրա գլխավոր ճյուղերը և ներքին հիմնական տարբերությունները, հաշվի առնելով ժամանակի սղությունը և սովորողների տարիքային պայմանները, վերջինը տրվում է առանց մանրամասնեցման։

5. Ներքին և արտաքին դրությունը, ուր տրվում են այն հիմնական մոմենտները, վորոնք անհրաժեշտ են նյութին այժմեականության հետ կապելու տեսակետից։

Հաշվի առնելով սովորողների տարիքը և նրանց վոչ բավարար պատրաստականությունը հասարակագիտությունից և պատմությունից, քաղաքական բնութագրումը կարող է տրվել խիստ համառոտ։ Նույն նկատառումներով խորհուրդ է տրվում յերրորդ և հինգերորդ բաժիններն (պատմ. աշխարհ. ակնարկ և ներքին ու արտ. դրութ.) անցնել դասարանական զրույցի և դասատվի պատմածի միջոցով։ Մնացած առաջին, յերկրորդ և չորրորդ բաժինները պիտի անցնել ուսուցչի ղեկավարությամբ, աշակերտների ինքնուրույն աշխատանքի կարգով՝ ինչպես դասարանում, այնպես էլ տանը։

Ինչ վերաբերում է ԽՍՀՄ-ին, այստեղ ամենից առաջ անհրաժեշտ է պարզաբանել դասընթացի ընդհանուր կառուցվածքը։ Մեթոդական փորձը ցույց է տալիս, վոր առանց բավարար չափով քարտեզն խմանալու՝ սովորողների համար չափազանց դժվար է լինում անցնել աշխարհագրության դասընթացն ըստ ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի, դա 6-րդ խմբի աշակերտների ուժերից վեր է։

Ուստի հարկ յեղավ նախքան շրջանների տեսությունը ուսման 6-րդ տարում վորպես ներածություն տալ ԽՍՀՄ-ի ընդհանուր տեսության միայն յերեք թեմա՝ 1) տերրիտորիան և սահմանները, 2) բնական պայմանները և 3) բնակչությունը, իսկ ամբողջությամբ առած ԽՍՀՄ-ի տնտեսության տեսությունն, ըստ տնտեսական ճյուղերի, վորպես դասընթացի առավել դժվարին մաս, հետաձգել ուսման 8-րդ տարվան։

ԽՍՀՄ-ի աշխարհագրության դասընթացի ներածական մասում առաջին գլխավոր թեման, վորին տրվում է այդ բաժնին հատկացված ժամանակի կեսից ավելին, բնական պայմաններին վերաբերող թեման է։ Այդ թեմայի մշակումը, վոր կատարվում է ծրագրում նշված քարտեզների վրա, պիտի վերջնականապես ամրապնդի և սիստեմի վերածի գիտելիքների այն արդեն զգալի պաշարը ԽՍՀՄ-ի բնության մասին, վորն աշակերտները ձեռք են բերել ուսման 4-րդ և 5-րդ տարիներում։ Դասընթացի այս մասում այդ թեմայի հատուկ խնդիրն է ԽՍՀՄ-ի բնական պայմանների տնտեսական արժեքավորումը, հաշվի առնելով զարգացման տեխնիկական և սոցիալ-տնտեսական մակարդակը։ Այստեղ դասավանդման պրոցեսում լիակատար պարզությամբ պիտի դրսևորել մեր յերկրի խոշորագույն ռեսուրսները, վորոնք ծառայում են վորպես բնական բազա նրա ինդուստրացման համար։ Ինչ վերաբերում է բնական պայմանների հետագա մանրամասնեցման, ըստ ԽՍՀՄ-ի առանձին մասերի, այն տրվում է մարզերի, յերկրների, հանրապետությունների տեսության մեջ, կուրսի յերկրորդ մասի ամբողջ ընթացքում։ Շրջանների տեսությունների սխեման, վորոնք ծրագրի այս յերկրորդ մասի հիմնական բովանդակությունն են կազմում, հետևյալ կերպ է ընդունված.—

1. Մարզի համառոտ բնութագիրը, վոր ձևակերպում է նրա սոցիալիստական վերակառուցման հիմնական ուղղությունը («ինչից դեպի ինչն» է գնում մարզը կուսակցության և կառավարության դիրեկտիվների համաձայն) և դասատվին նպատակային դրույթ է տալիս՝ մշակելու համար տվյալ մարզի ամբողջ նյութը։

2. Բնական պայմանները, ուր նշվում են մարզի տնտեսական զարգացման համար կարևոր պայմաններ, նրա բնության առանձնահատկությունները, տրվում է աշխարհագրական նոմենկլատու

բայի թվարկումը: Այս բաժնի մշակմամբ սովորողները պիտի կարողանան ցույց տալ մարդը ֆիզիկական քարտեզի վրա:

3. Պատմա-աշխարհագրական տեսություն, վոր պարունակում է պատմական զարգացման առանձնահատկությունների և գլխավոր փաստերի ցուցումներ, վորոնք կարևոր են նրա ներկա բնութագիրը հասկանալու համար: Այս բաժինն անցնելիս դասատուն պիտի աշխատի նյութը կապել պատմության դասընթացին:

4. Ազգաբնակություն, վորին վերաբերում են ազգաբնակության տեղաբաշխման, մարդի սահմաններում ապրող ժողովրդների, նրանց կենցաղի ու կուլտուրայի և տերրիտորիալ կառուցվածքի հարցերը (ազգային ավտոնոմիաներ): Այստեղ ել տրվում է կարևորագույն քաղաքների թվարկումը:

5. Տնտեսություն, ուր նշվում են տնտեսության կարևոր ճյուղերը և կառուցվածքի առանձնահատկություններն՝ այդ ճյուղերի դինամիկ և փոխադարձ կապի պայմաններում: Ներքին տարբերությունները տրվում են չատ կարճ և այն ել այնտեղ, ուր նրանք առանձնապես մեծ են՝ խուսափելով նյութի ծանրաբեռնումից: Առանձին կարճ բնութագրումներ ծրագրում նախատեսված են միայն ազգային ինքնավարությունների համար:

Մարզային տեսության հինգերորդ բաժնում դասատուն պիտի առանձին ուշադրություն դարձնի այն բանին, վոր ավանդումը չծանրաբեռնի բոլոր ճյուղերն ու կոնյունկտուր կարգի բոլոր մանրամասնությունները թվելով, այլ կենտրոնանա համամիութենական արժեք ունեցող ճյուղերի և վերակառուցման հիմնական վճռական գծերի վրա:

6. Առաջին հնգամյակի նվաճումները, ուր հանրագումարի յեն բերվում սոցիալիստական վերակառուցման պրոցեսի արդյունքները, վորն արդեն վերլուծած է նախընթաց բաժնում:

7. Զարգացման հիմնական գծերը յերկրորդ հնգամյակում: Այս բաժինը տրված է ընդհանուր ձևով, առանց դրսևորելու նրա բովանդակությունը, ինչպես արված է մյուս բոլոր բաժիններում: Այդ բովանդակությունը միանգամայն կորոշվի յերկրորդ հնգամյակի պլանի վերջնական հաստատումից հետո, իսկ մինչ այդ դասատուն պիտի ղեկավարվի 17-րդ կուսկոնֆերենցիայի նյութերով. ընդ սմին պիտի աչքի առաջ ունենալ, վոր մարդը ճանաչելու տեսակետից սխեմայի այս բաժինն ունի բացառիկ կարևոր նշանակություն: Այս բաժինն առանձնապես կարևոր է «յերիտասարդ» մարդերի համար:

Ցերկու-յերեք և ավելի մարդերի համախմբումը մեկ թեմայում՝ ուր սակայն պահպանված է յուրաքանչյուր մարդի ուրույն տեղը թեմայի մեջ՝ արված է բացառապես մեթոդական նկատառումներով, վորպեսզի՝ ա) միջանկյալ կապ մտցնելով դյուրպնա սովորողների համար բաժանման-ստրուկտուրան հիշելը և դրանով ապահովվի առաջին բաժանման անդամների թիվը, բ) վոր հնարավորություն տրվի մի շարք մարդերի բնության և եկոնոմիկայի ընդհանուր կողմերը «փակագծից դուրս հանել» և այդպիսով խուսափել կրկնությունից ու տնտեսել ժամանակը:

Շրջանացմանը վերաբերող առաջին թեման մշակելիս դասատուն պիտի՝ ա) սովորողներին տա վորոշակի պատկերացում շրջանացման մասին, վորպես ժողովրդական տնտեսության պլանավորման մեթոդի, և այն խոր սկզբունքային տարբերության մասին, վորը կա պլանային սոցիալիստական շինարարության պրոցեսի և տարերային զարգացման պրոցեսի միջև, բ) քարտեզով հիմնավոր կերպով կրկնի ԽՍՀՄ-ի վարչատնտեսական բաժանման ցանցը (վորի համար ել այս թեմային տրվում են փոքր ինչ ավելի ժամեր):

Վերջին թեման, վոր վերաբերում է միջմարզային կապերին, մշակվում է ապրանքափոխադրման քարտեզով և մի շարք քարտասխեմաներով: Սա պիտի սովորողներին պատկերացում տա ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության մասին, վորպես մինչ այդ ուսումնասիրված մարդերի կոմպլեքսի, և միաժամանակ այստեղ ընդհանուր ձևով պիտի կրկնվի յուրաքանչյուր մարդի մասնագիտացումը (արտամարզային նշանակություն ունեցող գլխավոր ճյուղերը):

Անցնելով ԽՍՀՄ-ի աշխարհագրության կուրսի յերրորդ՝ ճյուղային մասին, անհրաժեշտ է նշել, վոր հենց այստեղ է աշխարհագրությունից դեպի հասարակագիտություն կամ տնտեսական քաղաքականություն չեղվելու ամենախոշոր վտանգը: Այդ վտանգի առանցն առնելու ռեալ յերաշխիքը դարձյալ կողմնորոշումն է քարտեզի վրա, վորը նշում է Համկոմկուսի (բ) Կենտկոմը:

Սոցիալիստական վերակառուցման ընդհանուր գծերն արդեն սովորողներին տրված են հասարակագիտության կուրսերում՝ յոթնամյակի սահմաններում, ուստի հարկ չկա, վոր աշխարհագրության դասատուն «տարածվի» այդ ուղղությամբ. նրա հատուկ խնդիրն է սովորողներին արդեն հայտնի վերակառուցման

այդ պրոցեսները փոխադրել քարտեզի վրա։ Հասարակադիտական տարրերը պահված են ծրագրում լոկ այնչափ, որ չափով անհրաժեշտ է սովորողներին՝ վերհիշելու համար, որովհետև չի կարելի զբաղվել տեղաբաշխմամբ հանուն տեղաբաշխման, այլ պիտի իմանալ այն, թե ինչ է տեղաբաշխվում և այդ տեղաբաշխման շարժիչ ուժերը։ Սրա լուծելու միջոցն է՝ աշխարհագրությունը կապել յոթնամյակում արդեն անցած հասարակադիտության ծրագրի հետ։

Աշխարհագրության դասատուն պիտի լավ ծանոթ լինի հասարակադիտության ծրագրին, սովորողների ունեցած հասարակադիտական գիտելիքների փաստական մակարդակին։ Այդ նրան կողնի խուսափել անտեղի կրկնություններից և գործնականապես ջրբաժան դիծ սահմանել հասարակադիտության և աշխարհագրության միջև։ Դրան կարող են նպաստել նաև աշխարհագրության և հասարակադիտության դասատուների պարբերական խորհրդակցությունները։

Վերը նշված նկատառումները հաշվի են առնված նաև ծրագրի շարադրման մեջ. այստեղ հասարակադիտական հարցերը տրված են սեղմ և հատուկ նշումներով (կարճ, ընդհանուր ակնարկ, «կապը հասարակադիտության հետ»։

Առաջին և հինգերորդ թեմաներում, որոնք ամենից շատ են պարունակում հասարակադիտական տարրեր, դասատուն դլխավոր ուշադրությունը պիտի դարձնի այն հարցերի վրա, որոնք աշխարհագրության դասընթացի հատուկ խնդիրներն են հանդիսանում, այսինքն արտադրողական ուժերի սոցիալիստական տեղաբաշխման պրինցիպներին վերաբերող կետերի (1-ին թեմայի յերկրորդ կետը) և ԽՍՀՄ-ի ու կապիտալիստական յերկրների համեմատության կետերի վրա (հինգերորդ թեմա, յերկրորդ և յերրորդ կետեր)։

Ի վերջո մի քանի խոսք եվ ծրագրի շարադրման ձևի մասին։ Այս առթիվ պետք է մատնանշել, որ ներկա ծրագրերը, նախկինների համեմատությամբ, տրված են անհամեմատ ավելի ընդարձակ, որի հետևանքով մեծ տեղ են գրավում։ Ուսումնասիրվող նյութի ավելի ճշգրիտ ընդգրկումը հանդիսանում է մի հիմնական պահանջ, որը կարելի յե և պետք է առաջադրվի յուրաքանչյուր ծրագրի։ Այդ անհրաժեշտ է դասավանդման կոնկրետ ղեկավարման համար։ Այնտեղ, որտեղ նախկին ծրագրում, սակայն բնական պայմանների բաժնում, ասված եր շատ կարճ՝

«ռելյեֆը, գետերը, կլիման, և այլն» ներկա ծրագրում թված և յուրացման յենթակա աշխարհագրական վողջ նոմենկլատուրան—լեռների, գետերի և հենց ռելյեֆի այն առանձնահատկությունները, որոնք տվալ յերկրում պիտի նշվեն։ Ավելի շատ բառեր են ստացվում, սակայն բովանդակությունը վոչ միայն չի մեծանում, այլ վոքրանում է, որովհետև այն բոլորից, ինչ կարելի յե ասել տվյալ յերկրի ռելյեֆի մասին, դուցե մնա յերկու-յերեք լեռնաշղթա, նրանց ուղղությունը, կլիմայական նշանակությունը և այլն։

Ծրագրի մեջ հարկ է լինում գործադրել լրացուցիչ բացատրություններ հենց նրա համար, որ սահմանափակվի, սեղմվի նյութի ընդգրկումը։ Այդպիսով ծրագրի ծավալն ըստ ինքյան յերբեք չի կարող ծանրաբեռնության ապացույց ծառայել։ Բացի այդ, հարկավոր է հաշվի առնել, որ ծրագրի մի շարք բաժինները փաստորեն վոչ մի նոր նյութ չեն պարունակում։ Այդպիսիներից են որինակ՝ շրջանային տեսությունների մեջ յեղած (ԽՍՀՄ-ի աշխարհագրության յերկրորդ մասում) ընդհանուր բնութագրման և առաջին հնգամյակի արդյունքների բաժինները։ Անհրաժեշտ է նույնպես մատնանշել, որ նոմենկլատուրան ամենուրեք տրվում է լրիվ՝ կրկնելով արդեն առաջուց անցածը, այնպես որ նոր անուններ շատ ավելի քիչ են ստացվում, քան այդ կարող է թվալ։

Գոյություն ունեցող ուսման ժամերի ցանցի շրջանակում աշխարհագրության ծրագիրը բեռնաթափելու հարցը լուծելիս կարևորագույն մոմենտ է հանդիսանում քարտեզների և առհասարակ դիտողական պիտույքների խնդիրը։

Դիտողական պիտույքներ ունենալու դեպքում նյութը կարելի յե հեշտությամբ աշխուժացնել և հաջող յուրացնել տալ քառորդ ժամում, իսկ դրանք չունենալու դեպքում կպահպանվի մեկ, յերկու և ավելի ժամեր, ուժեղ կերպով ծանրաբեռնելով սովորողներին և միաժամանակ չապահովելով քիչ թե շատ պարզ և հաստատ յուրացում։

***

Հաշվի առնելով մեր դպրոցներում Անդրկովկասի և Հայաստանի աշխարհագրության ավելի մանրամասն ու հիմնովին մշակելու անհրաժեշտությունը, յոթներորդ խմբի յերկրորդ կիսամյակում տրված է Անդրկովկասի աշխարհագրության մի ամբողջ դասընթաց 40 ժամով, որը լրացուցիչ կերպով լույս կտեսնի։

ԾՐԱԳԻՐ

ՈՒՍՄԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ (80 ԺԱՄ)

I. ՑԵՐԿՐԱԳՈՒՆԴԸ ՄՈԼՈՐԱԿ Է (6 ժամ)

Ցերկրի ձևը: Ցերկրի ուռուցիկ լինելու ապացույցները: Հորիզոնի լայնանալը՝ յերբ դիտողը վեր է բարձրանում: Ցերկրի գնդաձևության ապացույցները: Ցերկրի ստվերը լուսնի խավարման ժամանակ, շուրջերկրյա ճանապարհորդություններ: Ցերկրագնդի մեծությունը: Ցերկրի սեղմվածությունը բևեռների կողմից: Ցերկրագնդի պտույտն իր առանցքի շուրջը: Արեգակի և աստղերի աւերևույթ պտույտն օրվա ընթացքում: Հյուսիսային աստղի համեմատական անշարժությունը: Ցերեկվա ու գիշերվա հաջորդելն իրար:

Ցերկրի տարեկան շարժումը: Ցերկրի ուղեղիծը: Ցերկրի առանցքի թեքությունը և տարվա յեղանակների հաջորդականությունը: Ցերեկվա և գիշերվա տևողության փոփոխությունը կապված տարվա յեղանակների և հասարակածից յեղած հեռավորության հետ: Որահավասար և արևադարձ: Տարեթիվ: Հին և նոր տոմար: Արևադարձներ և բևեռային շրջանագծեր:

Ցերկրի դիրքը տիեզերական տարածության մեջ: Արեգակնային համակարգությունը: Մոլորակների շարժումը: Ցերկիրն իբրև արեգակնային համակարգության մոլորակներից մեկը: Ցերկրի դիրքը և մեծությունը՝ մյուս մոլորակների համեմատությամբ: Աստղածաշնչի պատկերացումը աշխարհի և յերկրի մասին: Կրոնի պայքարը յերկրի դիրքի և շարժման մասին յեղած գիտական պատկերացման դեմ:

II. ՊԼԱՆ ՑԵՎ ՔԱՐՏԵԶ (8 ժամ)

Կողմնացույց և կողմնորոշում: Մասշտաբ՝ թվային և գծային: Մեկ մասշտաբի վերածումը մյուսին: Պլանի և քարտեզի վրա

տարածություններ չափելը: ¼ քառակուսի կիլոմետրի չափ տարածության և նրա վրա յեղած փոքրաքանակ առարկաների ընդորինակումն աչքաչափով (մշակվում են աչքաչափով ընդորինակման տարրերը՝ տարադիտումը (визирование), ճանապարհին մոտիկ և մինչև 200 մետր հեռավորության վրա գտնվող տեղական առարկաների նշանակումը):

Քարտեզի աստիճանացանցը: Գլխավոր միջորեականը: Լայնություն և յերկարություն: Լայնության և յերկարության վորոշումը քարտեզի վրա: Գոտային ժամանակ: Հասկացողություն յուր բնակավայրի լայնությունն*)՝ ու յերկարությունը (ըստ ժամանակի տարբերության) վորոշելու մասին: Տեղագրական քարտեզ, նրա ընթերցումը:

III. ԼԻԹՈՍՖԵՐԱ (13 ժամ)

Ցերկրագնդի կառուցվածքի ընդհանուր պատկերը: Լիթոսֆերա (յերկրի քարային կեղևը), հիդրոսֆերա (յերկրի ջրային շերտը), ատմոսֆերա (յերկրի ոդային շերտը):

Ցերկրի կեղևի կառուցվածքը: Ի՞նչպես մենք իմացանք լիթոսֆերայի կառուցվածքի մասին: Հանքահորեր և հորատյալ անցքեր, նրանց խորությունը: Մերկացած տեղեր և նրանց հետազոտումը գետերի ափերի և լեռների լանջերի վրա: Փլված տարերի ուսումնասիրությունը:

Նստվածքային տեսակների շերտերը: Հարթավայրերի և լեռների շերտերի դասավորությունը: Զանգված—բյուրեղային տեսակներ, նրանց դասավորությունը (յերակներ, ծածկոցներ, հանքակույտեր (штоки)):

ՑԵՐԿՐԻ ՆԵՐՔԻՆ ՈՒԺԵՐԸ

Ցերկրի կեղևի ջերմությունը, ջերմության բարձրանալը դեպի յերկրի ներսը խորանալու դեպքում: Ցեկրի կարծր կեղևը և մագման: Ցերկրի միջուկը: Ի՞նչպես են արտահայտվում յերկրի ներքին ուժերը: Հրաբխականություն, սեյսմիկ յերևույթներ, լեռնակազ-

*) Հավասար է բևեռային աստղի բարձրության, վորը չափվում է ուղղակի անկյունաչափի միջոցով.

մություն: Ցերկրի կեղևի տարբեր մասերի դանդաղ բարձրանալն ու իջնելը:

Հրաբխականություն: Հրաբուխների ժայթքումը: Հրաբխային նյութեր, հրաբուխների կառուցվածքը, հրաբուխների կապը ցերկրի կեղևի ճեղքվածքների հետ: ԽՍՀՄ-ի գործող հրաբուխները (Կամչատկա), հանգած հրաբուխները (Կովկաս), հրաբխային լեռները և հրաբխային ծածկոցները (Միջին Սիբիր, Անդրկովկաս):

Սեյսմիկ յերևույթներ (յերկրաշարժ): Տիպիկ յերկրաշարժների որինակներ (յերկրաշարժներ Վերնիյում, Կամչատկայում, Ցապոնիայում (1923 թ.), Լենինականի և Զանգեզուրի յերկրաշարժները):

Ցերկրաշարժների ուսումնասիրությունը: ԽՍՀՄ-ի սեյսմիկ շրջանները (Անդրկովկաս, Տյան-Շան և այլն):

Ցերկրի գլխավոր սեյսմիկ շրջանները: Սեյսմիկ յերևույթների կապը լեռնակազմության շրջանների հետ:

Լեռնակազմություն. իջվածքներ և ծալքեր. ծալքավոր լեռների տեսակներ՝ Կովկասյան լեռներ և Ալպեր և այլն:

Իջվածքային լեռների որինակներ՝ Անդրբայկալ, Ժիդուլյան լեռներ և այլն: Մյուս ցամաքների գլխավոր ծալքավոր լեռները:

Ցամաքի մշտական տատանումները: Ցամաքի դանդաղ բարձրանալն ու իջնելը. ծովի տրանսգրեսիա (ծովի հարձակումը ցամաքի վրա) և ռեգրեսիա (ծովի նահանջը):

Կոնտինենտալ տարածություններ (ընդարձակ, առավելապես հարթ շրջաններ, վորոնք հին ժամանակներից չեն յենթարկվել ուժեղ ծալքավորման, բայց յենթարկվել են բարձրացման կամ եջքի (Արևելյան Ցեվրոպայի հարթությունը, Արևմտյան Սիբիրի դաշտավայրը և այլն):

ՑԵՐԿՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՈՒԺԵՐԸ

Արտաքին ուժերի եներգիայի աղբյուրները: Արևի ջերմություն, վորն առաջ է բերում տաքացում, ցրտություն, սառույց, քամիներ, անձրևներ, հեղեղներ, գետեր և որգանիզմների զարգացում:

Լուսնի ձգողականությունը և յերկրի շարժումը յուր առանցքի շուրջը, վորոնք առաջացնում են մակընթացություն և տեղատվություն և ծովային ու ողային հոսանքների շեղումներ:

Հողմահարում: Մեխանիկական և քիմիական հողմահարում, ապառների դանդաղ քայքայումը լեռներում: Փխրուն տեսակների առաջացումը: Որգանիզմների դերը (բակտերիաներ և այլն):

Քամու աշխատանքը.— Բուսական ծածկոցից զուրկ անապատային շրջանները վորպես քամու ազդեցության գլխավոր վայր (Միջին Ասիա): Քամու աշխատանքը լեռներում և տափաստանային շրջաններում: Բարխաններ: Սահող ավազներ: Ծովերի, լճերի և գետերի ափերի ավազաթմբեր (դյուներ): Մարդկային հասարակության պայքարը ավազաթմբերի և սահող ավազի դեմ:

Հոսող ջրերի աշխատանքը: Հեղեղներ. վողողում: Ձորերի, կիրճերի և հովիտների առաջացումը: Լեռների աստիճանական վողողումը հոսող ջրերով և լեռնային վայրերի «համարյա թե հարթավայր» դառնալը:

Սառցադաշտեր: Լեռների գագաթների ձյունը: Ձյան հյուսեր: Սառցադաշտերի գոյացման պայմանները: Հովտային սառցադաշտեր և նրանց աշխատանքը, զանազան նյութերի տեղափոխությունը: Քարերի տեսակների վողորկվելն ու հարթանալը: Սառցադաշտային նստվածքները: Կովկասի, Տյան-Շանի և Պամիրի սառցադաշտերը: Անտարկտիդայի, Գրենլանդիայի և այլ խոշոր կղզիների ցամաքային սառույցը: Այսբերգեր: Հին սառցապատումը: Սառցադաշտային ժամանակաշրջանների մնացորդները ԽՍՀՄ-ում:

ՑԵՐԿՐԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ՁԵՎԵՐԸ

Հարթավայրեր: Գաղափար հարթավայրի մասին: Հարթավայրերի տարբեր տիպերն ըստ արտաքին տեսքի՝ տափակ, թեք, ալիքավոր և այլն: Հարթավայրերի բարձրությունը ծովի մակերևույթից: Ցածրադիր հարթավայրեր (դաշտավայրեր) և բարձրավանդակներ: Դաշտավայրերի և բարձրավանդակների կազմությունը: Դաշտավայրերի առաջանալը, լցված ծովածոցերի և անհետացած ծովերի տեղում առաջացած դաշտավայրեր (Մերձկասպյան և Արալո-Կասպյան դաշտավայրեր): Լեռնահովիտներում գետերի և հեղեղների կիտվածքներից գոյացած հարթություններ:

Դաշտավայրեր, վոր գոյացել են լճա-գետային և սառցադաշ-

տային նստվածքներից (գերմանականը՝ հյուսիսային մասում, Արևելա-Եվրոպականը և մյուսները):

Հարթությունների փոփոխությունը հոսող ջրերի ազդեցության շնորհիվ: Զորերը. նրանց մեծանալը: Պայքար ձորերի դեմ: Բարձրադիր հարթավայրի վերածվելը հովիտներով կտրտված բլրապատ յերկրի: Հետագայում բլրապատ յերկրի փոխվելը հարթավայրի:

Լեռներ և բարձրություններ: Լեռ, լեռնաշղթա, լեռնաշխարհ: Բլուրներ: Լեռնապար: Լեռնահովիտներ. ձորեր. թամբաձև դող և լեռնանցքներ: Լեռների բարձրությունը (հարաբերական և բացարձակ): Լեռները պլանների և քարտեզների վրա գծագրելու տարբեր ձևերը: Հորիզոնականների մեթոդ, ռելյեֆի ընթերցում հորիզոնականի միջոցով: Լեռների փոփոխությունն արտաքին ուժերի ազդեցության տակ: Հին և նոր քայքայված լեռներ: Լեռներ և ոգտակար հանածոներ (հանքերի ծննդավայրերի կապը հին լեռնային շրջանների հետ): Աշխարհամասերի ռելյեֆը քարտեզի վրա:

IV. ՀԻԴՐՈՍՖԵՐԱ (6 ժամ)

Ստորերկրյա ջրեր: Ստորերկրյա ջրերի նշանակությունը կյանքում և տնտեսական գործունեության մեջ: Ջրթափանց և վոչ ջրթափանց շերտեր: Ջրատար շերտ: Սովորական և արտեզյան ջրհորներ: Աղբյուրներ: Սողվածքներ: Հանքային աղբյուրներ: Այրեր: Աղբյուրների և ջրհորների նշանակումը պլանների և քարտեզների վրա:

Հոսող ջրեր: Առվակներ և գետեր: Գետերի մասերը: Գետի ավազանը: Գետի սնվելը ձմեռը և ամառը: Ջրի ծախսումը: Գետի մակերևույթի տատանում: Գլխավոր գետ և վտակներ: Գետային սիստեմ: Գետերը վորպես հաղորդակցության ճանապարհներ, ենթրգիայի և վոռոգման աղբյուրներ: Դնեպրոդես, Մեծ Վոլգա, Վոլգա-Դոն, Բալթիկ-Սպիտակ ծովյան ջրանցքը, Անդարաստրոյ. Սևան-Զանգվի կասկադ և այլն: Գետն ի՞նչպես է փոխում յերկրի մակերևույթի ձևերը: Մեանդրներ և գետալճեր:

Հովտի լայնանալը: Ծանծաղուտներ: Կղզիներ: Տերրասներ: Դելտա: Դաշտավայրերի գոյանալը գետաբերանի մոտ: Գետերի նշանակումը պլանների և քարտեզների վրա: Աշխարհամասերի խոշոր գետերը:

Լճեր: Լճերի գոյանալը: Լճերի զանազան տեսակները: Հոսող և չհոսող լճերի ազդությունը: Լճերի փոփոխականությունը: Ճահիճներ: Տորֆավայրեր: Լճերի և նրանց խորության նշանակումը պլանների և քարտեզների վրա:

Ովկիանոսներ և ծովեր: Ցամաքի և ծովերի տեղաբաշխումը: Ովկիանոսներ և ծովեր: Ովկիանոսների ուսումնասիրության զանազան յեղանակներ: Ծովի հատակի ռելյեֆը: Ցամաքները շրջապատող ծանծաղ ծովի հատակը: Ամենամեծ խորությունները: Ծովերի և ովկիանոսների հատակի նստվածքները: Աղի ազդությունը: Մակընթացություններ և տեղատվություններ:

Ովկիանոսները և ծովերն իբրև հաղորդակցության ճանապարհներ՝ նավագնացության տեխնիկայի զանազան մակարդակների վրա: Ծովային արդյունահանություն: Հյուսիսային սառուցյալ ծով և նրա առանձնահատկությունները: Ճանապարհորդություններ դեպի հյուսիսային բևեռ: Խորհրդային սեկտորը: ԽՍՀՄ-ի մասնակցությունը Հյուսիսային Բևեռային ծովի ուսումնասիրության գործում:

Ներքին և արտաքին ծովեր: Ափերի գծերի ձևերը՝ ծոցեր, նեղուցներ, թերակղզիներ, կղզիներ: Նեղուցների և կղզիների քաղաքական և տնտեսական նշանակությունը ծովային ճանապարհների վրա (բացատրել որինակներով):

V. ԱՏՄՈՍՖԵՐԱ (8 ժամ)

832
38

1. Ատմոսֆերայի բաղադրությունը և կազմությունը: Ցերկրի մակերևույթի և ատմոսֆերայի տաքանալն արեգակից: Մակերևույթի տաքացման զանազան աստիճանները՝ կախված ավյալ վայրի լայնությունից: Ցերկրի ջերմության գոտիներ՝ տաք, յերկու բարեխառն և յերկու ցուրտ: Ցամաքի և ջրի մակերևույթի տաքանալը: Ցամաքի և ծովի տեղաբաշխման ազդեցությունը ջերմային գոտիների զանազանության վրա: Ծովի մակերևույթից բարձր դանվելու ազդեցությունը:

Իզոթերմներ: Հուլիսյան և հունվարյան իզոթերմների քարտեզը:

2. Ատմոսֆերայի ճնշումը: Ճնշման չափելը: Իզոբարներ: Քամիներ և նրանց ծագումը: Բրիզներ, մուսսոններ, պասատներ, ցիկլոններ և անտիցիկլոններ: Քամիներ և ծովային հոսանքներ: Ովկիանոսների գլխավոր հոսանքները: Քամու ուժի չափելը: Քամու շարժիչներ:

ՀԱՅԿ. ՍՍՀ ԳԻՏ. ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՍՍՀ—ՍՍՌԱ
ՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
Ի. ՄԱՍՏՈՑԻ ԱՆՎԱՆ

3. Երկրագնդի ատմոսֆերայում: Մառախուղ, ամպեր, անձրև: Տեղումների բաշխումը երկրի մակերևույթի վրա (արևադարձային գոտի, անապատային շրջան և այլն:

4. Ցեղանակի նախագուշակման հարցեր: Ցիկլոնի և անտիցիկլոնի յեղանակի բաշխումը: Ցեղանակի նախագուշակության նշանակությունը գյուղատնտեսության և տրանսպորտի (ծովային, գետային, ոդային) համար:

5. Հասկացողություն յեղանակի և կլիմայի մասին: Կլիմայի կախումը լայնությունից, ռելյեֆից և ծովի մոտիկությունից: Ծովային հոսանքների ազդեցությունը կլիմայի վրա: Ծովային և ցամաքային կլիմա: Լեռնային կլիմա և ձյան սահման: Ցամաքի մակերևույթի բաժանումը կլիմայական շրջանների՝ տունդրայի, տայգայի, խառն անտառների, տափաստանների, անապատների, սավաննների, արևադարձային և մերձարևադարձային կլիմաներ: Այդ շրջանների կլիմայի բնութագիրը: Կլիմայական քարտեզ: Կլիմայի փոփոխությունը նախընթաց յերկրաբանական ժամանակաշրջաններում (սառցադաշտային ժամանակաշրջան): Ժամանակից սառցային շրջաններ:

VI. ՀՈՂԱ-ԲՈՒՍԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐ (6 ժամ)

Կլիմայի, հողի, բուսական և կենդանական աշխարհի տեղաբաշխման որինաչափությունը: Հողա-բուսական ելեմենտների բաշխումը յերկրագնդի վրա՝ գոտիներով: Բևեռային շրջանների, տունդրայի, տայգայի, խառը և սաղարթավոր անտառների հողերի, բուսական և կենդանական աշխարհների բնութագիրը. անտառատափաստանների, տափաստանների, կիսաանապատների, անապատների, մերձ-արևադարձային շրջանի, արևադարձային տափաստանների, սավաննների և անտառների գոտիներ:

Այդ գոտիների բնության փոփոխությունը մարդու տնտեսական գործունեության ներքո: Ջանազան գոտիների բնական պայմանների ոգտագործումը տեխնիկական և սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր աստիճաններում:

VII. ՅԵՎՐՈՊԱ (9 ժամ)

Յեվրասիա: Յեվրոպան վորպես Ասիայի թերակղզի: Յեվրոպան ինքնուրույն աշխարհամաս համարելու հիմքերը: Յեվրոպայի մեծությունը: Աշխարհագրական դիրքը մյուս աշխարհամասերի նկատմամբ: Յեվրոպան վորպես ամենից կտրված աշխարհամաս: Մեծ քանակով ծովախորշեր, վորոնք հարմար են նավահանգիստների կառուցման համար՝ պաշտպանված ծովի ալեկոծումներից և սառչելուց:

Միջերկրական ծովը վորպես հին և միջին դարերի առևտրական հարաբերությունների գլխավոր ծով:

Ամերիկայի հայտաբերումից հետո Ատլանտյան Ովկիանոսը վորպես ծովային հարաբերությունների գլխավոր ուղի: Միջերկրական ծովի դերը Սուեզի ջրանցքը բանալուց հետո:

Ծովերը՝ Հյուսիսային-Բևեռային, Բարենցի, Սպիտակ, Հյուսիսային կամ Գերմանական, Բալթիկ ծով՝ Բոտնիկի, Ֆինական և Ռիգայի ծոցերով: Միջերկրական ծով իր մասերով՝ Ադրիատիկ, Մարմարայան, Սև և Ազովի ծովեր:

Նեղուցները՝ Ջիբրալտար, Դարդանել, Բոսֆոր, Լամանշ:

Կղզիները՝ Նոր Յերկիր, Ֆրանց-Յոսիֆի կղզիներ, Իսլանդիա, Մեծ Բրիտանիա, Իռլանդիա, Սիցիլիա:

Թերակղզիները՝ Կանին, Կոլա, Սկանդինավիա, Յուտլանդիա, Պիրինեյան, Ապենինյան, Ղրիմ:

ՅԵՎՐՈՊԱՅԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Մակերևույթի ձևերի բազմազանությունը. դաշտավայրերի գերակշռությունը: Ամենաբարձր լեռները Յեվրոպայի հարավային մասում՝ Միջերկրական ծովի մոտ: Ծալքավոր լեռների սիստեմներ: Պիրինեյան, Ալպեր, Ապենինյան, Կարպատներ, Բալկաններ, Ղրիմ: Յեվրոպայի լեռների համեմատական մատչելիությունը: Այս լեռներից դեպի հյուսիս ընկած խիստ քայքայված հին լեռները՝ Միջին Գերմանական, Դոնեցի բարձրություն, Սկանդինավյան, Ուրալ:

Մեծ դաշտավայրեր, վորոնք գրավում են Յեվրոպայի արևելյան և հյուսիսային մասերը: Արևելա-յեվրոպական, Գերմանական, Լոմբարդական դաշտավայրեր: Մերձկասպյան դոդավորություն:

Բարձրությունները՝ Միջին-ռուսական, Մերձվոլգյան: Ոդտակար հանածոների վայրեր, վորոնք ընկած են հին յեվրոպական լեռների շրջանում: Յեվրոպայի սեյսմիկ և հրաբխային շրջանները: Ետնա և Վեզուվ:

Եվրոպայի կլիման: Ջերմությունն ու տեղումները ցույց տվող կլիմայական քարտեզների ուսումնասիրություն: Արևելյան Եվրոպայի կլիման ցամաքային է, Արևմտյան Եվրոպայի կլիման՝ ծովային: Գոլֆշտրոմի ազդեցությունը Եվրոպայի կլիմայի վրա: Միջերկրա-ծովային կլիման և նրա առանձնահատկությունները:

Գետեր և լճեր: Արևելյան և Արևմտյան Եվրոպայի գետերի բնորոշ առանձնահատկությունները: Լճերը և նրանց ծագումը: Սառցադաշտային և մնացորդային լճերը:

Գետերը՝ Պեչորա, Հյուսիսային Դվինա, Նեմա, Վոլգով, Սվիր, Արևմտյան Դվինա, Վիսլա, Հռենոս, Սենա, Ռոնա, Պո, Դանուբ, Դնեպր, Դնեստր, Դոն, Վոլգա՝ Կամայի և Ոկայի հետ, Ուրալ:

Լճերը՝ Լադոգա, Ոնեգա, Ժնևի, Կասպից: Գետերի ոռոգագործումը վարելահողերի, վոռոդման և էներգիայի աղբյուրներ: Ջրանցքներ:

Հողա-բուսական գոտիներ: Եվրոպայի հողա-բուսական գոտիների քարտեզի ուսումնասիրությունը,—տունդրա, փշատերև և խառն անտառների մոխրահողային շերտ. սևահողային տափաստաններ, չաղանակազույն և դորշ հողեր Մերձ-Կասպյան դաշտավայրի կիսանապատներում: Միջերկրական ծովափի մերձարևադարձային բուսականությունը:

Բուսական գոտիների լանդշաֆտի փոփոխությունը մարդկային հասարակության գործունեության ներքո: Աղզաբնակության խտության, ազգագրական և պետական բաժանման քարտեզների ուսումնասիրություն:

VIII. ԱՍԻԱ (9 ժամ)

Դիրքը և սահմանները: Ասիայի արևմտյան սահմանի պայմանականությունը: Ասիան վորպես Հին Աշխարհի ամենամեծ ցամաք: Ասիայի մեծությունը՝ համեմատած մյուս աշխարհամասերի հետ: Ասիերի դծի կտրտվածությունը: Մայր ցամաքի հիմնական մասի հսկայական տարածությունը: Ասիերի ուղղությամբ ձգված մեծ քանակությամբ ծովերն ու ծոցերը:

Ծովերը՝ Կարմիր, Հարավային և Արևելյան Չինական, Ճապոնական Ոխոտի, Բերինգյան, Հյուսիսային-Բևեռային:

Ծոցերը՝ Պարսկական, Բենգալյան:

Նեղուցները՝ Բերինգյան, Թաթարի, Մալակայի:

Թերակղզիները՝ Ցամալ, Թայմիր, Չուկոտյան, Կամչատկա, Կորեա, Հնդկաչին, Մալակա, Հնդկաստան, Արաբիա, Փոքր Ասիա:

Կղզիների մեծ մասի տեղաբաշխվածությունը մայր ցամաքի հարավային և արևելյան կողմում: Նրանց շղթայաձև հաջորդականությունը՝ ուռուցիկ մասով դարձած դեպի ովկիանոս, վորով ցամաքի յեղրին յեղած ծովերի համար կազմվում է սահման:

Կղզիներ՝ ցամաքային և հրաբխային: Հասկացողություն նրանց առաջացման մասին:

Կղզիները՝ Հյուսիսային Ցերկիր, Նոր Սիբիրական, Վրանգելի կղզի, Կուրիլյան, Սախալին, Ճապոնական, Ֆորմոզա, Ֆիլիպյան, Մալայան Արշիպելագ կամ Զոնդյան—Սումատրա, Ճավա, Բորնեո, Ցելեբես, Ցեյլոն:

Ասիայի մակերևույթը: Բարձրությունների և լեռների դերակշռությունը հարթավայրերի նկատմամբ: Աշխարհի ամենամեծ ծալքավոր սարերի շղթան.—Պամիրի լեռնային յերկիր (Պիկ Լենինի և Պիկ Ստալինի գագաթներ), Տյան-Շան, Հինդուկուշ, Հիմալայան լեռներ՝ Եվերեստ գագաթով: Կովկաս՝ Ելբրուս և Կազբեկ գագաթներով: Ալթայան, Սայանյան, Մերձբայկալյան լեռներ և արևելյան ծայրամասի լեռներ՝ Վերխոյան, Ստանովյան լեռնաշղթա, Խինգան, Սիխոտա-Ալին:

Բարձրավանդակները՝ Միջին Սիբիրի, Միջին Ասիայի (Գոբի, Տիբետ), Իրանի, Հայկական, Փոքր Ասիայի:

Ընդարձակ դաշտավայրերը՝ Սիբիրական դաշտավայր, Արալո-Կասպյան կամ Թուրանի հարթավայր արևմուտքում:

Դաշտավայրեր մեծ գետերի հոսանքներով՝ Չինական, Բենգալյան, Միջագետքի:

ԱՍԻԱՅԻ ՀՐԱԲԽԱՑԻՆ ՑԵՎ ՍԵՅՍՄԻԿ ՇՐՋԱՆՆԵՐԸ

Ասիայի գլխավոր ոգտակար հանածոների քարտեզի ուսումնասիրությունը (քարածուխ, նավթ, յերկաթի հանք, գունավոր մետաղներ):

Ներքին ջրեր: Գետեր, գլխավոր ջրբաժաններ. ասիական գետերի յերկարությունը՝ մայր ցամաքի մեծության տեսակետից:

Գետերը՝ Ոբ՝ Իրտիշ վտակով, Ցենիսեյ՝ Անգարայով, Լենա, Ամուր, Խուանգ-Խե, Ցանցզի-Ցզյան, Ինդոս, Տիգրիս և Եփրատ, Ամու—Դարյա, Սիր—Դարյա:

Լճերը՝ Կասպից, Արալյան, Բալխաշ, Բայկալ: Արհեստական վոռոգման գլխավոր սիստեմներ—Չինաստան, Հնդկաստան, Խորհրդային Միջին Ասիա:

Ասիայի կլիման: Ասիայի զանազան շրջանների հակադիր կլիմաները: Լայնությամբ ընկած լեռնաշղթաների ազդեցությունը կլիմայի վրա:

Կլիմայական շրջաններ: Ցուրտ կլիմայի շրջան, բարեխառն կլիմայի շրջան, անապատների և լեռնաշխարհների կլիմայական շրջանները, հարավային և հարավ-արևելյան Ասիայի մուսսոնային շրջանները:

Հողա-բուսական զոնաներ: Տունդրաների, տայգայի, տափաստանների, անապատների, խոնավ մերձարևադարձային անտառների զոնաներ, արևադարձային շրջաններ: Բուսականության բնույթն ըստ զոնաների: Անապատներ և կիսաանապատներ՝ Կարակում, Կզիլ-Կում, Գոբի կամ Շամո: Հողերի տարբերությունները և նրանց աշխարհագրական տեղաբաշխումը: Չինական դաշտավայրի լյոսային հողը:

Բնևռային, կենտրոնական Ասիայի ու Հնդկական շրջանի կենդանական աշխարհը: Այդ շրջաններից յուրաքանչյուրի կենդանիների բնույթագիրը:

Ազգաբնակության խտության, ազգագրական և պետական բաժանման քարտեզների ուսումնասիրություն:

IX. ԱՖՐԻԿԱ (6 ժամ)

Աֆրիկայի դիրքը: Տարածությունը: Ափերի գծագրության պարզությունը: Ափերի սակավ մատչելիությունը ծովի կողմից: Վասկո-դե-Գամայի, Լիվինգստոնի և Ստենլիի ճանապարհորդությունները: Գաղութների գրավումը Եվրոպայի իմպերիալիստների կողմից: Աֆրիկան ցամաք գաղութ:

Ծովերը, ծոցերը, նեղուցները՝ Միջերկրական ծով, Ջիբրալտարի նեղուց, Գվինեյի ծոց, Մոզամբիկի նեղուց, Աուեզի ջրանցք:

Կղզիները՝ Ազորյան, Մադագասկար:

Մակերևույթի կազմությունը: Լեռները՝ Ատլաս, Հարեչատանի, Դրակոնյան:

Հրաբուխները՝ Կենիա, Կիլիմանջարո, Կամերուն:

Բնորոշ իջվածքային ռելյեֆը:

Արևելյան-Աֆրիկական բարձրավանդակ. նրանից դեպի հարավ ընկած յերեք խոր ցածրությունները, վորոնք բռնված են Ռուդոլֆի, Տանգանիկա, Նիասաս լճերով:

Գոգերի կողքերին՝ Կենյա և Կիլիմանջարո բարձր հրաբուխները: Ընդարձակ գոտավորություն, վոր բռնված է Վիկտորիա լճով, շրջապատված իջվածքներով (сброс):

Սանդղաձևությունը և միակերպությունն Աֆրիկայի մակերևույթի բնորոշ առանձնահատկություններն են:

Հանածո հարստություններ. պղինձ, աշխարհի ամենահարուստ վոսկերեր ավազներ և ալմաստի հանքավայրեր հարավային Աֆրիկայում:

Գետեր: Սահանքները և ջրվեժները վորպես ռելյեֆի սանդխաձևության հետևանք, վոր խանգարում են նավաշնացությանը և ցամաքն անմատչելի դարձնում: Զամբեզի գետի վրա յեղած Վիկտորիա ջրվեժը:

Գետերը՝ Նեղոս, Սպիտակ և Կապույտ Նեղոս, Նիգեր, Կոնգո:

Կլիմա: Հյուսիսային և Հարավային Աֆրիկայի տարվա յեղանակները: Աֆրիկան յերկրագնդի ամենատաք մասն է: Տեղումների տեղաբաշխումը: Հասարակածային անձրևներ: Արևադարձային պարբերական անձրևներ: Գվինեյի ծոցի մուսսոնները: Պասատների դերն Աֆրիկայի կլիմայում: Զոր շրջանների առաջացումը:

Կլիմայական շրջաններ: Կենտրոնական Աֆրիկա՝ հասարակածային շրջան, Վերին Գվինեա, Կոնգոյի հովիտ: Արևադարձային խոնավ անտառի փարթամ բնությունը:

Պարբերական անձրևների շրջաններ: Սավաններ և մերձարևադարձային անտառներ: Սուդան: Արևադարձային տափաստաններ:

Սահարա: Արևադարձային անապատ: Անձրևաղուրկ շրջան, չիկացած մակերևույթ՝ համարյա միանգամայն զուրկ բուսականությունից: Այրող ավազային փոթորիկներ: Սամում: Անապատի հողերը: Ոազիսներ: Սահարայի նշանակությունը վորպես բաժանողի:

Ցեղիպտոս: Նեղոս գետ անապատի մեջ: Նեղոսի ողողումը: Արհեստական վոռոգում:

Կալահարի՝ մերձծովյա անապատ:

Մերձարևադարձային շրջաններ: Միջերկրածովային Աֆրիկա, Հարավային Աֆրիկա:

Աֆրիկայի կենդանական աշխարհը:

Ազգաբնակության խտության քարտեզի, ազգագրական քարտեզի և պետական բաժանման քարտեզի ուսումնասիրություն:

X. ԱՄԵՐԻԿԱ (6 ժամ)

Հեռավորությունն ուրիշ աշխարհամասերից: Բրիսսաֆոբ կոլումբոսի և բալբոայի ճանապարհը: Վեստինդիայի հայտարերումը: Հյուսիսային և Հարավային Ամերիկաների հայտարերումն ու դրավումը: Ամերիկայի տարբերությունը հին աշխարհից՝ հյուսիսից հարավ ձգված լեռներու հանդամանքով: Հյուսիսային և Հարավային Ամերիկայի տարածությունը:

Ծովափնյա գիծը: Ամերիկայի՝ Ատլանտյան և Խաղաղ ովկիանոսների ափերի տարբերությունն ըստ նրանց կտրտվածության աստիճանի:

Ծովերը և ծոցերը՝ Հյուսիսային սառուցյալ ծով, Հուդսոնի ծոց, Մեքսիկայի ծոց, Կարիբյան ծով, Մագելանի նեղուց, Կալիֆորնիայի ծոց, Բերինգյան ծով, Բերինգյան նեղուց:

Թերակղզիները՝ Լաբրադոր, Ֆլորիդա, Կալիֆորնիա, Ալյասկա:

Կղզիները՝ բևեռային արշիպելագ (մաղնիսային բևեռ), Գրենլանդիա, Նյուֆաունդլենդ, Մեծ Անտիլյան (Կուբա և մյուսները), Հրա յերկիր, Ալեուտյան կղզիներ: Պանամայի պարանոց, Պանամայի ջրանցք:

ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀՍ. ՈՒ ՀՐ. ԱՄԵՐԻԿԱՆԵՐԻ ԴԵՏԵՐԸ

Ընդհանուր տեսություն: Հյուսիսային և Հարավային Ամերիկայի մակերևույթի կազմության պարզությունը: Արևմտյան լեռնային յերկիր: Կորդիլերները՝ դլխավոր դետերի աղբյուր: Արևելյան հարթ տարածություն: Ատլանտյան ովկիանոսի ափի հին բարձրությունները: Ատլանտյան և Խաղաղ ովկիանոսների պետային ավազանների չափի խոշոր տարբերությունը:

Հյուսիսային Ամերիկա: Արևելյան մաս: Կանադայի հնադույն մասիվը:

Ցամաքի արևմտյան լեռնային մասը: Ցամաքի միջին մասը:

Լեռներ և դաշտավայրեր: Կորդիլյերների լեռնային սիստեմ՝ Ժայռոտ, Կասկադային Սիյերա—Նևադա: Ապալաչի (Ալեղանի):

Հյուսիս-Ամերիկյան Մեծ և Մեքսիկայի բարձրավանդակները: Միսիսիպի դետի դաշտավայրը:

Հյուսիսային Ամերիկայի լեռների մատչելիությունը: Գաղութացումը տարածելու արդելքների բացակայությունը Խաղաղ ովկիանոսի ուղղությամբ: Քարածխի և յերկաթի խոշոր պաշարները: Նավթի և գունավոր մետաղների հանքերը:

Դետերը և լճերը՝ Միսիսիպի՝ Միսսուրի և Ոհայո վտակներով, Լավրենտիոսի դետ:

Հյուսիսային Ամերիկայի մեծ լճերը՝ Վերին, Հուրոն, Միչիդան, Երի, Ոնտարիո: Նիագարա դետը և Նիագարա ջրվեժը:

Հարավային Ամերիկա: Կորդիլերներ (Անդեր), Բրազիլիական բարձրավանդակը: Ամազոնի և Լապլատայի դաշտավայրերը: Հարավային Ամերիկայի Անդերի սակավ մատչելիությունը: Հասարակածային շրջանի ձյունապատ լեռնաշղթաները: Ատլանտյան ովկիանոսի ավազանի հսկայական յերկայնությամբ ջրառատ դետերը և դեպի Խաղաղ ովկիանոս հոսող կարճ սրընթաց հեղեղները: Դետերը՝ Ամազոն, Որինոկո, Պարանա (Լա-Պլատա):

Հս. և Հր. Ամերիկաների կլիման: Ամերիկայի կլիմայի բազմազանությունն ահագին տարածության վրա՝ հյուսիսից-հարավ: Հյուսիսից հարավ կլիմայական պայմանների աստիճանական փոփոխումը վորպես հետևանք այն բանի, վոր բացակայում են լայնությամբ ընկնող ու պատնեշող լեռներ: Ջերմության սուր տատանումներն որվա ընթացքում՝ հյուսիսային և հարավային քամիների անարգել ներթափանցման հետևանքով:

Բարեխառն կլիմայի գերակշռությունը Հյուսիսային Ամերիկայում և տաք կլիմայինը՝ Հարավային Ամերիկայում:

Ամերիկայի ափերի յերկարությամբ անցնող ծովային հոսանքները և նրանց ազդեցությունը կլիմայի վրա. տաք՝ Գոլֆըշտրոմ, Բրազիլիական, սառ՝ Լաբրադորի և Պերուի:

Հյուսիսային Ամերիկայի մեծ մասի ցամաքային կլիման. Հյուսիս-Ամերիկյան Մեծ բարձրավանդակի չոր կլիման: Հյուսիսային Ամերիկայի արևմուտքում արհեստական վոռոգման չափ տարածումը: Մեքսիկայի ծոցի ափերի, Կենտրոնական Ամերիկայի և Վեստ-Ինդիայի տաք, խոնավ կլիման:

Արտաարևադարձային Հարավային Ամերիկա: Արգենտինայի պամպասը: Պատագոնիայի չոր տափաստանները:

Արևադարձային Ամերիկայի ոգտակար բույսերը: Հյուսիս-

սային և Հարավային Ամերիկաների կենդանական աշխարհի առանձնահատկությունները:

Աղքաբնակության խտության, աղքադրական և պետական բաժանման քարտեզների ուսումնասիրություն:

XI. ԱՎՍՏՐԱԼԻԱ ՅԵՎ ՈՎԿԻԱՆԻԱ (2 ժամ)

Մեծությունը: Մեկուսացած դրությունը: Հայտաբերման և նվաճման պատմությունը: Կուկի ճանապարհորդությունը:

Ցամաքի ափերի զծագրության պարզությունը: Ծովերը, ծոցերը, նեղուցները: Մեծ Ավստրալական ծոց: Կորալական և հրաբխային կղզիներ:

Կղզիները՝ Տասմանիա, Նոր Զելանդիա, Նոր Գվինեա. Պոլինեզիայի և Հավայի կղզիները:

Մակերևույթը: Մակերևույթի կազմության պարզությունը: Արևելյան բարձրադիր մասը և ծալքավոր լեռներ՝ Ավստրալիական Ալպեր:

Ավստրալիական Ալպերից արևմուտք ընկած դաշտավայրը: Ցամաքի արևմտյան բարձր մասը:

Գետերը՝ Մուրրեյ և Դարլինգ: Զորացող գետեր («կրիկներ»):

Կլիման: Ավստրալիայի հյուսիսային մասն ունի արևադարձային կլիմա, հարավային մասը՝ մերձարևադարձային:

Ցամաքի ներսի մեծ մասի կլիման ցամաքային է: Արևելյան ծովափը խոնավ է:

Բուսականությունը և կենդանական աշխարհը: Արևադարձային անտառներ և սավաններ ցամաքի հյուսիսային մասում: Հարավարևելյան Ավստրալիայի ծառային բուսականության առանձնահատկությունները:

Ցամաքի չոր մասերի բուսականությունը («սկրուբներ»):

Անասնապահության և արհեստական վոռոդման շրջաններ: Կուլտուրական բույսեր:

Ավստրալիայի կենդանական աշխարհի առանձնահատկությունները (պարկավոր կենդանիներ և այլն):

Աղքաբնակության խտության, աղքադրական և պետական բաժանման քարտեզների ուսումնասիրություն:

XII. ԱՆՏԱՐԿՏԻԴԱ (1 ժամ)

Ցամաքի հայտաբերումը: Հարավային բևեռի հայտաբերումն Ամունդսենի կողմից 1911 թ.: Սկոտի մահը 1912 թվին:

Ի՞նչ ատիճան և ուսումնասիրված ներկայումս:

Մագնիսային բևեռը Վիկտորիայի յերկրում: Անտարկտիդայի մեծությունը:

Անտարկտիդայի բարձրավանդակներն ու լեռնաշղթաները: Երեբուս հրաբուխը: Բևեռային կլիմա: Ուժեղ սառցապատում:

Ամառային ցածրատեղման ջերմությունը: Բուսական աշխարհի աղքատությունը:

Կենդանիները՝ փոկեր, մրրկահավեր, պինգվիններ:

Կետորսության վայրեր:

Անգլիայի գրաված տարածությունը:

ՈՒՍՄԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՑ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՍՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

I. ԱՆԳԼԻԱ (6 ժամ)

Կղզիական դրությունը: Մեծ Բրիտանիան շրջապատող Ատլանտյան ովկիանոսի մասերը՝ Գերմանական ծով, Պաղե-Կալե, Լամանշ և Իրլանդական ծով: Տարածությունը և աղքաբնակչությունը: Բաղկացուցիչ մասերը և գլխավոր քաղաքները՝ բուն Անգլիա (Լոնդոն, Բիրմինգամ, Լիվերպուլ, Մանչեստր, Նյուկեսլ), Ուելս, (Կարդիֆ), Շոտլանդիա (Գլազգո և Եդինբուրգ), Հյուսիսային Իրլանդիա (Բելֆաստ):

Բնական պայմանները: Ափերի կտրտվածությունը. Պեննինյան լեռներ և Շոտլանդական լեռնաշխարհը: Ածխի և յերկաթի հանքերը, նրանց մերձավորությունը ծովից և միմյանցից: Գետեր. նրանց զուգական կապակցությունը և ակունքների մոտիկությունը: Թեմզա: Ծովային կլիմա: Ծովի, դոլիշտրոմի, արևմտյան քամիների և ռելյեֆի միացյալ ազդեցությունը կլիմայի վրա: Տեղումների տեղաբաշխումը: Ճիմա — մոխրային հողեր: Անտառների կտրվածությունը: Գուրակային լանդշաֆտ: Մարդաբնակությունը: Անգլիայի ներսում բնական պայմանների հիմնական տարբերությունները:

Պատմա-աշխարհագրական տեղեկարան։ Անգլիան մինչև հայտնագործումների ժամանակաշրջանը — Եվրոպայի հումութային ծայրամաս (բուրդ մատակարարող)։

Անգլիայի յերեք դար տևող հաղթական պատերազմն Իսպանիայի և Ֆրանսիայի դեմ՝ ծովի վրա գերիշխող դիրք ձեռք բերելու համար։ Գաղութների կողոպտումը։ Գյուղացիների հաղորդումը։ Արդյունաբերական հեղաշրջում։ Անգլիան 19-րդ դարի առաջին կիսում համաշխարհային արդյունաբերական մենաշնորհով զարգացող առաջին կապիտալիստական յերկիրն էր։ Մյուս յերկրներում կապիտալիզմի զարգացման հետևանքով (Գերմանիա, Մ. Նահանգներ, Ճապոնիա և այլն) Անգլիան կորցրեց իր մենաշնորհային դիրքը։ Անգլիայի տեսակարար կշռի անկումը ջուլունի և ածխի համաշխարհային արտադրանքի մեջ։ Անգլիան մինչև համաշխարհային պատերազմը և նրանից հետո։ Իմպերիալիզմի սիստեմում կորել է Անգլիայի առաջնությունը հոգուտ Միացյալ Նահանգների։

Տնտեսական բնութագիրը։ Անգլիան զարգացած ինդուստրիալ յերկիր է։

Արդյունաբերող քաղաքների ազգաբնակության՝ բացառիկ բարձր աճումը։ Գրոլետարիատի թիվը և տեսակարար կշիռը։ Ներմուծման և արտահանման օբյեկտները։ Արտահանման բաժինն արդյունաբերական ճյուղերի արտադրանքում և ներմուծման բաժինը հումույթի և մթերքների սպառման մեջ։

Արդյունաբերության գլխավոր ճյուղերը — հները՝ ածխի, մետաղագործության, մեքենաշինության և տեքստիլ։ Նորերը՝ ավիո և ավտո շինարարական, քիմիական, էլեկտրոտեխնիկական, ռադիոարդյունաբերություն և այլն։ Հին ճյուղերի կազմակերպչական և տեխնիկական հետամնացությունը։ Գլխավոր արդյունաբերական կենտրոնները։

Գյուղատնտեսության սոցիալական կառուցվածքը (լորդ, ֆերմեր, բատրակ)։ Մերձքաղաքային ճյուղերի գերակշռությունը գյուղատնտեսության մեջ։ Գյուղատնտեսությունը վերածվել է քաղաքի կցորդի։

Հիմնական տնտեսական շրջանները՝ «Սև» Անգլիա և «Կանաչ» Անգլիա։ Ծովային նավատորմիղը (առաջին տեղն աշխարհում), նավաշինարարությունը և ծովային առևտուրը։ Ծովային տեղափոխություններից առացած յեկամուտը։ Ներքին ջրային ճանապարհներ (ջրանցքներ), յերկաթուղային ցանցը (հնադույնն աշխարհում)։

Անգլիական կապիտալիստներն արտասահմանում և նրանցից առացվող յեկամուտը։

Անգլիան իբրև բրիտանական գաղութային մետրոպոլիա (դիտել համաշխարհային քաղաքական քարտեզի վրա)։ Անգլիայի դոմինիոնները.—Իռլանդիա, Կանադա, Նյու-Ֆաունդլենդ, Հարավ-Աֆրիկյան միություն, Ավստրալիա և Նոր Զելանդիա։ Դոմինիոնների դրությունը իմպերիայի մեջ և մետրոպոլիայի հարաբերությունը դոմինիոնների հետ։ Գաղութներից նշանավորը՝ Հնդկաստան։ Կիսագաղութները (Եգիպտոս)։ Գաղութների շահագործումը Անգլիայի կողմից։ Անգլիայի շահագործման դեմ ուղղված ազգային ազատագրական շարժումը։ Ռազմա-ծովային բազաներ՝ Անգլիայից Հնդկաստան տանող ճանապարհի վրա.—Ջիբրալտար, Մարտա կղզին, Սուեզի ջրանցքի զոնա, Ադեն։ Սինգապուրի և Հոնկ-Կոնգի նշանակությունը։

Անգլիայի ներկա ներքին և արտաքին դրությունը։ Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամ, արտադրության խիստ անկում, գործազրկություն, աղքատություն, սոցիալական հակասությունների և դասակարգային պայքարի սրում։ Անգլիայի և Միացյալ Նահանգների պայքարը համաշխարհային առաջնության համար, վորպես հիմնական հակասություն իմպերիալիզմի ներսում։ Նրանց մրցության գլխավոր գոտիները։ Անգլիա և Ֆրանսիա։ Անգլիա և Չինաստան։ Անգլիա և ԽՍՀՄ։ «Անգլիական իմպերիալիզմը միշտ յեղել է, կա և կլինի ժողովրդական հեղափոխությունների ամենաղաժան խեղդողը» (ՍՏԱԼԻՆ)։

Անգլիայի դերը 1918—20 թվի ինտերվենցիայում և նրա մասնակցությունը ԽՍՀՄ-ի դեմ նոր պատերազմ պատրաստելու գործում։ Անգլիայի ռազմական և ռազմածովային ուժերը։

II. ՖՐԱՆՍԻԱ (5 ժամ)

Ներկայիս և մինչպատերազմյան Ֆրանսիայի սահմանները։ Տարածությունը և ազգաբնակությունը։ Ֆրանսիան վաղվող ծովերը, ծոցերը և նեղուցները՝ Լամանշ, Գալե-Կալե, Բիսկայան ծոց, Միջերկրական ծով։

Ֆրանսիայի դիրքը յերկու հաղորդակցության համար հարմար է. ծովերի միջև ավելի պակաս հարմար է քան Անգլիայինը, բայց ավելի հարմար՝ քան Գերմանիայինը։

Քաղաքները՝ Փարիզ և նրա նշանակությունն, իբրև առևտրական, արդյունաբերական, քաղաքական և կուլտուրական կենտրոն, Լիոն, Մարսել, Հավր, Տուլոն, Ստրասբուրգ։

Բնական պայմանները: Ռելյեֆը: Ալպեր, Պիրինյան լեռներ և կենտրոնական մասիվ: Գետերը՝ Սենա, Հռենոս, Ռոնա, Հարոնա, Լուարա: Հարուստ է սպիտակ ածուխով: Ծովային կլիմայի գերակշռությունը (բայց առանց ծայրահեղ ամպամածության և խոնավության՝ ինչպես Անգլիայում): Միջերկրածովային կլիմայի շերտը հարավում: Բարեբեր հողերի գերակշռությունը: Հարուստ է յերկաթով և համեմատաբար աղքատ է ածուխով:

Պասսա-աշխարհագրական ակնարկ: Ազգային սահմաններում համեմատաբար վաղ մեծ պետություն կազմելը: Ֆրանսիական մեծ հեղափոխությունը: Նապոլեոնյան պատերազմները և Ֆրանսիայի՝ բոլոր գաղութներից զրկվելը: Նոր գաղութային իմպերիայի կազմակերպումը: Պատերազմ Գերմանիայի հետ 1871 թ. և Ելզաս Լոթարինգիայի կորուստը: Ռևանշի ձգտում: Կապը ցարական Ռուսաստանի հետ: Մասնակցությունը համաշխարհային պատերազմին և պատերազմի հետևանքները Ֆրանսիայի համար:

Ֆրանսիան համաշխարհային պատերազմից առաջ և հետո:

Տնտեսական բնութագիրը: Ժողովրդական տնտեսության բնութագիրը համաձայն արտաքին առևտրի և ազգաբնակության կազմի տվյալների: Գյուղատնտեսության և արդյունաբերության հարաբերակցությունը: Պրոլետարիատի քանակը: Մանր արդյունաբերության ուժեղ զարգացումը (առանձնապես ռազմական և նրա հետ կապված ճյուղերի) նախապատերազմյան շրջանի համեմատությամբ: Նոր արդյունաբերական կենտրոնների ստեղծումը հարավ-արևելքում և հարավ-արևմուտքում՝ հյուսիս – արևելքի դինամիկական ոկուպացիայի ժամանակ: Արդյունաբերության տեղաբաշխումը—հյուսիս-արևելքը՝ լեռնային, մետաղաձուլական և տեքստիլ արդյունաբերություն, Լոտարինգիան՝ լեռնադրական, մետալուրգիական և Ելզասը՝ տեքստիլ և քիմիական: Հին արդյունաբերական կենտրոններ՝ Փարիզ—ավտո և ավիո-արդյունաբերության նոր ճյուղերով, Լիոնը՝ արհեստական մետաքսով: Կրեզո—ռազմա-արդյունաբերական կենտրոն: Գյուղատնտեսության սոցիալական կառուցվածքը: Գլխավոր ճյուղերը՝ խաղողագործություն, այգեգործություն, մեսաքաղաքագործություն (հարավում), կաթնասնապահություն (հյուսիս-արևմուտքում), հացահատիկային հողագործություն (կենտրոնում):

Տրանսպորտը, նավատորմիղը, նավահանգիստները:

Արտաքին առևտուրը: Ներմուծման և արտահանման օբյեկտները: Արտաքին կապերի ուղղությունը:

Ֆրանսիայի գաղութային տիրապետությունը: (Ուսումնասիրել համաշխարհային քաղաքական քարտեզի վրա): Ֆրանսիայի գլխավոր գաղութները՝ Ալժիր, Մարոկկո, Թունիս, Հասարակածային և Արևմտյան Աֆրիկա, Մադագասկար, Հնդկաչին: Մանդատային տերրիտորիա՝ Սիրիա: Գաղութների շահագործումը Ֆրանսիայի կողմից: Ապստամբությունների անողոք ճնշումը Մարոկկոյում, Սիրիայում և Հնդկաչինում:

Ներկայիս ներքին և արտաքին դրությունը: Ֆրանսիայի ուշացած ճգնաժամը և այդ ճգնաժամի արագ ծավալումն ու սրումը: Գործազրկություն: Ճգնաժամից և ինֆլյացիայից սնանկացած մանր բուրժուազիայի դժգոհությունը գյուղում և քաղաքում: Դասակարգային պայքարի սրումը: Ֆրանսիական կոմկուսը:

Ֆրանսիական բուրժուազիայի առանձնակի հետադիմությունը, բուրժուազիայի՝ վորի մեջ գլխավոր դերը պատկանում է դրամատերերին և ռազմա-արդյունաբերողներին:

Հետպատերազմյան բուրժուական Ֆրանսիայի լենինյան և ստալինյան բնութագիրը. «համաշխարհային ռեակցիայի հենարան», «միջազգային ժանդարմ», «զարգացող համաշխարհային հեղափոխության կատաղի թշնամի» (ԼԵՆԻՆ), «ամենամիլիտարիստականը իմպերիալիստական յերկրներից» (ՍՏԱԼԻՆ):

Ֆրանսիան վորպես փոքր Անտանտային վոգևորող (Չեխո Սլովակիա, Հարավ-Սլավիա, Ռումինիա), և Լեհաստանի միջոցով ԽՍՀՄ-ի դեմ ինտերվենցիա նախապատրաստող: Ֆրանսիայի և ԽՍՀՄ-ի միջև միմյանց վրա չհարձակվելու պայմանագիրը կնքելը վորպես ԽՍՀՄ-ի խաղաղասիրական քաղաքականության խոշոր հաղթանակ:

Ֆրանսիայի պայքարը Եվրոպայում հեգեմոնիա ձեռք բերելու համար: Ֆրանսիայի և Գերմանիայի միջև յեղած հակասությունները: Պայքար Միջերկրական ծովի համար: Հարաբերությունների սրումն Անգլիայի, մանավանդ Իտալիայի հետ: Ֆրանսիայի ռազմական ուժերը:

III. ԳԵՐՄԱՆԻԱ (5 ժամ)

Ժամանակակից և նախապատերազմյան Գերմանիայի սահմանները: Տարածությունը և ազգաբնակությունը: Դիրքը ծովի նկատմամբ (համեմատել Անգլիայի և Ֆրանսիայի հետ): Սահմանակից ծովերը՝ Գերմանական և Բալթիկ ու նրանց միացնող Քիլի ջրանցքը: Գերմանիան բուրժուական ֆեդերատիվ հանրա-

պետություն է։ Գերմանիայի գլխավոր մասերը («հողերը») և գլխավոր քաղաքները՝ Պրուսիա (Բերլին, Համբուրգ, Բրեմեն, Դուիսբուրգ, Քյոլն, Եսսեն, Բրեսլավ, Քյոնիգսբերգ), Բավարիա (Մյունխեն), Սաքսոնիա (Լայպցիգ)։

Բնական պայմանները։ Ռելյեֆի 3 աստիճանները՝ գերմանական դաշտավայր, միջին Գերմանիայի միջակ-բարձր լեռներ և Ալպեր։ Գետերը՝ Հռենոս, Վիզեր, Ելբա, Ոդեր, Դանուբ։ Ցամաքային կլիմայի գոտի ուժեղանալը արևմուտքից դեպի արևելք։ Քարածխի, յերկաթի և կալիումի ապի գլխավոր հանքավայրերը։

Պատմա-աշխարհագրական ակնարկ։ Կապիտալիզմի զարգացման ուշացումը Գերմանիայում՝ Անգլիայի և Ֆրանսիայի համեմատությամբ։ Գերմանիայի անդամահատվածությունը, հետամնացությունը և թուլությունը 19-րդ դարի սկզբին։

Գերմանիայի վերելքի փուլերը՝ յերկաթուղիներ, քաղաքական համախմբում, Ֆրանսիայից ստացած կոնտրիբուցիան՝ 1871 թվի պատերազմից հետո և այլն։

Նախապատերազմյան Գերմանիա. նրա տնտեսական և ռազմական ուժը, գաղութների պակասը և գերմանական իմպերիալիզմի ագրեսիվությունը։

Անգլիայի դեմ՝ աշխարհի վերաբաշխման համար մղած պայքարը, վորը հասցրեց համաշխարհային պատերազմի։ Գերմանիայի պարտությունը, տերրիտորիաների կորուստը (բուն յերկրամասից և բոլոր գաղութները), ուժից վեր վճարումները հաղթողներին։

Գերմանիան Վերսալի սիստեմի ճիրաններում։ Բուրժուազիայի կողմից պատերազմի ծանր հետևանքների բարդումը բանվորների վրա։

Տնտեսական բնութագիրը։ Գերմանիայի ժողովրդական տնտեսության կառուցվածքը, ազգաբնակության կազմի, ներմուծման ու արտահանման տվյալների համաձայն։ Պրոլետարիատի թիվը և նրա տեսակարար կշիռը։ Ինդուստրացման աստիճանի համեմատությունն Անգլիայի և Միացյալ Նահանգների հետ։

Արդյունաբերության գլխավոր ճյուղերը՝ ածխային, մետաղագործական, մեքենաշինարարական, էլեկտրոտեխնիկական, քիմիական, տեքստիլ և այլն։ Գերմանական արդյունաբերության կոնցենտրացիայի բարձր աստիճանը և բարձր տեխնիկական մակարդակը։ Տնտեսական քայքայման հետևանքով ներքին շուկայի նվազելը և նրա խիստ անհամապատասխանությունն արտադրողական ապարատի հզորությանը։

Գլխավոր արդյունաբերական ռայոնները՝ Ռուր, Սիլեզիա, Սաքսոնիա (Թյուրինգիայի հետ), Բեռլին։

Գյուղատնտեսության սոցիալական կառուցվածքը։ Խոշոր ֆեոդալատիրական տնտեսության գերակշռությունն արևելքում և փոքր գյուղացիականը՝ արևմուտքում (հատկապես Հռենոսի դաշտավայրում)։ Գյուղատնտեսության բարձր տեխնիկական մակարդակը։ Հիմնական կուլտուրաները (տարեկան, կարտոֆիլ, շաքարի ճակնդեղ, ցանովի խոտեր), անասունների տեսակները (խոզեր և կաթնատու անասուններ) ու նրանց տեղաբաշխումը։

Ներկայիս ներքին և արտաքին դրությունը։ Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի բացառիկ արտահայտությունը Գերմանիայում՝ հետպատերազմյան քայքայման ֆոնի վրա։ Արտադրանքի իջեցումը, գործազրկությունը, մանր բուրժուազիայի աղքատությունը և մասսայական քայքայումը քաղաքում ու գյուղում։ Սոցիալական հակասությունների և դասակարգային պայքարի խիստ սրումը։ (վերջին ընտրությունները, հիտլերյան ֆաշիստական դիկտատուրան։ պրոլետարիատի և աշխատավորության չտեսնված հարստահարում, ճնշում և հալածանք։ Կոմկուսակցության արգելումը և ընդհատակ անցնելը)։

Գերմանական կոմկուսը վորպես Համկ(բ)Կ-ից հետո ամենաուժեղ կոմկուսակցությունը։ Նրա ամենաուժեղ ազդեցության շրջանները։

Գերմանիայի խիստ թշնամական վերաբերմունքը Ֆրանսիայի և Լեհաստանի հանդեպ։

Գերմանիան և ԽՍՀՄ-ն։

IV. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ (6 ժամ)

Դիրքը յերկու օվկիանոսների միջև։ Ցամաքային սահմանները։ Տարածությունը և ազգաբնակությունը (համեմատել Արևմտյան Եվրոպայի և ԽՍՀՄ-ի հետ)։ Միացյալ Նահանգները բուրժուական ֆեդերատիվ հանրապետություն է։ Գլխավոր

քաղաքները՝ Նյու-Յորք, Չիկագո, Վաշինգտոն (ֆեդերացիայի մայրաքաղաքը), Ֆիլադելֆիա, Բոստոն, Դիտրոյթ, Նոր-Որլեան, Սան-Ֆրանցիսկո, Լոս Անժելոս:

Բնական պայմանները: Ափերի դծագրական բնույթը Խաղաղ օվկիանոսի, Ատլանտյան օվկիանոսի և Մեքսիկայի ծոցի ափերին: Ֆլորիդա թերակղզին: Ռելյեֆը՝ Ապպալաչի, Միսիսիպիի դաշտավայրը և Կորդիլերների սիստեմը: Հյուսիսային Ամերիկայի մեծ բարձրավանդակը: Լճերը և նրանց միացումը Ատլանտյան օվկիանոսի հետ՝ Երի ջրանցքի և Հուդսոն գետի միջոցով:

Միսիսիպի՝ Ոհայոյի հետ և Միսուրի: Կոլումբիա և Կոլորադո: Ովկիանոսների, ծովային հոսանքների և ռելյեֆի ազդեցությունը կլիմայի վրա: Տեղումների ու ջրային եներգիայի պաշարները. նրանց տեղաբաշխումը: Ոգտակար հանածոներ՝ ածուխ, նավթ, յերկաթ, գունավոր մետաղներ. ընդհանուր պաշարը և գլխավոր շրջանները:

Պատմա-աշխարհագրական ակնարկ: Անգլիական 17-րդ և 18-րդ դարերի գաղթավայրերը (поселения), Հյուսիսային Ամերիկայի՝ Ատլանտյան օվկիանոսի ափին, կազմում են ժամանակակից Միացյալ Նահանգների կորիզը. սա հեռավոր, սակավաբնակ, գաղութային մի ծայրամաս է՝ զուտ հումքային արտադրանքով: Հյուսիսի և հարավի միջև յեղած տարբերությունն ըստ կոլոնիաների կազմի և ըստ բնական ու տնտեսական պայմանների:

Անգլիայից անջատվելը (1776 թ.): Տերրիտորիայի ընդլայնումը: Մերձավոր Արևմուտքի բնակեցումը. արդյունաբերության աճումը հյուսիս արևելքում, հացահատիկները և անասնաբուծությունը Մերձավոր Արևմուտքում, բամբակագործությունը հարավում:

Ջրանցքներն ու յերկաթուղիները և նրանց նշանակությունը:

1861—1866 թվերի պատերազմը կապիտալիստական հյուսիսի և ստրկատիրական հարավի միջև: Միացյալ Նահանգների արագ տնտեսական վերելքը՝ սկսած ութսունական թվականներից: Պատերազմ Իսպանիայի հետ (1898 թ.) և Ամերիկյան իմպերիալիզմի համաշխարհային ասպարեզ դուրս գալը:

Պանամայի ջրանցքը: Միացյալ Նահանգների մասնակցությունը համաշխարհային պատերազմում և տնտեսական առաջնության գրավումը:

Ազգաբնակությունը: Ազգաբնակության ազգային կազմը և նրա բացառիկ խայտաբղետությունը: Ինչպես ե կատարվում իմմիգրանտների «ամերիկանիզացիան», «բուն ամերիկացիներ» և այլազգիներ: Հետպատերազմյան որենքներ եմիգրացիան կըրճատելու համար: Հնդիկների մնացորդները: Նեգրերն ու նրանց բացառիկ ճնշված վիճակը:

Ազգաբնակության դասակարգային և արհեստակցական կազմը: Պրոլետարիատի թիվը և տեսակարար կշիռը: Քաղաքային ազգաբնակությունը և նրա տեսակարար կշիռը յերկրի տարբեր մասերում: Ազգաբնակության խտության աշխարհագրությունը:

Տնտեսական բնութագիրը: ՀԱՄՆ-ի արտադրողական ապարատի կարողությունը: ՀԱՄՆ-ի տեսակարար կշիռը համաշխարհային արտադրանքի մեջ: Միացյալ Նահանգները՝ «կապիտալիզմի միջնաբերդը» ներկայիս համաշխարհային ճգնաժամի կենտրոնն ե:

Կապիտալի համակենտրոնացման բացառիկ բարձր աստիճանը: Տրեստներ, սինդիկատներ, կոնցերներ և այլն:

Միացյալ Նահանգների ժողովրդական տնտեսության կառուցվածքը՝ ըստ ազգաբնակության կազմի և արտահանման ու ներմուծման բնույթի (համեմատել Անգլիայի և Գերմանիայի հետ): Արդյունաբերության տեսակարար կշռի աճը՝ համեմատած նախապատերազմյան դրության հետ:

Արդյունաբերության գլխավոր ճյուղերը՝ լեռնարդյունաբերություն, մետաղամշակություն, մեքենաշինարարության (ավտո-տրակտորային, երեկտրոտեխնիկական և այլն):

Արտադրության մասսայականությունը, լայն մեխանիզացիան և յուանդարտիզացիան:

Գյուղատնտեսության գլխավոր ճյուղերը և նրանց տեղաբաշխումը: Ցեղիպտացորենի, ցորենի, բամբակի, ծխախոտի, կաթնատանտնտեսական, արոտատեղային, մսատու անասնապահության, բանջարաբուծության, այգեմշակության շրջաններ և այլն: Գյուղատնտեսության սոցիալական կառուցվածքը: Ֆերմերը—կապիտալիստ ե հողի վրա: Ֆերմերի շահագործումը բանկերի և առևտրական կապիտալի կողմից. վարձակալության զարգացումը. ինչպես ե ֆերմերը պարտքի տակ ընկնում, կրելերների դրությունը:

Միացյալ Նահանգների գլխավոր շրջանները՝ կապիտալիստական Հյուսիս, նախկին ստրկատիրական Հարավ և զարգացող արևմուտք (ԼԵՆԻՆ)։

Տրանսպորտի մեծ աճումը՝ կապված կապիտալիզմի զարգացման բարձր մակարդակի, տերրիտորիայի ընդարձակության, բնական հարստությունների ցրվածության և տնտեսության խիստ առաջ գնացած մասնագիտացման հետ։

Ծովային նավատորմիղ։ Գլխավոր նավահանգիստները։ Մեծ լճերը, վորպես ջրային ճանապարհ. այդ ճանապարհով տեղափոխվող բեռները։

Պանամայի ջրանցքը և նրա նշանակությունը Միացյալ Նահանգների համար՝ տնտեսական և ռազմա-ստրատեգիական տեսակետից։

Երկաթուղային ցանցը։ Տրանս-ցամաքային գծեր։ Գետային տրանսպորտի թուլությունը վորպես երկաթուղային մրցության հետևանք։ Խճուղիների և ավտո-տրանսպորտի զարգացումը։

Արտաքին առևտուր։ Արտահանման և ներմուծման կազմը։ Արտաքին առևտրի կապերի ուղղությունը։ Միացյալ Նահանգների կապիտալները արտասահմանում։

Արդի արտաքին և ներքին դրությունը։ Ազատ հողի և «ծաղկման» մերը։ Միացյալ Նահանգները մի յերկիր է, վորտեղ սկսվել և կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը, վորտեղ նախնական չափերի յե հասել։ Արտադրանքի անընդհատ անկումը և գործազրկության աճումը։ Արդյունաբերական ճգնաժամի զուգադրումը գյուղատնտեսականի հետ։ Ֆերմերների մասսայական սնանկությունը և դեպի քաղաք փախչելը։ Դասակարգային պայքարի խիստ սրումը (գործադուլներ, սովարշավներ, գործադուրկների շարժում, պատերազմի վետերանների ցույցեր և այլն)։

Ֆաշիզմի աճումը ամերիկյան բուրժուազիայի մեջ և կոմունիզմը՝ պրոլետարիատի մեջ։

Միացյալ Նահանգները վորպես համաշխարհային պետություն (ուսումնասիրել համաշխարհային քաղաքական քարտեզի վրա)։ Միացյալ Նահանգների գաղութները և կիսագաղութները՝ Ալյասկա, Կուբա, Պորտորիկո, Պանամայի ջրանցքի զոնան, Հավայի և Ֆիլիպյան կղզիները։ Միացյալ Նահանգները և Կանադան։ Միացյալ Նահանգները և Լատինական Ամերիկան։ Միացյալ Նահանգները և Չինաստանը։ Միացյալ Նահանգների պայքարը Ցարոնիայի դեմ և Խաղաղ ովկիանոսի պրոբլեմը։ Միացյալ Նահանգները և Արևմտյան Եվրոպան։ Միացյալ Նահանգների և Անգլիայի պայքարը համաշխարհային առաջնության համար։ Միացյալ Նահանգները և ԽՍՀՄ-ն։ Միացյալ Նահանգների ռազմական ուժերը։

V. ԽՍՀՄ-ի ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԸ (8 ժամ)

1. Ֆինլանդիա, 2. Մերձբալթյան լիմիտրոֆներ՝ Եստոնիա, Լատվիա, Լիտվա, 3. Լեհաստան, 4. Ռումինիա։

Քարտեզով վորոշել նախկին Ռուսական կայսրության արևմտյան սահմանը։

ԽՍՀՄ-ի արևմտյան հարևանների ընդհանուր գծերը՝ ա) յերկրներ կապիտալիզմի միջակ (և միջակից ցած) զարգացումով, բ) համաշխարհային պատերազմից հետո նոր կազմված (բացառությամբ Ռումինիայի), գ) ընկած սոցիալիստական և կապիտալիստական սիստեմների սահմանագծում, յերկրներ, վորոնք Անտանտայի իմպերիալիստների կողմից գիտվում են վորպես պլացդարմ ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու և վորպես առաջնահերթ մատերիալ հակախորհրդային բլոկ կազմելու համար, դ) տնտեսապես ու քաղաքականապես դերազանցորեն կախված Անտանտայի իմպերիալիստներից՝ Ֆրանսիայից և Անգլիայից։

1. ՖԻՆԼԱՆԴԻԱ

Սահմանները, դիրքը. Ֆինլանդիան վողողող Բալթիկ ծովի մասերը՝ Բոտնիկ և Ֆիննական ծոցերը։ Քաղաքները՝ Հելսինգֆորս (մայրաքաղաքը), Վիպուրի, Աբո, Տամիրֆորս։

Բնական պայմանները։ Սառցադաշտերի ուժեղ հետքեր։ Վեճերի, քարի և անտառի յերկիր։ Կլիման և հողն աննպաստ են հողագործության համար։ Ոդտակար հանածոներով աղքատ, բացառությամբ շինանյութերի։ Սպիտակ ածուխով հարուստ։

Պատմա-աշխարհագրական ակնարկ։ Ֆինլանդիայի նվաճումը Ռուսաստանի կողմից՝ Շվեդիայից, 19-րդ դարի սկզբին։ Ցարական իշխանության ռուսացման քաղաքականությունը Ֆինլանդիայում։ Ազգային ինքնորոշման հիմունքներով Ֆինլանդիայի ինքնուրույն պետություն դառնալը։ Ֆինլանդիայի՝ 1918 թվի պրոլետարական հեղափոխությունը վորպես Հոկտեմբերի

արձագանք, նրա ճնշումը և ֆաշիստական դիկտատուրա հաստատելը:

Տնտեսական բնութագիրը: Գյուղատնտեսական տարածությունը կազմում է չնչին տոկոս: Հացի պակասությունը: Գյուղատնտեսության մասնագիտացումը կաթնա-անասնաբուծության ուղղությամբ: Կուլակային հողատիրության գերակշռություն: Անտառային տնտեսություն. փայտամշակման և փայտաթղթային արդյունաբերություն, նրանց տեսակարար կշիռն արդյունաբերության մեջ: Սպիտակ ածխի լայն ոգտագործումը: Ոտարերկրյա կապիտալի բարձր տեսակարար կշիռն արդյունաբերության մեջ: Աչքի ընկնող տուժերական նավատորմիղը:

Ցերկրի յերեք մասերը.—1) Հյուսիսայինը—Տունդրա՝ յեղջերվաբուծությամբ և ձկնորսությամբ, 2) միջինը՝ անտառարդյունաբերությամբ, 3) հարավ-արևմտյանն ավելի բնակված, հայտնի իր գյուղատնտեսությամբ և բազմազան արդյունաբերությամբ:

Ներկա դրությունը: Ճգնաժամի կապակցությամբ սոցիալական հակասությունների և քաղաքական պայքարի սրումը: Ֆաշիստական տերրոր բանվորների և բատրակների դեմ: Ֆինլանդական ֆաշիզմի ագրեսիվությունը՝ ԽՍՀՄ-ի հանդեպ:

Վոտնձգությունների խորհրդային տերրիտորիայի նկատմամբ և մինչև Ուրալ տարածվող Մեծ Ֆինլանդիա ստեղծելու պլանը:

II. ԵՍՏՈՆԻԱ, ԼԱՏՎԻԱ, ԼԻՏՎԱ

Սահմանները, դիրքը, դլխավոր քաղաքները. Եստոնիայում՝ Տալին (նախկին Ռեվել), Լատվիայում՝ Ռիգա, Լիտվայում՝ Կաունաս (նախկին Կովնո):

Անտանտան այս պետություններն ստեղծելով հետապնդել է՝ ա) կտրել ԽՍՀՄ-ն ծովից, բ) իրեն անջրպետել «բոլշևիկյան վարակից», գ) ապահովել իր համար հնազանդ վասալներ՝ ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու համար:

Բնության (հետսառցադաշտային լանդշաֆտի նկատելի արտահայտություն, մոխրահող, կավախառն, ավազախառն հողեր, ոգտակար հանածոներով աղքատ, կլիման ցամաքայինից ծովայինի անցնող) և եկոնոմիկայի (գյուղատնտեսության գերակշռություն, արտահանման միակողմանի բնույթը՝ անտառանյութ, վուշ, յուղ, բյուջեյական խրոնիկական դեֆիցիտ. կախում ոտարերկրյա կապիտալից) ընդհանուր գծերը:

ԽՍՀՄ-ի և Արևմտյան Յեվրոպայի առևտրի համար Եստոնիայի և Լատվիայի տրանզիտային նշանակությունը: Ծովային նավահանգիստները նոր սահմանով կտրվել են այն շրջաններից, վորոնց սպասարկում էին, արդյունաբերությունը կտրված է ոգտման շուկաներից:

Լիտվայի տնտեսական հետամնացությունը՝ Եստոնիայի և Լատվիայի համեմատությամբ:

Լեհաստանի կողմից Վիլենչինան հափշտակելու պատճառով Լիտվայի և Լեհաստանի միջև յեղած սուր թշնամանքը մի խոչընդոտ է Լիտվայի առաջ՝ հակախորհրդային բլոկի մեջ մտնելու համար:

III. ԼԵՀԱՍՏԱՆ

Սահմանները, ԽՍՀՄ-ի և Լեհաստանի սահմանի վրա ընկած Գինյան անմատչելի հահիճների ռազմա-ստրատեգիական նշանակությունը: Լեհաստանի դրությունը ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև՝ Արևմտյան և Արևելյան Յեվրոպայի կցման կետում: Լեհաստանի տերրիտորիայի այն մասերը, վորոնք պատերազմից առաջ պատկանել են Ռուսաստանին, Գերմանիային և Ավստրո-Հունգարիային: Քաղաքները՝ Վարշավա (մայրաքաղաքը), Կրակով, Վիլնո, Լվով, Պոզնան: Ծովային նավահանգիստը՝ Գդինիա, վորը յերկրի հետ միասին և «լեհական միջանցքով»: Տարածությունը և բնակչությունը:

Բնական պայմանները: Հարավ-արևմուտքում Կարպատներն իրենց նախալեռներով և դաշտավայր՝ մնացած տարածության վրա: Վիսլան Նարևի և Արևմտյան Բուգի հետ: Կլիմայի անցողիկ բնույթը՝ ցամաքային կլիմայի ուժեղացումն արևմուտքից արևելք: Անտառները և նրանց տեղաբաշխումը: Սիլեզիա-Դոմբրովսկ-Կրակովի ածխային ավազանը. նավթ, յերկաթ, գունավոր մետաղներ, տորֆ:

Ազգային հարցը: Լեհական պետության վերականգնումը համաշխարհային պատերազմի ֆետևանքով: Այժմյան Լեհաստանի բազկացուցիչ մասերի խիստ այլազանությունը: Լեհաստանի կողմից ազգադրական տեսակետից իրեն ոտար տերրիտորիաների հափշտակումը. այդ տերրիտորիաները բնակված են ուկրայնացիներով (Արևմտյան Ուկրայնա) բելոռուսներով (Արևմտյան Բելոռուսիա), լիտվացիներով (Վիլենչինա) և դեր-

մանացիներով (Պոզնան)։ Ազգային փոքրամասնությունների դաժան ճնշումները, ազգային հարցի սրությունը։

Տնտեսական բնութագիրը։ Ժողովրդական տնտեսության կառուցվածքը։ Հետպատերազմյան տնտեսության քայքայումը և մինչև այժմ արտադրության մինչպատերազմյան չափերին չհասնելը։ Խրոնիկական ճգնաժամի պատճառները՝ ա) կտրվածություն արևելյան շուկաներից, ուր սպառվում եր լեհական արդյունաբերության արտադրանքը։ Ներքին շուկայի թուլությունը և լեհական արդյունաբերության անմրցունակությունը Արևմուտքի շուկաներում, բ) միլիտարիզմ, վոր կլանում է յերկրի վողջ ֆինանսական միջոցները։

Արդյունաբերության գլխավոր ճյուղերը, տեքստիլ, մետաղի, սննդի, վորոնվում է անկման վիճակում և ռազմական, վորը զարգանում է ոտարերկրյա (առավելապես ֆրանսիական և ամերիկյան) վարկերով։ Ոտարերկրյա կապիտալի բարձր տեսակարար կշիռը լեհական արդյունաբերության մեջ։

Ագրարային հարցի սրությունը. ագրարային «ռեֆորմը», վոր բնավ չմեղմացրեց այդ սրությունը։ Գյուղացիության դաժան շահագործումը կալվածատերերի, կուլակների, առևտրական կապիտալի և պետության կողմից։ Գյուղատնտեսության հետամնացությունն՝ առանձնապես արևելքում։ Անտառների բարբարոսական վոչնչացումը՝ ոտարերկրյա պարտքերը վճարելու համար։ Յերկաթուղային ցանցը և նրա ուժգին նվազումն արևմուտքից արևելք. գետային տրանսպորտի թուլությունը։ Արտահանման և ներմուծման գլխավոր հոդվածները։ Վճարողական բալանսի պասսիվություն, պետական բյուջեյի մեծապես դեֆիցիտ։ Բանվոր դասակարգի բացառիկ ծանր դրություն, վորն ավելի յե խստանում ճգնաժամի հետևանքով։

Հիմնական տնտեսական շրջանները՝ արդյունաբերական և գյուղատնտեսական։

Արդի արտաքին և ներքին դրությունը։ Ներկա Լեհաստանը վորպես սոցիալական և ազգային հակամարտությունների կծիկ։ Իշխանության բացահայտ ֆաշիստական բնույթը, վոր յերկիրը կառավարում է փաստորեն առանց սեյմի։ Ճգնաժամի կապակցությամբ ուժեղ կերպով աճում է պրոլետարիատի, գյուղացիության և ազգային փոքրամասնությունների դժգոհությունը։ Լեհական կոմկուսը։

Հետպատերազմյան Լեհաստանը վորպես Ֆրանսիայի գործիք, վորը պիտի ծառայի ա) վորպես ԽՍՀՄ դեմ պատրաստվող ինտերվենցիայի առաջավոր ջոկատ, բ) վորպես սպառնալիք Գերմանիայի թիկունքում։ Լեհական իմպերիալիստների ձգտումը՝ ստեղծել ծովից ծով Մեծ Լեհաստան։ Հարաբերությունը ԽՍՀՄ-ի, Գերմանիայի և Լիտվայի հետ։ Դաշինք Ռումինիայի հետ և ԽՍՀՄ-ի դեմ պատերազմելու տեսական նախապատրաստություն. ռազմական նոր գործարանների, ամրոցների, ստրատեգիական յերկաթուղիների կառուցում և այլն։ Միմիանց վրա չհարձակվելու պայմանագրի կնքումը վորպես ԽՍՀՄ-ի խաղաղասիրական քաղաքականության խոշոր հաղթանակ։ Լեհաստանի ռազմական ուժերը։

IV. ՌՈՒՄԻՆԻԱ

Ներկայիս և մինչպատերազմյան Ռումինիայի սահմանները։ Մինչպատերազմյան Ռումինիայի կազմը՝ Մոլդավիա, Վալաքիա և Արևելյան Դոբրուջա. պատերազմի հետևանքով գրաված Տրանսիլվանիան՝ Ավստրո-Հունգարիայից՝ Բուքովինա, Սիլվանիա, Բանատ, Բուլգարիայից՝ Արևմտյան Դոբրուջա. Բեսարաբիայի՝ ԽՍՀՄ-ի կողմից չճանաչված ոկուպացիան։ Ազգային փոքրամասնությունները՝ մոլդավներ, հունգարացիներ, ուկրաինացիներ, բուլգարներ։ Ազգային փոքրամասնությունների բռնի ռումինացում։ Քաղաքներ՝ Բուխարեստ (մայրաքաղաք), Կոնստանցա (ռազմական նավահանգիստ), Քիշինև (Բեսարաբիայում)։

Բնական պայմանները։ Ռելյեֆը՝ Հարավային Կարպատներ, Տրանսիլվանյան Ալպեր, Դանուբի դաշտավայր (արգտմանդ վողվող հողերով)։ Գետերը՝ Դանուբն իր վտակներով։ Գյուղատնտեսության համար նպաստավոր կլիմա։ Տափաստանների գերակշռումը դաշտավայրերում և անտառները՝ լեռնային մասերում։ Ոգտակար հանածոներ՝ նավթ, քարածուխ, յերկաթ։

Տնտեսական բնութագիրը։ Ժողովրդական տնտեսության կառուցվածքը։ Արտահանության կազմը։ Գյուղատնտեսությունը։ Խոշոր կալվածատիրական (բոյարական) հողատիրություն, հողատիրության ուժեղ մնացորդներ, ագրարային հարցի սրությունը։ Ագրարային ռեֆորմը և նրա ֆիկտիվ բնույթը։ Գլխավոր գյուղատնտեսական շրջանը՝ Դանուբի դաշտավայրը։ Գլխավոր կուլտուրաները՝ ցորեն, գարի, խաղող։ Արդյունաբերության գլխավոր ճյուղերը՝ նավթ (Վալաքիա), մետաղագործության

(Տրանսբայքալիա և Բանատ), անտառային (Բուկովինա). անասնապահություն՝ գլխավորապես լեռներում. ձկնորսություն՝ Դանուբի դետաբերանում:

Ռուսերկրյա (առավելապես Ֆրանսիական) կապիտալի խոշոր դերն արդյունաբերության, հատկապես լեռնային արդյունաբերության մեջ:

Ներկա դրությունը: Ցաշխատական դիկտատուրայի դերիշխանություն, վոր մոլեգնորեն դատ և տեսնում բանվորների և գյուղացիների հետ: Սուր ճգնաժամ արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ:

Ֆրանսիայի վասալը (Լեհաստանի նման), վորի միջոցով Ֆրանսիան ինտերվենցիա յե նախապատրաստում ԽՍՀՄ-ի դեմ. Զորս ռազմական նավահանգստի, ստրատեգիական յերկաթուղիների կառուցում, բանակում Ֆրանսիական սպաների տեսչության սահմանում և այլն:

Ռումինիայի ռազմական ուժերը:

V. ՅԱՊՈՆԻԱ (5 ժամ)

Հիմնական տերրիտորիայի կազմը. չորս խոշոր կղզիներ՝ Խոկայդո, Խոնդո, Սիկոկու, Կյու-Սյու և նրանց կից՝ հյուսիսում Կուրիլյան կղզիներն ու հարավում՝ Ռյու-Կյու: Տարածությունը և բնակչությունը: Տոկիո (մայրաքաղաքը), Ոսակկա, Յոկոհամա: Ցապոնիան շրջապատող ծովերը: Կղզիական դրությունը և նրա նշանակությունը տնտեսական ու ռազմական-ստրատեգիական տեսակետից: «Առանձին հարմարություն Զինաստանը կողոպտելու» (ԼԵՆԻՆ):

Բնական պայմանները: Լեռնային ռելյեֆ: Հրաբուխներ: Յերկրաշարժներ: Կլիման — տաք ու ցուրտ ծովային հոսանքների և մուսսոնների ազդեցությունը: Զրային եներգիայով հարուստ գետերը: Համեմատաբար աղքատ և եներգիայի այլ տեսակներով և հանքային հումքով: Անտառները: Զկան ռեսուրսները:

Պատմա-աշխարհագրական ակնարկ: Մինչ 19-րդ դարի 2-րդ կեսը Ցապոնիան ֆեոդալական հողագործական պետություն էր, վոր համառորեն հրաժարվում եր առևտրական հարաբերությունների մեջ մտնել յեվրոպական և ամերիկյան կապիտալիստական յերկրների հետ:

Նավահանգիստների կիսահարկադրանքով բացումը:

Բուրժուական հեղափոխություն: Առևտրի և արդյունաբերության զարգացումը: Ցապոնիայի իմպերիալիստական զարգացման գլխավոր ետապները: Պատերազմներ Զինաստանի և Ռուսաստանի հետ: Համաշխարհային պատերազմին մասնակցելը: Ցարմոզայի, Կորեայի, Սախալինի հարավային մասի և գերմանական նախկին Միկրոնեզիայի հափշտակումը: Ինտերվենցիա ԽՍՀՄ-ում (1918—1921 թ.), ինտերվենցիա Զինաստանում, Մանջուրիայի գրավումը «անկախ» Մանջոու-Գո պետություն կազմակերպելու պատրվակով:

Տնտեսական բնութագիրը: Ցապոնիան կապիտալիզմի միջին մակարդակի զարգացման յերկիր է, կապիտալի հզոր կենտրոնացումով ու ֆեոդալիզմի ուժեղ մնացորդներով: Աղքատ և սեփական հումքով և եներգիայով: Ցապոնական իմպերիալիզմի առանձնապես ագրեսիվությունը:

Ժողովրդական տնտեսության ճյուղային կառուցվածքը: Գյուղատնտեսություն: Հողի բաշխումը: Հողագործության հիմնական դեմքը գյուղացի՝ վարձակալն է, վոր աշխատում է գաճաճային հողամասի վրա և շահագործվում կալվածատերերի, առևտրականների և վաշխառուների կողմից: Բրինձը՝ սննդի հիմնական կուլտուրա: Վոռոզումը: Շերամապահությունը՝ եքսպորտային ճյուղ համաշխարհային նշանակությամբ: Զեռքի աշխատանքի դերակշռությունը գյուղատնտեսության մեջ: Զրկնորսություն: Անտառային տնտեսություն: Արդյունաբերություն: Գլխավոր ճյուղերը—հները՝ տեքստիլ և նավաշինարարական, նորերը՝ «մեքենաշինություն, ելեկտրոտեխնիկա, քիմիա, բանվորության դաժան շահագործումը և իրավազրկությունը: Բանվորուհի կանանց կիսաստրուկ վիճակը: Ծովային տրանսպորտի խոշոր նշանակությունը: Ներմուծման և արտահանման կազմն ու ուղղությունը:

Ներքին ու արտաքին դրությունը: Ճգնաժամ (առանձնապես տեքստիլ արդյունաբերության և շերամապահության մեջ), բանվորական շարժումը, գյուղացիական ապստամբություններ: Կոմունիստական կուսակցությունը: Զինաստանի զինյալ թալանը: ՀԱՄՆ-ի հետ ունեցած հարաբերությունները: ԽՍՀՄ-ի հետ ունեցած հարաբերությունները: Ցապոնական սպառնալիքը Հեռավոր Արևելքում: Ցապոնիայի զինված ուժերը:

Ներքին և արտաքին դրությունը: Ճգնաժամ (առանձնապես տեքստիլ արդյունաբերության և շերամապահության մեջ), բանվորական շարժումը, գյուղացիական ապստամբություններ: Կոմունիստական կուսակցությունը: Չինաստանի զինյալ թալանը: ՀԱՄՆ-ի հետ ունեցած հարաբերությունները: Ցապոնական ագրեսիվը Հեռավոր Արևելքում: Ցապոնիայի զինված ուժերը:

Չինաստանի բաղկացուցիչ մասերը: Չինաստանը վոդոդոչ ծովերը և ցամաքային սահմանները:

Տարածությունը և բնակչությունը: Քաղաքներ՝ Շանհայ, Բեյպին, Նանկին, Կանտոն, Ֆանկոու, Ֆարբին:

Իմպերիալիստների կարևորագույն հենակետերը Չինաստանում՝ Դայրեն (ցապոնական) և Հոնկ-Կոնգ (անգլիական):

Բնական պայմանները: Ռելյեֆը՝ Տյան-Շան, Տիբեթի բարձրավանդակ, Նան-Շան, Մեծ Ինդան: Չինական դաշտավայրը: Կլիմայական գոտիները՝ բարեխառն, բարեխառն-տաք և մերձարևադարձային: Արևելյան Չինաստանի մուսսոնային կլիման: Անապատներ, կիսաանապատներ Արևմտյան Չինաստանում և Տիբեթում: Գետերը՝ Ֆուան-խե, Ցան-ցզի, Սին-ցզյան, Ամուր՝ Սունգարիով: Գետերի հեղեղումները: Ցանցզի գետի հատուկ նշանակությունը: Ոգտակար հանածոներ—քարածուխ, յերկաթ, անագ, ծարիր (сурьма):

Պատմա-աշխարհագրական ակնարկ: Չինական կուլտուրայի հնությունն ու լճացածությունը: Չինաստանի սարկացման գլխավոր ետապները (իմպերիալիստների կողմից): Սուն-Ցաթ-Սենը՝ Գոմինդանի հիմնադիրը և 1911-16 թ.թ. հեղափոխությունների կազմակերպիչ: Չինաստանի բաժանվելը մի շարք քաղաքական խմբավորումների: 1925-27 թ. հեղափոխությունը և բուրժուազիայի դավաճանական դերն իմպերիալիստների դեմ Չինաստանի աշխատավորության մղած պայքարում:

Տնտեսական բնութագիրը: Չինաստանը համաշխարհային իմպերիալիզմի խոշորագույն կիսագաղութ: Չինական եկոնոմիկայի ներքին բոլոր բարձունքների գրավումը իմպերիալիստների կողմից: Հողային սեփականության բաշխումը: Գյուղացիական մանր տնտեսություններ, վոր յենթարկվում են վեցապատիկ շահագործման կալվածատերերի, առևտրականների, վաշխառուների, բանկերի, գեներալ-միլիտարիստների, ոտարերկրյա իմպերիալիստների կողմից: Աննշան անասնապահություն: Ձեռքի աշխատանքի գերակշռությունը: Մարգային կուլտուրա: Վոռոգումը: Կարևորագույն կուլտուրաները.— ա) պարենային՝ բրինձ հարավում և կենտրոնում, կորեկ՝ հյուսիսում, բ) արտահանվող յուղատու բույսեր և թել՝ կենտրոնում և հարավում, ոտյա՝ հյուսիսում: Շերամապահություն (Ցապոնիայից հետո յերկրորդ տեղն և դրվում աշխարհում):

Տնային արդյունաբերության և անասնագործական արհեստների գերակշռությունը: Խոշոր մեքենայական արդյունաբերությունը ոտարերկրյա կապիտալի ձեռքին: Խոշոր արդյունաբերության գլխավոր ճյուղերը՝ տեքստիլ (բամբակագործական և մետաքսագործական), լեռնային և մետաղի: Մովային տրանսպորտ. ոտարերկրյա տոնաժի գերակշռությունը, կարևորագույն նավահանգիստները: Ցերկաթուղիները գտնվում են իմպերիալիստների ձեռքին: Ցերկաթուղիների ցանցի թույլ զարգացումը: Գետային տրանսպորտի նշանակությունը ճանապարհների բացակայության պայմաններում: Բեռնակիր տրանսպորտը արևմուտքի չոր տափաստաններում և անապատներում, մարդկային տրանսպորտը լեռնային շրջաններում:

Արտահանման ու ներմուծման կազմը և ուղղությունը: Ներմուծման մեծությունն արտահանման հանդեպ: Գաստիվ բալանս, վոր ծածկվում է չինական եմիգրանտների՝ հայրենիք փոխադրած գումարներով:

Ներքին և արտաքին դրությունը: Չինաստանը բաժան-բաժան և յեղած. Հյուսիս (Բեյպին), կենտրոն (Նանկին), հարավ (Կանտոն): Խորհրդային Չինաստան: (Ցույց տալ քարտեզի վրա): Ցապոնական ինտերվենցիան: Մանջուրիայի ոկուպացիան Ցապոնիայի կողմից, Տիբեթի ոկուպացիոն Անգլիայի կողմից:

Բնակչության լայն մասսաների քայքայումն ու աղքատացումը, վորպես հետևանք իմպերիալիստների զինված թալանի, չինական կալվածատերերի ու բուրժուազիայի շահագործման, գեներալների անվերջ կռիվների, ամբարտակների և վոռոգման կառույցվածքների կործանման և այլն: Կոմունիստական կուսակցության և խորհրդային շարժման աճումը:

Հարաբերությունը ԽՍՀՄ-ի հետ:

ԽՍՀՄ-Ի ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ի ՄԱՍ

ԽՍՀՄ-Ի ՏԵՐՐԻՏՈՐԻԱՆ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՅԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

1. ԴԻՐՔԸ, ՏԵՐՐԻՏՈՐԻԱՆ ՅԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ (3 ժամ).

1. ԽՍՀՄ-ի աշխարհագրական դիրքը:

ԽՍՀՄ-ի տերրիտորիան (21 միլիոն քառակուսի կիլոմետր): Տարածությունն արևմուտքից արևելք և հյուսիսից հարավ: Համեմատել այլ պետությունների հետ:

2. ԽՍՀՄ-ի սահմանները և նրա սահմանակից պետությունները: Ցամաքային և ծովային սահմանները, ԽՍՀՄ-ի սահմանների ֆիզիկա-աշխարհագրական բնութագիրը:

Սահմանների քաղաքական, տնտեսական և ռազմական նշանակությունը:

3. Մինչ պատերազմյան Ռուսաստանի տերրիտորիալ աճման և ծայրամասերի գաղութացման պատմական քարտեզների տեսությունը: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո սահմանների փոխվելը: Ազգերի ինքնորոշման սկզբունքը և ԽՍՀՄ-ի սահմանները:

2. ԽՍՀՄ-Ի ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ (8 ժամ)

1. ԽՍՀՄ-ի ծովերը: Նրանց ֆիզիկա-աշխարհագրական բնութագիրը և տրանսպորտային-տնտեսական նշանակությունը: Հյուսիսային բևեռային ծովագնացության պրոբլեմը և նրա լուծումը ԽՍՀՄ-ում:

2. Ռելյեֆը: Ռելյեֆի քարտեզի ուսումնասիրությունը: Ռելյեֆի հարաբերական միակերպությունը ԽՍՀՄ-ի յեվրոպական մասում, լեռները գտնվում են ծայրամասերում: Կովկասի, Միջին Ասիայի և Արևելյան ու Արևմտյան Սիբիրի ռելյեֆը: Ռելյեֆի ազդեցությունը կլիմայի, հողի և բուսականության վրա. ռելյեֆի տնտեսական նշանակությունը տեխնիկայի և սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր աստիճաններում (պարզաբանել օրինակներով):

3. ԽՍՀՄ-ի ներքին ջրերը: Ցեվրոպական մասի գետերը: Դնեպրի, Արևմտյան Դվինայի և Վոլգայի ակունքների իրար մոտ լինելը. լճային սիստեմի նշանակությունը տարբեր ծովերի ավազանների կապի տեսակետից: ԽՍՀՄ-ի յեվրոպական մասի մատնանշված հիդրոգրաֆիկ ցանցի առանձնահատկությունների ոգտագործումը տնտեսական զարգացման տարբեր ետապներում: Կովկասի, Միջին Ասիայի և Սիբիրի գետերը: Նրանց առանձնահատկությունները և գնահատումը նավագնացության, եներգետիկայի և վոռոգման տեսակետից:

4. ԽՍՀՄ-ի կլիման: ԽՍՀՄ-ի կլիմայական քարտեզների ուսումնասիրությունը: Տեղումների և ջերմության տեղաբաշխումը (առավել խոնավ, չափավոր խոնավ, սակավ խոնավ և յերաշտ վայրեր): ԽՍՀՄ-ի կլիմայական զոտիները: ԽՍՀՄ-ի հատուկ կլիմայական պրովինցիաները.—Ղրիմի հարավային ափերի միջերկրածովային կլիման, Կովկասի Սեվ-ծովափնյա Մերձարևադարձային խոնավ կլիման, Միջին Ասիայի և Արևելյան Անդրկովկասի՝ Սրալո-կասպիական տիպի չոր կլիման, Հեռավոր Արևելքի յերկրի՝ Խաղաղ ովկիանոսի ծովափնյա մուսսոնային կլիման:

Վեգետացիոն շրջանի տևողականությունը: ԽՍՀՄ-ի կլիմայի համեմատությունը Արևմտյան Ցեվրոպայի և ՀԱՄՆ-ի կլիմայի հետ: Գիտության և տեխնիկայի նվաճումները տնտեսական գործունեության վրա կլիմայի ունեցած բացասական ազդեցության դեմ պայքարելու խնդրում (վոռոգում, չորացում, վաղահաս կուլտուրաներ, վաղ ցանք, արհեստական անձրև և այլն):

5. ԽՍՀՄ-ի հողերը: Հողերի տեսակները և նրանց աշխարհագրությունը: Հողերի քարտեզի ուսումնասիրությունը: Ուղղահայաց զոնայականության շրջանների հողային զոտիները: Տարբեր հողերի տնտեսական նշանակությունը: Հանքային պարարտացման նշանակությունը տարբեր հողերի համար:

6. ԽՍՀՄ-ի բուսականությունը: Լայնության բուսական զոտիները: Ուղղահայաց զոնայականության շրջանների բուսական զոտիները: Բուսականության քարտեզի ուսումնասիրությունը: Կլիմայական, բուսական և հողային զոտիների փոխադարձ պայմանավորվածությունը: Կլիմայական, հողային և բուսական քարտեզների համեմատությունը:

7. Կարևորագույն ոգտակար հանածոների (քարածուխ, նավթ, տորֆ, յերկաթ, պղինձ) և «սպիտակ ածուխի» համառոտ

տեսությունն ըստ Խորհրդային Միության գլխավոր մասերի (Ցեվրոպական մաս, Կովկաս, Սիբիր և Միջին Ասիա)։ Ռազմական հանածոների քարտեզի ուսումնասիրություն։

3. ԽՍՀՄ-ի ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ (3 ժամ)

1. Բնակչության թիվը։ (160 միլիոնից ավելի)։ Ծնունդը և մահացությունը։

Աճման տեմպերը։ Համեմատել նախահեղափոխական Ռուսաստանի և խոշոր կապիտալիստական յերկրների հետ։

2. Բնակչության դասակարգային և պրոֆեսիոնալ կազմը։ Համեմատել նախահեղափոխական Ռուսաստանի և կապիտալիստական յերկրների հետ։

3. Քաղաքի և գյուղի բնակչությունը, նրանց հարաբերակցությունը՝ դինամիկայի մեջ։ Քաղաքների աճումը։ Սոցիալիստական նոր քաղաքներ (Մագնիտոգորսկ, Խիբինոգորսկ և այլն)։

4. ԽՍՀՄ-ի բնակչության խտությունը։ Համեմատել նախապատերազմյան Ռուսաստանի և կապիտալիստական յերկրների հետ։ Բնակչության խտության քարտեզի ուսումնասիրություն։ Բնակչության մաքսիմալ և մինիմալ խտության շրջանները։ Բնակչության տեղաբաշխման տեղաշարժերն առաջին հնգամյակում (բնակչության շարժումը դեպի արևելք)։

5. ԽՍՀՄ-ի ազգային կազմը։ ԽՍՀՄ-ի ազգագրական քարտեզի ուսումնասիրություն։

6. Կուլտուրական մակարդակի ցուցանիշները և նրանց համեմատությունը մինչպատերազմյան Ռուսաստանի հետ։

II ՄԱՍ

ԽՍՀՄ-ի ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ, ՑԵՐԿՐՆԵՐԻ ՑԵՎ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. ԽՍՀՄ-ի ՌԱՅՈՆԱՑՈՒՄԸ (5 ժամ)

Ցարական Ռուսաստանի տերրիտորիալ բաժանումը նահանգների, գավառների, գավառակների։ Այս բաժանման զուտ վարչական նշանակությունը և նրա կատարյալ անպետքությունը խորհրդային պայմաններում։

Խորհրդային իշխանության ազգային քաղաքականությունը և ազգային հանրապետությունների (դաշնակցային և ինքնավար) ու ինքնավար մարզերի կազմակերպումը։

Գլխավոր տնտեսություն և տնտեսական ռայոնացում։ Պետպլանի ռայոնացման մեջ տնտեսական մարզի հասկացողությունը վորպես արտադրողական կոմբինատ՝ համամիութենական մասշտաբի մասնագիտացմամբ։

ԽՍՀՄ-ի տերրիտորիալ բաժանման ցանցի կրկնությունը։ Հանրապետություններ՝ իրենց մարզերով (ՌՍՖՍՀ, Կազակստանի ԱՍԽՀ, Հեռավոր Արևելքի յերկիր)։

2. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ (8 ժամ)

ՄՈՍԿՎԱՅԻ ՄԱՐԶ—ԻՎԱՆՈՎՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՄԱՐԶ

Արդյունաբերական կենտրոնի յերկու մարզերի ընդհանուր գծերը.—

ա) Ամբողջ ժողովրդական տնտեսության կառուցվածքի մեջ արդյունաբերության խիստ գերակշռությունը, և տեքստիլի գերակշռումը (առաջին հնգամյակի սկզբին) արդյունաբերության կառուցվածքում։

բ) Ինդուստրացման հասարակական—պատմական գործոնները, վորոնց թվում մինչ-հեղափոխական խլոխայում գաղութային ծայրամասերի շահագործումը արդյունաբերական կենտրոնի կողմից։

Ա. ՄՈՍԿՎԱՅԻ ՄԱՐԶ

Միության արդյունաբերական մարզերից ամենաարդյունաբերականը, վորը վերջին տարիների հսկայական շինարարության շնորհիվ տեքստիլ-մեքենաշինական քիմիական մարզից վերափոխվում է մեքենա-քիմիական-տեքստիլ մարզի, մի մարզ, ուր կենտրոնացած են վորակյալ բանվորների բազմաթիվ կադրեր ու մասնագետներ և վորն առաջատար ու կազմակերպող դեր է խաղում յերկրի ինդուստրացման պրոցեսում։

ՍԱՀՄԱՆՆԵՐԸ, ԴԻՐՔԸ

Բնական պայմանները։ Մակերևույթի հարթ, թեթևակի բլրոտ բնույթը։

Գետերը՝ Վոլգան՝ Տվերցայի և Ոկան՝ Մոսկվայի ու Կլյազ-

մայի հետ: Նրանց նշանակությունը նավագնացության և ենթ-
գետիկայի տեսակետից: Տեղումների պակասելը հարավ արևմ-
մայան ուղղությամբ: Մարզի յերեք լայնության գոտիները,—
հյուսիսային՝ հարուստ անտառներով, ճահիճներով և խոնավ.
միջին՝ անցողիկ, և հարավային՝ անտառատափաստանային: Ոգ-
հանոնները,— քարածուխ մերձ մոսկովյան ավազ-
նում (նրա վերագնահատումը նոր տեխնիկայի պայմաններում),
ինում (նրա վերագնահատումը նոր տեխնիկայի պայմաններում),
սկում), շինանյութեր:

Պատմական անցյալը: Ոկա և Վոլգա գետամիջի սկզբնական
կոլոնիզացիան: Մոսկվայի ուժեղացումը և դրա պատճառները
(հաշվի առնել կենտրոնական դիրքը, արտաքին հարձակումնե-
ից պաշտպանված լինելը, ջրային ճանապարհներից ոգտվելու
հարմարությունը): Մոսկվայի առևտրական կապիտալի դերը
նրա հզորացման խնդրում: Արհեստագործությունների և արդյու
նաբերության աճումը (կապ պատմության հետ):

Բնակչությունը: Սպրդային կազմի միատարրությունը (ազ-
գային փոքրամասնություններ. հյուսիսում՝ կարելիներ, հարավ-
արևելքում՝ թաթարներ): Խտության աշխարհագրությունը:
Քաղաքային բնակչության բարձր տոկոսը վորպես հետևանք
բարձր ինդուստրացման:

Քաղաքները՝ Մոսկվա, Տուլա, Կալինին, Ռյազան, Վոսկրե-
սենսկ, Ռուբլովո, Զուևո, Կոլոմնա, Նոգինսկ, Ցեղոբսկ:

Տնտեսությունը: Ժողովրդական տնտեսության ստրուկտու-
ան և նրա փոփոխությունները հնգամյակի սկզբից՝ արդյունա-
բերության տեսակարար կշռի աճման կողմը:

Մոսկվայի մարզի արդյունաբերության տեսակարար կշիռը
ԽՍՀՄ-ի արդյունաբերության մեջ:

Մոսկվայի մարզի արդյունաբերության կառուցվածքը և նրա
կրած փոփոխությունները հնգամյակի սկզբից:

Գլխավոր ճյուղերը՝ մեքենաշինություն (ներառյալ էլեկտրա-
տեխնիկան), քիմիա, տեքստիլ. դրանց յուրաքանչյուրի տեղա-
բաշխումը: Նոր արտադրությունների յուրացում: Այլ ճյուղեր՝
վառելիքի (քարածուխ և տորֆ), փայտամշակման, շինանյութերի,
սննդի: Թեթև արդյունաբերություն, նրա հիմնական ճյուղերը և
շրջանները: Մոսկվայի՝ վորպես արդյունաբերական կենտրոնի
դերն ու նշանակությունը: Մոսկվայի արդյունաբերության կա-
ռուցվածքի առանձնահատկությունները: Վառելիքի բալանսը, վեր-

ջին տարիներին նրա կրած փոփոխությունները՝ սեփական վա-
ռելիքի տեսակարար կշռի աճման ուղղությամբ: Էլեկտրիֆիկա-
ցիա: Տեղական վառելիքով գործող կայաններ:

Գյուղատնտեսության կառուցվածքը: Հորդանտեսությունների շինարարությունը և կոլեկտիվացման ընթացքը: Վարելահողեր, կուլտուրաներ, անասունների տեսակներ: Գյուղատնտեսական հիմնական գոտիներ՝ ա) հյուսիսը՝ վուշի մշակում և կաթնատու անասնաբուծություն, բ) միջինը՝ բանջարեղենի-կարտոֆիլի, անասնաբուծության ուղղությամբ, գ) քաղաքամերձ գոտի՝ Մոսկվայի շուրջը—բանջարեղենի-հատապտղի և կաթնային տնտեսության ուղղությամբ, դ) հարավը՝ հացահատիկային հողագործություն և թռչնաբուծություն:

ԱՆՏԱՌԱՑԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հաղորդակցության ճանապարհները՝ յերկաթուղային և ջրային: Յերկաթուղային և ջրային ճանապարհների խաչաձևման կետեր: Մոսկվան վորպես խոշորագույն յերկաթուղային հանգույց և ոդային գծերի կենտրոն (ոդակայան): Մոսկվայի յերկաթուղային հանգույցի էլեկտրիֆիկացման աշխատանքները, Մոսկվա գետը Վոլգայի և Կլյազմայի հետ միացնելու և Մոսկվայի ու Դոնբասի կապն ուժեղացնելու աշխատանքները (Մոսկվա-Դոնբաս գերմագիստրալը): Մոսկվայի մարզի արտաքին ապրանքափոխանակման կապերը: Ներմուծման և արտահանման կազմը: Արտամարզային հիմնական բեռների հոսանքը: Մոսկվայի մարզի ապրանքափոխանակության ունիվերսալ և լայն կապերը: Մոսկվայի մարզը վորպես ինդուստրացվող ծայրամասերի վորակյալ բանվորական ուժ մատակարարող: Մոսկվան վորպես տրանսպորտի, բաշխման, արդյունաբերական, հասարակական-քաղաքական, կազմակերպչական-տնտեսական, գիտական և կուլտուրական կենտրոն: Մոսկվայի նշանակությունը յուր մարզի և ամբողջ Միության համար: Մոսկվայի մարզի տնտեսության վերակառուցման հիմնական ուղիները՝ ա) ենթադետիկ բազայի ամրացումը սեփական էներգիայի ռեսուրսների ուժեղացրած ոգտագործմամբ, բ) մարզը տեքստիլ-մեքենա-քիմիականից մեքենաշին—քիմիական-տեքստիլի վերափոխվելը, գ) գյուղատնտեսական գծով մարզը սպառողի դրությունից արտադրողի վերափոխելը:

Առաջին հնգամյակի նվաճումները: Մերձ-մոսկովյան քարածխի արտադրանքի ուժեղացում: Էլեկտրոկայանների կարողության ուժեղացումը: Տուլայի հանքով ու լոմով սեփական մետաղագործական բազայի զարգացում: Մեքենաշինության («Ստալինի անվան ավտոգործարան, «Շարիկոսոդշիպնիկ» և այլն), քիմիական արդյունաբերության (Բոբրիկովի կոմբինատ, Վոսկրեսենսկի) և շինանյութերի արդյունաբերության զարգացում: Յուրացում (освоение) մի շարք նոր արդյունաբերական ճյուղերի, որոնք կարևոր են ռազմարդյունաբերության տեսակետից: Գյուղատնտեսության (Կաշիրի շրջան) և յերկաթուղային տրանսպորտի (մերձ քաղաքային հաղորդակցություն) ելեկտրիֆիկացման սկիզբը: Կոլեկտիվացման աճում, ՄՏԿ-ների և խորհտնտեսությունների շինարարություն: Գյուղատնտեսության մեքենայացման աճում: Ցանքի տարածության և տեխնիկական կուլտուրաների (հատկապես վուշի) ու ցանովի խոտի տեսակարար կշռի աճում:

Զարգացման հիմնական գծերը յերկրորդ հնգամյակում:

Բ. ԻՎԱՆՈՎՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՄԱՐԶԸ

Հին արդյունաբերական մարզ՝ տեքստիլի խիստ աչքի ընկնող մասնագիտացմամբ. մարզը ներկայումս զարգանում է յերկու ուղղությամբ՝ ա) նոր ճյուղերի (մասամբ կապված տեքստիլի հետ)— մեքենաշինարարության (առանձնապես տեքստիլի), ռետինի, քիմիական, բ) հին՝ տեքստիլ մասնագիտության խորացման ու ամրապնդման ուղղությամբ:

ՍԱՀՄԱՆՆԵՐԸ, ԴԻՐՔԸ

Բնական պայմանները: Մակերևույթը դաշտավայր՝ թույլ բլրավորմամբ:

Գետերը՝ Վոլգան յուր ձախակողմյան՝ Մալոյա, Շեկսնա, Կոստրոմա, Ունժա վտակներով: Գետերի նշանակությունը մարզի տնտեսության զարգացման տեսակետից, Հյուսիս-արևելյան ուղղությամբ հողա-կլիմայական պայմանների վատանալը հացաճակատային հողագործության համար: Բնական տարբերությունները Վոլգայի աջափնյա և ձախափնյա մասերի միջև:

Ողտակար հանածոներ՝ տորֆ, ֆոսֆորիտներ:

Պատմական անցյալը: Մարզի սկզբնական բնակեցումը: Նրա վաղ ինդուստրացման պատճառները: Վոլգայով վեր ու վար ջրային կապի նշանակությունը մարզի ինդուստրացման համար: Ցուր սեփական հումքից (վուշ) բերովի հումքի (բամբակ) անցնելը:

Բնակչություն: Բնակչության խտության խիստ տարբերությունը աջ ու ձախ ափերի միջև: Քաղաքները՝— Իվանովո-Վոզնեսենսկ, Յարոսլավլ, Կոստրոմա, Կինեշմա, Շույա, Վլադիմիր:

Տնտեսություն: Իվանովոյի արդյունաբերական մարզի ժողովրդական տնտեսության կառուցվածքը: Իվանովոյի արդյունաբերական մարզի արդյունաբերության տեսակարար կշիռը ՎՈՂՍ Միության արդյունաբերության մեջ:

Իվանովոյի արդյունաբերական մարզի խոշոր արդյունաբերության կառուցվածքի համեմատությունը Մոսկվայի մարզի հետ:

Հին հիմնական ճյուղերը՝ բամբակագործական և վուշագործական: Նրանց տեղաբաշխումը: Ճյուղեր, որոնք սպասարկում են տեքստիլ արդյունաբերությանը՝ կրախմալպատոկի, քիմիական, տեքստիլ-մեքենաշինական: Այլ ճյուղեր՝ տորֆի, անտառային, փայտամշակման, թղթի, ոնդի, նավաշինարարական: Ապակու արդյունաբերություն: Կաշուդինի պղնձամշակման գործարան: Ավտո գործարան, ռետինի կոմբինատ Յարոսլավլում:

Թեթև արդյունաբերություն, նրա կապը ծանր արդյունաբերության հետ, կարևորագույն ճյուղերը և շրջանները: Մարզի հիմնական արդյունաբերական վայրը (Վոլգայի աջ ափը Յարոսլավլից հարավ): Մոսկվայի համեմատությամբ արդյունաբերությունն ավելի համաչափ և տեղաբաշխված մարզում:

Վառելիքի բալանսը: Ելեկտրիֆիկացիա (Յարոսլավլի և Իվանովո-Վոզնեսենսկի կայանները):

Գյուղատնտեսության կառուցվածքը: Մասնագիտացում վուշի, կարտոֆիլի, բանջարեղենային կուլտուրաների գծով (Ռոստովի մոտ), կաթնատու անասնապահության գծով (առանձնապես ավելի արդյունաբերական մասում), հացահատիկային հողագործության գծով (սեռահողակերպ հողերում՝ հարավ-արևմտյան մասում):

Հաղորդակցության ճանապարհները՝ յերկաթուղային և ջրային. յերկաթուղիների և ջրային ուղիների խաչաձևման կետերը: Վոլգյան ուղու նշանակությունը մարզի համար: Ձախ ափի ճանապարհներից զուրկ լինելը:

ՄԱՐԶԻ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ

Առաջին հնգամյակի նվաճումները։ Բամբակի («Կրասնայա Տալկա», «Ֆելիքս Ձերժինսկի», «Մելանժևից կոմբինատ») և վուշի նոր տեքստիլ գործարանների կառուցում։ Մեքենաշինության (հատկապես տեքստիլ և տորֆի) զարգացում։

Ռետինի–ազբեստի կոմբինատ Ցարոսլավլում։ Նավաշինարարություն (Ռիբինսկում)։ Ցանքի տարածության աճում և վուշի տեսակարար կշիռը։ Վուշի հզոր խորհտնտեսությունների շինարարություն։

Զարգացման հիմնական գծերը յերկրորդ հնգամյակում։

3. ԽՍՀՄ–Ի ՑԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՍԻ ՀՅՈՒՍԻՍԸ (5 ժամ)

ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ՄԱՐԶԸ՝ ԿԱՐԵԼԻԱՅԻ ԱՍԽՀ–Ի ՀԵՏ, ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՑԵՐԿԻՐԸ՝ ԿՈՄԻ ԱՎՏՈՆՈՄ ՇՐՋԱՆԻ ՀԵՏ

Ընդհանուր ներածություն։ Լենինգրադի մարզի և Հյուսիսային Ցերկրի նման կողմերը՝ բնական պայմանների տեսակետից (յերկուսն էլ պատկանում են միևնույն տունդրաների ու տայգաների գոտուն, ունեն առատ անտառներ և ջրային առատ աղբյուրներ։ Եկոնոմիկայի նման կողմերը (հողագործության ցածր և անտառագործության բարձր նշանակությունը)։

ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ՄԱՐԶԸ ՑԵՎ ԿԱՐԵԼԻԱՅԻ ԱՍԽՀ

Մարզ՝ ստեղծված Լենինգրադի շուրջը, մի կետի, վորն իր բացառիկ նպաստավոր դիրքի շնորհիվ դարձել է «պատուհան դեպի Ցեվրոպա» և, սոցիալիստական վերակառուցման ժամանակաշրջանում՝ արդյունաբերական ֆոնդերի կուտակման ու պրոլետարիատի բարձրորակ կադրեր ունենալու հիման վրա՝ Մոսկվայի մարզի հետ միասին դարձել և ինդուստրացման ոջախ նոր, ավելի բարդ արտադրությունների (առաջին հերթին պատասխանատու մեքենաշինության) յուրացման կենտրոն և նոր կառուցվող գիգանտներին մեքենաներ ու բարձրորակ բանվորական ուժ մատակարարող բազա։

ՍԱՀՄԱՆՆԵՐԸ, ԴԻՐՔԸ

Բնական պայմանները։ Ռելյեֆը։ Խիբիններ։ Վարդայան բարձրություն։ Հին սառցադաշտերի ազդեցությունը և նրանց հետքերը։ Լճերը՝ Լադոգայի, Ոնեգայի, Սպիտակ, Իլմեն, Իմանդրա։ Գետերը՝ Նևա, Վոլխով, Սվիր։ Ջրանցքների Մարիինյան սիստեմը։ Նոր՝ Բալթիկ–Սպիտակ ծովի ջրային ուղի։ Ներքին ջրերի նշանակությունը նավագնացության և եներգետիկայի տեսակետից։

Ոգտակար հանածոները՝ տորֆ, չունգիտ, թերթաքարեր, յերկաթ, չինանյութեր։ Խիբինի ապատիտները և նեֆելիտները։ Նրանց նշանակությունը։ Բարովիչի շրջանը և նրա նշանակությունը։

Տերբիատրիայի յերեք մասերը՝ Լենինգրադի մարզի հարավը, Կարելիա և Կոլա թերակղզի։ Այդ մասերի բնության տարբերությունները։

Պատմա–աշխարհագրական ակնարկ։ Մեծ Նովգորոդը։ Նրա առևտրական նշանակությունը։ Նրա գաղութները Լենինգրադի մարզի և Կարելիայի տերրիտորիայի վրա։ Գաղութացման ուղիները։ Մոսկվայի կռիվները՝ դեպի Բալթիկ ծովը յելք ձեռք բերելու համար։ Պետերբուրգի հիմնումը և Ջրանցքների կառուցումը Վոլգայի հետ միանալու համար։ Պետերբուրգի արդյունաբերության զարգացումը ներմուծվող հումքի մշակմամբ։

Բնակչությունը։ Ազգային փոքրամասնությունները և նրանց տեղաբաշխումը։ Կարելների կենցաղն ու կուլտուրան։ Խտության աշխարհագրությունը։ Քաղաքները՝ Լենինգրադ, Նովգորոդ, Պսկով, Պետրոզավոդսկ, Խիբինոգորսկ, Մուրմանսկ։

Տնտեսությունը։ Մարզի հիմնական մասնագիտացումը և այդ մասնագիտացման տնտեսա–աշխարհագրական ու պատմական հիմունքները։ Լենինգրադի յուրօրինակ դիրքը ծովային և գետային ուղիների հանդիպման տեղում։ Լենինգրադում տեղավորված արդյունաբերական կառուցվածքը։ Լենինգրադի արդյունաբերության խիստ կենտրոնացման պատճառները։ Լենինգրադի ղեկավար դերն առաջավոր տեխնիկայի գոյացման և այդ տեխնիկան նոր ռայոններին պատվաստելու առաջարկում։

Լենինգրադի նշանակությունը վորպես արտասպորտային հանգույցի, վորպես արդյունաբերական կենտրոնի, վորպես պատասխանատու մեքենաշինության ու ամենավորակավոր պրոլետարիատի կենտրոնի, վորպես գիտության և կուլտուրայի կենտրոնի։

Լենինգրադի ռազմա–ստրատեգիական նշանակությունը։ Լենինգրադից դուրս յեղած արդյունաբերական ճյուղերը, վորոնք

աշխատում են տեղական հումքով (քիմիա, ալյումինի արդյունաբերություն և այլն)։

Գյուղատնտեսության հիմնական ճյուղերը և նրանց տեղաբաշխումը մարզում։ Գոտիները՝ վուշի, անասնաբուծության, անտառային և մերձքաղաքային։ Կոլեկտիվացում, խորհրդատնտեսական շինարարություն։ Անտառային տնտեսության բնույթն ու նշանակությունը։

Առաջին հնգամյակում էլեկտրիֆիկացիայի, արդյունաբերության զարգացման (առանձնապես մեքենաշինության, էլեկտրոտեխնիկական, քիմիական, թղթի) ասպարիզում կատարված հիմնական տեղաշարժերը։ Կոլեկտիվացում և գյուղատնտեսության վերելքը։

Կարելիայի տնտեսության բնութագրումը և նրա տեղաշարժերն առաջին հնգամյակում (անտառային տնտեսություն, էլեկտրիֆիկացիա)։

Կարելիան — լճերի, քարի և անտառի երկիր։ Ոգտակար հանածոներ և սպիտակ ածուխ։ Գյուղատնտեսական տարածության չնչին տեսակարար կշիռը։ Անտառային տնտեսություն, վորսորդություն, ձկնորսություն, արտաղնացություն։ Մուրմանի երկաթուղին։ Հիդրոկայանների, սղոցարանների շինարարություն, նոր՝ Բալթիկ-Սպիտակ ծովի ջրանցքը։

Կոլա թերակղզու տնտեսության բնութագիրը։ Ֆիբինի ստատոխոնները ու նեֆելինները և նրանց ոգտագործումը։

Զարգացման հիմնական գծերը յերկրորդ հնգամյակում։

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՅԵՐԿԻՐ՝ ԿՈՄԻ ՄԱՐԶԻ ՀԵՏ

Միության «վայրուտային ցեխ» — ԽՍՀՄ-ի անտառային արդյունաբերության և անտառանյութերի եքսպորտի շրջան, վորն իր անտառանյութերն արտաքին շուկաներն արտահանելու միջոցով վայրուտա յի ձեռք բերում մեր յերկրի ինդուստրացմանն անհրաժեշտ արտասահմանյան բարդ սարքավորումների համար։

Սահմանները (ինչո՞վ են վորոշվում արևելյան և հարավային սահմանները)։ Դիրքը։ Հյուսիսային բևեռային ծովի կղզիները։ Բնական պայմանները։ Ռելյեֆը։ Կլիման։ Հյուսիս-արևելյան ուղղությամբ կլիմայի խստանալը։ Հիմնական գոտիները՝ տայգա, տունդրա, նրանց միջև յեղած սահմանը։ Անտառների տեսակն ու վորակը, նրանց տեղաբաշխումը։ Լճեր և գետեր՝ Ոնեգա, Հյուսիսային Դվինա՝ Վիչեգդայով և Պինեգայով, Մեզեն, Պեչորա։ Գետերի նշանակությունը հյուսիսային յերկրի համար։

Ոգտակար հանածոներ։ Տորֆ, քարածուխ, գրաֆիտ, գունավոր մետաղներ, նավթ (Ուխտա)։

Պատմա-աշխարհագրական ակնարկ։ Նովգորոդից և Մոսկվայից դեպի հյուսիսային յերկիր տեղի ունեցած գաղթի ուղղությունները։ Հյուսիսային յերկրի տերբիտորիայի վրայով դեպի Սիբիր տանող հին ճանապարհները։ Արխանգելսկը վորպես մոսկովյան Ռուսաստանի միակ ծովային նավահանգիստը 16-րդ դարի վերջից մինչև 18-րդ դարի սկիզբը։ Սիբիր տանող ճանապարհների փոխադրվելը դեպի հարավ, Արխանգելսկ նավահանգստի անկումը Պետերբուրգի հիմնադրումից հետո։ Հյուսիսի թալանը։ Անտառային տնտեսության զիշատիչ բնույթը նախահեղափոխական շրջանում։

Բնակչությունը։ Ազգության աշխարհագրություն։ ազգային փոքրամասնություններ՝ կոմիներ, նենցիներ։ Նրանց կենցաղը, կուլտուրան և տեղաբաշխումը։ Կոմի ավտոնոմ մարզը և նենցիների շրջանը։ Քաղաքները՝ Արխանգելսկ, Վոլոգդա, Կոտլաս, Սիկտիվկար։

Տնտեսությունը։ Հյուսիսային յերկրի հիմնական մասնագիտացումը՝ «եքսպորտի անտառանյութ»։ Այդ մասնագիտացման ծագումը և հյուսիսային յերկրի սահմանների կապը դրա հետ։ Ճանապարհներից գուրկ լինելը։ Հյուսիսային յերկրի նշանակությունը, վորպես Միության «վայրուտային ցեխ»։ Անտառների բնութագիրը և անտառային արդյունաբերության տեղաբաշխումը։ Անտառամթերման և անտառանյութերի արտահանման հսկայական աճումն առաջին հնգամյակում։ Անտառային տնտեսության վորակական ցուցանիշների բարելավում, անտառաշինարարություն, համատարած անտառահատման ընդարձակում, մեքենայացում (համեմատել ձեռքի և մեքենայացված հատման տեխնիկո-տնտեսական ցուցանիշները), փայտատար գետերի կանոնավորում, փայտատար ճանապարհներ, նոր սղոցարանների, փայտաթղթի գործարանների կառուցում, բնափայտի լրիվ ոգտագործում։ Գյուղատնտեսության հիմնական ճյուղերը և նրանց տեղաբաշխումը։ Գյուղատնտեսության կոլեկտիվացումը։ Այլ ճյուղեր՝ տնայնագործություն, յեղջերվապահություն, վորսորդություն, ձկնորսություն։

Հաղորդակցության ճանապարհներ։ կապը Պեչորայի յերկրի

հետ: Հյուսիսային ծովային ճանապարհը և նրա նշանակությունը Հյուսիսային յերկրի համար: Նավահանգիստները:

Զարգացման հիմնական գծերը յերկրորդ հնգամյակում:

4. ԽՍՀՄ-Ի ՑԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՍԻ ԱՐԵՎՄՈՒՏՔԸ (5 ժամ)
ԲԵԼՈՌՈՒՍԻԱՅԻ ՍԽՀ ՑԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՐԶ

Ընդհանուր ներածություն: Արևմտյան մարզի և Բելոռուսիայի ՍԽՀ-ի նմանությունը՝ ըստ բնական պայմանների (կլիմայի համեմատական մեղմություն և խոնավություն, խառն անտառների շրջան, զգալի ճահճացում, տորֆի, վորպես եներգիայի աղբյուրի առկայություն), ըստ հասարակական-պատմական պայմանների («վարյագներից դեպ հույները» տանող ճանապարհի վրա գտնվելը, ապա Մոսկվայի ու Լենինգրադի ճանապարհների վրա լինելը, ռուս-լեհական կոնֆլիկտների թատերաբեմ, լեհական կուլտուրայի ազդեցությունը) և ըստ անտեսական պայմանների (ցարական Ռուսաստանի կազմում արդյունաբերական կենտրոնների՝ Մոսկվայի, Լենինգրադի և Մերձբալթյան շրջանի մեջտեղ գտնվելը, արդյունաբերության թույլ զարգացումը հնգամյակի սկզբին, համեմատաբար ինտենսիվ անտեսություն՝ վուշի, կանեփի, ցանովի խոտերի մշակումով և անասնապահության արտադրանքով):

ԲԵԼՈՌՈՒՍԱԿԱՆ ԽՍՀ

Բելոռուսական ԽՍՀ-ն մեր ամենալանդավոր ճակատամասի՝ Արևմուտքի ֆորպոստն է. ուստի և մեզ համար առանձնապես կարևոր են նրա հաջողություններն ինդուստրացման գծով, գյուղատնտեսության ինտենսիֆիկացիայով և ազգային-կուլտուրական շինարարությամբ:

Սահմանները: Լենինգրադի հետ ունեցած սահմանի առաջնակարգ ստրատեգիական նշանակություն: Դիրքը:

Բնական պայմանները: Հյուս. մասում խիստ մորենային ռելիեֆ: Գետերը՝ Դնեպրը՝ Բերեզինա, Սոժ, Պրիպյատ, Դեսնա վտակներով, Նեման, Արևմտյան Դվինա: Համեմատաբար մեղմ ու խոնավ կլիմա: Լայնատերև անտառների գերակշռությունը (բացի հյուսիս-արևելյան անկյունից): Ուժեղ ճահճացում (Պինի ճահիճները): Ոգտակար հանածոները՝ տորֆ, շինանյութեր:

Բնակչությունը: Դերակշռող ազգության՝ բելոռուսների տեղավորման սահմանները: Բելոռուսիայի սահմանամերձ այն վայրը, վորը դրավել է Լենինգրադը: Ազգային փոքրամասնություններ (ռուսներ, ուկրաինացիներ, հրեաներ, լեհեր): Քաղաքները՝ Մինսկ, Վիտեբսկ, Գոմել:

Տնտեսությունը: Գյուղատնտեսության ինտենսիֆիկացմանը նպաստող գործոններ: Կարտոֆիլը և խոզաբուծությունը վորպես գյուղատնտեսության հիմնական ճյուղ: Այլ ճյուղեր՝ վուշի մշակություն, կանեփի մշակություն, կաթնատնտեսություն, թռչնաբուծություն, այգեգործություն: Անտառային տնտեսություն:

Արդյունաբերություն՝ սնունդ-համի, փայտամշակման, թղթի, վուշի, մանվածքի, կաշու, շինանյութերի: Տրանսպորտը և արտաքին կապերը:

Առաջին հնգամյակի նվաճումները: Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցում: Ցանքի տարածության ընդարձակում՝ ճահիճների չորացման հաշվին. կերի, տեխնիկական բույսերի և կարտոֆիլի տեսակարար կշռի աճում: Արդյունաբերության արագ աճում (տեքստիլ-բամբակագործական, գյուղատնտեսական մեքենաշինական և այլն): Ոսինովի տորֆով գործող շրջանային ելեկտրակայանը: Ազգային-կուլտուրական շինարարություն: Այդ նվաճումների առանձնակի նշանակությունը: Համեմատություն անդրսահմանյան Բելոռուսիայի հետ:

Զարգացման հիմնական գծերը յերկրորդ հնգամյակում:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՐԶ

Մթության վուշա-կանեփագործության հիմնական բազա. անասնապահության և անտառարդյունաբերության աչքի ընկնող շրջան. տորֆային կներգիայի խոշորագույն պաշարների առկայություն, վորն ապահովում է գյուղատնտեսության ինդուստրացման և ինտենսիֆիկացման հնարավորությունները:

ՍԱՀՄԱՆՆԵՐԸ, ԴԻՐՔԸ

Բնական պայմանները: Հին սառցադաշտերի ազդեցությունը, նրանց հետքերը: Գետերը՝ Վոլգա, Արևմտյան Դվինա, Դնեպր (բոլոր յերեքն էլ միայն վերին հոսանքներով): Մոսկվայի համեմատությամբ ավելի մեղմ և խոնավ կլիմա: Անտառները, ճահիճները: Ոգտակար հանածոները՝ տորֆ, ֆոսֆորիտներ, շինանյու-

թիը, քարածուխ (Մերձ-Մոսկովյան ավազանի արևմտյան ծայրը Ժիգուլիի մոտ), յերկաթ (նույն տեղում):

Քաղաքները՝ Սմոլենսկ, Բրյանսկ, Ռժև:

Տնտեսությունը: Արդյունաբերության զարգացումը կատեցնող և ինտենսիվ գյուղատնտեսության զարգացմանը նպաստող գործոններ: Ճանքերի տարածության մեջ վոչ հացահատիկային կուլտուրաների (առանձնապես վուշի և ցանովի խոտերի) տեսակարար կշիռը: Վուշի, կանեփի և կաթնատու անասնապահության չրջանները. նրանց տեղաբաշխումը. իրենց արտադրանքը մարդի սահմաններից արտահանող ճյուղեր՝ մեսաղաղործական (Բրյանսկի մոտ), վուշի մշակում, թղթի և յուցկու արդյունաբերություն: Խոշոր արդյունաբերական կենտրոնները՝ Բրյանսկ, Ցարցևո, Գլինցի: Տրանսպորտ և ագրանքափոխանակային կապեր այլ մարզերի հետ:

Առաջին հինգամյակի նվաճումները: Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցում և ցանքի տարածության աճում՝ ճահիճների չորացման հաշվին. վոչ հացահատիկային կուլտուրաների, առանձնապես վուշի և ցանովի խոտերի խիստ աճում. վուշի գործարաններ: Բրյանսկի ելեկտրոկայանը. մեսաղաղործական և չինանյութերի արդյունաբերության աճում. Բրյանսկ—Վյազմա գիծը:

Զարգացման հիմնական գծերը յերկրորդ հնգամյակում:

5. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՍԵՎԱՀՈՂԱՅԻՆ ՄԱՐԶ (3 ժամ)

Կենտրոնական սևահողային մարզը, տնտեսության սոցիալիստական վերակառուցման հետևանքով, հետամնաց, զուտ գյուղատնտեսական ոլորտից՝ յեռադաշտի ճգնաժամով, գյուղացիական չքավոր մասսաների «աղքատացումով» ու չքավորությամբ,—վերափոխվում է ագրարային-ինդուստրիալ կոմբինատի, համատեղելով ինտենսիվ գյուղատնտեսությունը (չաքար, ճակնդեղ, կարտոֆիլ, արևածաղիկ, ծխախոտ, խոզաբուծություն, թռչնաբուծություն և այլն). գյուղատնտեսական հումքը վերամշակող արդյունաբերության և ծանր արդյունաբերության մի շարք ճյուղերի հետ (սև մետաղաղործություն, գյուղատնտեսական ու տրանսպորտի մեքենաշինություն և այլն):

ՍԱՀՄԱՆՆԵՐԸ, ԴԻՐՔԸ

Բնական պայմանները: Ռելյեֆը: Միջին-ռուսական բարձրություն: Հեղեղատների (оврагов) խիստ զարգացած: Գետերը՝

Ոկա՝ Ցնա վտակով, Դոն, Սեյմ: Նրանց նշանակությունը նավարկելիության և եներգիայի տեսակետից: Տեղումների նկատելի նվազումը դեպի հարավ-արևելք: Հողերը: Ցերկաթ (Լիպեցկ): Կուրսկի մագնիսային անոմալիա, ֆոսֆորիտներ (Շչիգրի), չինանյութեր:

Պատմական անցյալը: Կենտրոնական սևահողային մարզը մինչռեֆորմյան Ռուսաստանում վորպես Մոսկվայի չտեմարան և ուժեղ կերպով զարգացած կալվածատիրական հողատիրության ոլորտի չրջան: 1861 թ. ռեֆորմի կիրառումը կենտրոնական սևահողային մարզում (հողաճոթեր, հետղնման բարձր վճարումներ, աշխատավճարումներ, ստրկական վարձակալություն): Կենտրոնական սևահողային մարզի վրայով՝ Մոսկվայից դեպ Ուկրաինայի «ազատ» տափաստանները, Հյուսիսային Կովկաս և Անդրվոլգա անցնող յերկաթուղիների ազդեցությունը:

Մինչ հեղափոխական պայմաններում Մոսկվայի և Դոնբասի միջև յեղած մրցումը, վորպես արդյունաբերության զարգացման խոչընդոտ:

Կենտրոնական սևահողային մարզի աղքատացումը:

Բնակչությունը: Բնական ընթացքը հյուսիս-հարավ: Խտությունը և նրա փոփոխությունները մարզի սահմաններում: Գյուղերի մարդաշատության աճումը հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք: Քաղաքների թույլ զարգացումը վորպես հետևանք արդյունաբերության թույլ զարգացման: Կենտրոնական սևահողային մարզի քաղաքները և նրանց բնույթը. Վարոնեժ, Կուրսկ, Որյոլ, Տամբով, Կոզլով, Լիպեցկ:

Տնտեսությունը: Ժողովրդական տնտեսության կառուցվածքը: Գյուղատնտեսության և արդյունաբերության փոխհարաբերության փոխվելը վերջին տարիներին: Գյուղատնտեսության մեջ հողագործության գերակշռումը՝ հանդեպ անասնապահության: Հողատեսքերի կառուցվածքը: Ցանքի տարածությունների կառուցվածքը: Տեխնիկական կուլտուրաները և պրոդուկտիվ անասնապահության տեսակները: Նրանց տեղաբաշխումը: Գյուղատնտեսության մասնագիտացումն ըստ ոլորտների:

Կոլեկտիվացման առանձնապես կարևոր նշանակությունը կենտրոնական սևահողային մարզի համար՝ հողաբաժինների քաղաքիկ մանրության և անհատական գյուղացիական տնտեսությունների սակավազորության պատճառով:

Գյուղատնտեսական արդյունաբերություն, նրա տեսակները

և տեղաբաշխումը: Մետաղագործություն: Լիպեցկի գործարանը: Վարոնեժի սինթետիկ կաուչուկի գործարանը: Գյուղատնտեսական մեքենաշինություն: Ֆոսֆորիտների վերամշակում: Ենթադետիկ բազայի թուլությունը:

Ցերկաթուղիները: Նրանց տրանզիտային (կենտրոնական ուվահողային մարզի նկատմամբ) բնույթը: Զրային տրանսպորտի աննշանությունը: Ապրանքա-փոխանակման կապերը մյուս մարզերի հետ:

Առաջին հնգամյակի նվաճումները: Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցում: Տեխնիկական կուլտուրաներին տրվում (բացարձակ ու հարաբերական իմաստով): Խոտաբուծության, թռչնաբուծության և կաթնատու անասնապահության զարգացում: Գյուղատնտեսության ինդուստրացում: Ցեռաղաչոի միկրոդաշտ: Բաղմաղաչոի, խոտացանության, սերմի զոմանու տեսակավորման, վաղաժամ հերկի և այլն արմատացում:

Զարգացման հիմնական գծերը յերկրորդ հնգամյակում:

ՈՒՍՄԱՆ ՑՈԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

6. ՊԱՎՈԼԺՅԵ (7 ժամ)

Գորկու յերկիր՝ Զուվաշական ԱՍԽՀ-ի, Ուդմուրդական ավտոնոմ մարզի և Մարիների ավտոնոմ մարզի հետ: Թաթարական ԱՍԽՀ-ի միջին Վոլգայի յերկիր՝ Մորդվայի ավտոնոմ մարզի հետ: Ստորին Վոլգայի յերկիր՝ Գերմանացիների ԱՍԽՀ և Կալմիկների ավտոնոմ մարզի հետ:

Ընդհանուր ներածություն: Վոլգան վորպես հզոր ճանապարհ, վորը դեպի երեն և քաշում բնակչությունը և եկոնոմիկան ու այդպիսով հանդիսանում մի «տանցք», վորի շուրջը կազմվում են տնտեսական ռայոններ: Վոլգայի գլխավոր բեռնահոսանքները: Վոլգան վորպես սահման: Վոլգայի աջ և ձախ ափերի բնական և հասարակական – պատմական տարբերությունները: Ձախ ափի ավելի ուշ բնակումը, բնակչության սակավ խտություն, յերկաթուղիների ցանցի նոսրություն և անցյալում կալվածատիրական հողագործության թույլ զարգացում:

ԳՈՐԿՈՒ ՑԵՐԿԻՐ՝ ԶՈՒՎԱՇԱԿԱՆ ԱՍԽՀ-Ի, ՈՒԴՄՈՒՐԴԱԿԱՆ ՑԵՎ ՄԱՐԻՆԵՐԻ ԱՎՏՈՆՈՄ ՄԱՐԶԵՐԻ ՀԵՏ

Անցյալում ծայրահեղ հետամնաց, կիսանատուրալ տիպի, անտառահողագործական ռայոն՝ զուրկ խոշոր արդյունաբերությունից (բացի Գորկուց) և հացահատիկով դեֆիցիտային գյուղատնտեսական յերկիր, դեֆիցիտ, վորը պատճառ է հանդիսացել զարգացման, այժմ, շնորհիվ սոցիալական անայնագործության զարգացման նոր պայմանների, իր հումքային ռեսուրսների ռացիոնալ ոգտագործման և դիրքի հարմարության, դառնում է մետաղա-անտառա-քիմիական արդյունաբերության և վուշա-կաթնային գյուղատնտեսության ռայոն:

Սահմանները: Արդյունաբերական կենտրոնի և լեռնագործական Ուրալի միջև յեղած դիրքը:

Բնական պայմանները: Հյուսիսային Ռավալները՝ վորպես Ջրարաժան Հյուսիսային – բևեռային ծովի և Վոլգայի ավազանների միջև: Գետերը՝ Վոլգա—Կամա, Վյատկա և Վեսլուգա վտակներով: Կլիմայի խստանալը հյուսիս-արևելքի ուղղությամբ: Աջ և ձախ ափերի տարբերությունները ըստ հողի և ըստ բուսականության: Անտառները: Ոգտակար հանածոները — յերկաթ, ֆոսֆորիտներ, տորֆ, թերթաքարեր:

Պատմական անցյալը: Նիժնի-Նովգորոդը վորպես հենակետ մոսկովյան նվաճումները դեպի արևելք տարածելու համար: Վյատկա գետի ավազանի գաղութացման ճանապարհները: Նիժնի-Նովգորոդի զարգացումը վորպես Մոսկվայի առաջավոր նավահանգիստ Վոլգայի վրա, վորպես Վոլգայի նավաշինարարության կենտրոն, վորպես առևտրա-արդյունաբերական կենտրոն (Նիժնի-Նովգորոդի տոնավաճառը):

Բնակչությունը: Խտության աշխարհագրությունը և նրա հետևությունն անտառատնտեսության աշխարհագրության հետ: Ազգային կազմը՝ չուվաշներ, մարիներ, ուդմուրդներ. նրանց կենցաղը և կուլտուրան: Ազգային ավտոնոմիաներ՝ Զուվաշների ԱՍԽՀ, Ուդմուրդների ավտոնոմ մարզ, Մարիների ավտոնոմ մարզ:

Քաղաքները՝ Գորկի, Մուրոմ, Գավլովո, Վյատկա, Իժևսկ, Յոշկարոլա, Չեբոկսարի, Ոմուտնինսկ, Կոտելնիչ:

Տնտեսությունը: Ցերկրի բաղկացուցիչ մասերի համառոտ բնութագիրը: Նրա մասերի նմանությունը հարևան մարզերին

(Գորկու և Մուրոմի մասերի նմանությունն արդյունաբերական կենտրոնի շրջաններին, մնացածի աջ ափի նմանությունը կենտրոնական սահմանային մարզին, հյուսիսի ու հյուսիս-արևելքի նմանությունը հյուսիսային լերկրին, մնացածի նմանությունը Թաթարիային)։ Զախափի լերկաթուղիների ցանցի լերիտասարդ և անբավարար լինելը։ Ցերկրի բոլոր մասերն ունեն հեռևյալ ընդհանուր կողմերը՝ ա) ընդարձակ անտառներ և դրա հետ կապված արդյունաբերական ճյուղեր՝ լերկրի սահմանից դուրս լեկող արտադրանքով, բ) հացի պլեֆիցիտ և տնայնագործության ուժեղ զարգացում, գ) դիրքը՝ Վոլգայի ափին և արդյունաբերական կենտրոնի ու Ուրալի միջև լեղած ճանապարհներին։ Գորկին վոլգակենտրոնի ու Ուրալի միջև լեղած ճանապարհների հապես միացնող կենտրոն։ Ցերկրի մեսապարդյունաբերության համամիութենական նշանակությունը։ Նրա մասնագիտացումը և տեղաբաշխումը։ Այլ ճյուղեր։ Ցերկրի անտառային տնտեսությունը։ Ցերկրից դուրս լեկող անտառանյութերի բնոնահոսանքները։ Ուղղությունը։ Վաճառագործություն։ Կաթնատու անասնապահություն։ Տրանսպորտ։

Ազգային ավտոնոմիաների՝ Չուվաշական ԱՍԽՀ-ի, Մարիների ԱՄ-ի և Ուդմուրդական ԱՄ-ի համառոտ բնութագրումը։

Առաջին հնգամյակի նվաճումները։ Իր տեխնիկայով աշխարհում առաջինը հանդիսացող ավտո-գործարանի կառուցումը։ Սորմովոյի գործարանի վերակառուցումը, արդյունաբերության մյուս ճյուղերի շինարարությունը — տնտեսային, անտառաթղթի, անտառ-քիմիական, փայտամշակման։ Բալախնայի ելեկտրոկայանը, Գորկի—Կոստերևո գծի ավարտումը և Ցար—Ֆոսֆորիտնայա նոր գծի կառուցումը։ Ցերկրի ներքին կապերի զարգացման ուժեղանալը։ Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցում։ Ազգային փոքրամասնությունների կուլտուրական վերելք։

Զարգացման հիմնական գծերը լերկրորդ հնգամյակում։

ԹԱԹԱՐԱԿԱՆ ԱՍԽՀ

Մոսկվայի առևտրական կապիտալի ամենահին գաղութներից մեկը, վորը հասարակական-պատմական անբարենպաստ պայմանների հետևանքով հնարավորություն չի ունեցել ոգտագործելու իր դիրքի բացառիկ նպաստավորությունը,—այժմ՝ ազատվելով ազգային ճնշումից, վերացնելով իր կուլտուրական հետամնացությունը, արագ ինդուստրացման և յենթարկվում և լերկրորդ

հնգամյակում՝ Վոլգա—Կամա հիդրոկայանի կառուցումով և Սիբիրի գերմագիստրալի շինարարությամբ, դրավելու լե Միության մեջ առաջավոր տեղերից մեկը։

Սահմանները։ Դիրքը (Վոլգայի և Կամայի միացման տեղում)։

Բնական պայմանները։ Ցերեք մասերը՝ 1) Վոլգայի աջ ափը, 2) Կամայի աջ ափը, 3) Կամայի ձախ ափը։ Այդ մասերի տարբերություններն ըստ կլիմայի, հողի և բուսականության։ Ոգտակար հանածոները։

Պատմական անցյալը։ Կամայի և Վոլգայի միացման տեղը վորպես կենտրոն, վորի շուրջը կազմակերպվել են Վոլգյան բուլղարների և ապա Կազանի թաթարների պետությունները։ Կազանի նվաճումը Ռուսաստանի կողմից 1554 թվին։ Ռուսական գաղութացում, ազգային կուլտուրայի ճնշում, տնտեսական զարգացման կասեցում, ազգարային գերբնակչություն։ Քաղաքացիական կռիվը և 1920—21 թ. սովը։

Բնակչությունը։ Բնակչության ազգային կազմը (ամբողջի և քաղաքներում ապրողների)։ Քաղաքները՝ Կազան, Բուգուլմա։

Տնտեսությունը։ Թաթարական հանրապետության հետամնացությունը վորպես հետևանք ցարիզմի գաղութային քաղաքականության։ Տնտեսության կառուցվածքը։ Գյուղատնտեսության հիմնական ճյուղերը, գլխավոր կուլտուրաները։ Անասնահումքը վերամշակող արդյունաբերության մասնագիտացումը։ Անտառային, փայտամշակման արդյունաբերություն։ Տնայնագործություն և նրա մասնագիտացումը։ Արտադնացության ուղղությունները։ Վոլգյան ճանապարհի նշանակությունը։

Առաջին հնգամյակի նվաճումները։ Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցում։ Ցանքաղաշտերի աճում, տեխնիկական բույսերի, առանձնապես խոտի տեսակարար կշռի աճում։ Կազանի ելեկտրոկայանը, արդյունաբերության տեսակարար կշռի բարձրացում, լերկաթուղային շինարարություն, կուլտուրական վերելք։

ՄԻՋԻՆ ՎՈԼԳԱՅԻ ՑԵՐԿԻՐ՝ ՄՈՐԴՎԱՆԵՐԻ ԱՎՏՈՆՈՄ ՄԱՐԶԻ ՀԵՏ

Հետամնաց գյուղատնտեսական ռայոն՝ Աջափի լեռաղաշտի ճգնաժամով և Զախափի եքստենսիվ տափաստանային հողագոր-

ծությամբ, մի շրջան, որը ներկայումս՝ շնորհիվ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման և թերթաքարերի ու Վոլգայի էներգիայի ոգտագործման, դառնում է հզոր ագրո-ինդուստրիալ կոմբինատ:

Սահմանները: Դիրքը:

Բնական պայմանները: Որշչիյ Սիրտ (Общий сырт), ժիգուլներ: Վոլգայի աջ և ձախ ափերի տարբերություններն ըստ ռելյեֆի, կլիմայի, հողի և բուսականության: Զախափը չորային է: Գետերը՝ Վոլգա—Սուրայի և Սամարայի հետ: Ոգտակար հանածոները՝ տորֆ, թերթաքարեր, շինանյութեր, քիմիական հումք: Ցերկաթի, նիկելի, խալիլյան հանքավայրեր և ուրիշ մետաղներ:

Պատմական անցյալը: Տարբեր ժամանակներում Աջափը (15—18-րդ դարերում և Զախափը (17—20-րդ դարերում) ռուսներով բնակեցնելը: Վոլգայի նավագնացության (անցած դարի 40-ական թվականներից) և յերկաթուղիների նշանակությունը Զախափում բնակություն հաստատելու, տափաստանները հերկելու և այնտեղ խոշոր ապրանքային հացահատիկային հողագործության ռայոն ստեղծելու համար: Աջափի և Զախափի գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի զարգացման տարբեր աստիճանը:

Բնակչությունը: Խիստ սակավ խտություն Զախափում: Ազգային փոքրամասնություններ՝ մորդվացիներ, թաթարներ, չուվաշներ, մարիներ, բաշկիրներ: Նրանց ընդհանուր տեսակարար կշռի մեծությունը: Նրանց կենցաղն ու կուլտուրան:

Քաղաքները՝ Սամարա, Ուլյանովսկ, Սիզրան, Պենզա, Որենբուրգ:

Տնտեսությունը: Գյուղատնտեսության խիստ գերակշռությունն արդյունաբերության հանդեպ: Գյուղատնտեսության տարբեր բնույթն Աջափում (կենտրոնական սևահողայինին կից շրջան) և Զախափում (Ստորին Վոլգայի չոր տափաստաններին կից շրջանում): Զախափում համատարած կոլեկտիվացում, հացահատիկային և մսի խոշոր խորհտնտեսությունների շինարարություն: Աջափի մասնագիտացումն անասնապահության և տեխնիկական կուլտուրաների գծով: Արդյունաբերության ճյուղային կառուցվածքը և նրա տեղաբաշխումը: Վառելանյութի բալանսը: Ցերկրի տրանզիտային դիրքը: Մորդվաների ԱՄ-ի համառոտ բնութագրումը:

Առաջին հնգամյակի նվաճումները: Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցում: Ցանքերի տարածության (հատկապես Զախափում) և տեխնիկական բույսերի ու խոտերի (հատկապես Աջափում) բուռն աճում: Թերթաքարերի վերամշակման սկիզբը (Կաշպիրի գործարանը) և Խալիլի ռայոնի հանքերը: Արդյունաբերության նոր ճյուղեր:

Զարգացման հիմնական գծերը յերկրորդ հնգամյակում:

ՍՏՈՐԻՆ ՎՈԼԳԱՅԻ ՑԵՐԿԻՐ՝ ՄԵՐԶՎՈԼԳՅԱՆ ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԻ ԱՍԽՀ-Ի ՑԵՎ ԿԱԼՄԻԿՆԵՐԻ ԱՎՏՈՆՈՄ ՄԱՐԶԻ ՀԵՏ

Մոսկվայի առևտրական կապիտալի յետ ընկած գաղութներից մեկը, որն աչքի յե ընկել իր բնական հարստությունների բացահայտ գիշատիչ ոգտագործմամբ,—այժմ՝ ավարտելով գյուղատնտեսության վերակառուցումը սոցիալիստական հիմունքներով, ամուր կանգնելով ինդուստրացման ճանապարհի վրա, խիստ փոխել է իր դեմքը: Տարածվելով հեռու՝ դեպի մեր յերկրի ներսը, Միջին ասիական անապատների այդ շարունակությունն այժմ գարձել է յերաշտի դեմ պայքարելու ցուցադաշտ:

Սահմանները, դիրքը:

Բնական պայմանները: Ռելյեֆը: Մերձվոլգյան բարձրություն: Որշչիյ Սիրտ: Կասպիական դաշտավայր (ծովի մակերևույթից ցած): Գետերը՝ Վոլգա (Ախտուբայի հետ), Դոն՝ Խոպյորի ու Մեդվեդիցայի հետ: Խիստ ցամաքային և չոր կլիմա, որը ավելի յե սաստկանում հարավ-արևելյան ուղղությամբ: Զոր քամիներ և նրանց ազդեցությունը: Ցերկրի յերեք գոտիները՝ 1) հյուսիս-արևմտյան անկյուն՝ անտառատափաստան, 2) միջին շերտ՝ տափաստանային և 3) կիսաանապատային: Ազոնալ սեպ՝ Վոլգայի ջրողող ափը: Ոգտակար հանածոներ՝ Խոպյորի յերկաթը, այրվող գազերի ժայթքումներ, շինանյութեր:

Պատմական անցյալը: Աստրախանի նվաճումը (1556): Սարատովի անտառատափաստանի վաղ գաղութացումը: Կալմիկների և գերմանացիների բնակեցումը յերկրի սահմաններում: Արոտային անասնապահություն: Զկնորսություն և աղի արտադրություն: Ցերկաթուղիների ուշ կառուցումը Վոլգայի ափերին և նրա ուշ բնակեցումը: Կապիտալիզմի զարգացման տիպերի տարբերությունը հյուսիս-արևմտյան անկյունի և տափաստանային մասի գյուղատնտեսության մեջ:

Դաշտավարության գիշատիչ բնույթը տափաստանային շերտում, որը հասցրել է գյուղատնտեսական ճգնաժամի:

Քաղաքացիական կռիվը։ 1921 թ. տարը։

Բնակչությունը։ Խուության աշխարհագրության (համեմատել տեղումների և հողերի աշխարհագրության հետ)։ ազգային փոքրամասնությունները՝ գերմանացիներ, կալմիկներ, ուկրայնացիներ։ սրանց տեղաբաշխումը։ Կալմիկների կենցաղը և կուլտուրան։ Ազգային ավտոնոմիաներ՝ Մերձվոլգյան գերմանացիների ԱՍԽՀ և Կալմիկների ԱՄ։

Քաղաքները՝ Ստալինգրադ, Սարատով, Աստրախան, Ենգելսի քաղաք (նախկին Պոկրովսկ)։ Քաղաքների համախմբումը Վոլգայի ափերին։ Ցերկաթուղիների և Վոլգայի խաչաձևման կետերը։

Տնտեսությունը։ Գյուղատնտեսական հիմնական գոտիները՝ 1) հյուսիս-արևմուտքում՝ հողագործական, 2) միջին շերտում՝ հողագործական-անասնապահական, 3) հարավում՝ անասնապահական, 4) Վոլգայի վողողած գետափը՝ այգիների ու բանջարանոցների։ Նրանց բնութագիրը հնգամյակի սկզբին՝ ըստ գյուղատնտեսության սոցիալական և ճյուղային կառուցվածքի։ Համատարած կոլեկտիվացում և խորհտնտեսությունների շինարարություն։ Տեխնիկական կուլտուրաներ (արևածաղիկ, ծխախոտ, մանանեխ)։ Արդյունաբերության կառուցվածքը և նրա տեղաբաշխումը։ Վառելանյութի բալանսը։ Աստրախանի ձկնարդյունաբերության համամիութենական նշանակությունը։ Աղի արդյունաբերություն։ Մերձվոլգյան գերմանական ԱՍԽՀ-ի և Կալմիկների ավտոնոմ շրջանի համառոտ բնութագիրը։

Առաջին հնգամյակի նվաճումները։ Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցում։ Ցանքի տարածության աճում։ Տրակտորի գործարան Ստալինգրադում և կոմբայնի գործարան Սարատովում։ Ելևկարոկայաններ։ Կամուրջ Վոլգայի վրա՝ Սարատովում։

Զարգացման հիմնական գծերը յերկրորդ հնգամյակում։

7. ՈՒԿՐԱՅՆԱ ՅԵՎ ՂՐԻՄ (7 ժամ)

ՈՒԿՐԱՅՆԱՅԻ ՍԽՀ ՅԵՎ ՄՈԼԴԱՎԻԱՅԻ ԱՍԽՀ

ՈՒՍԽՀ-ն Միության առաջին ածխա-մետաղաձուլական բազան է, այդ բազայի հիման վրա զարգացող ծանր արդյունաբերության ճյուղերի՝ մեքենաշինության (լեռնային, տրանսպորտային, գյուղատնտեսական և այլն) և քիմիական արդյունաբերության զարգացած շրջանը, միաժամանակ հիմնական շրջան է հացի արտահանման, շաքարի ճակնդեղի ու գյուղատնտեսական հումույթով աշխատող սննդարդյունաբերության ճյուղերի՝ ալրաղացի, ողեղործության, շաքարագործության։

Սահմանները։ Ռումինիայի և Լեհաստանի հետ ունեցած սահմանի ստրատեգիական կարևորությունը։ Դիրքը՝ ծովի և արևմտյան սահմանի միջև անկյունում։

Բնական պայմանները։ Ռելյեֆը։ Դոնեցի բարձրություններ, Պոդոլ պլատո և սրանց միացնող Մերձդնեպրյան բարձրությունը։

Գետերը՝ Դնեպր՝ իր վտակներով՝ աջից Պրիպյատ, ձախից՝ Դեսնա։ Հարավային Բուգ, վոր սահմանակից է Բեսարաբիային, Դնեստր և Դոնի վտակը՝ հյուսիսային Դոնից։ Գետերի նշանակությունը նավագնացության և եներգետիկայի տեսակետից։ Տեղումների նկատելի պակասելը հարավ-արևելյան ուղղությամբ։ Ուկրայնայի հիմնական հողա-բուսական գոտիները՝ ա) Պոլեսյե, բ) Աջափի անտառատափաստան, գ) Ձախափի անտառատափաստան, դ) տափաստան։

Ոգտակար հանածոներ։ Դոնբաս։ նրա սահմանները, ածխի պաշարը և նրա գնահատումը։ Կռիվոյ Ռոգի յերկաթը։ Հանքերի պաշարը և նրանց գնահատականը։ Բարձրատոկոս յերկաթահանքի և կոքսացվող ածխավայրի համեմատական մոտիկությունը։ Մարգանեց (Նիկոպոլ), սնդիկ (Նիկիտովկա), աղ (Արտյոմովսկ), գորշ ածուխ (Աջափում), տորֆ (Պոլեսյեյում)։

Պատմական անցյալը։ Ուկրայնան գրավելու համար Լեհաստանի, Մոսկվայի և Թյուրքիայի վասսալ Ղրիմի միջև յերկարատև պայքարը, վորպես Ուկրայնայի տնտեսական զարգացմանը խանգարող հանգամանք։ Ուկրայնան մինչև յերկաթուղիների անցկացնելը՝ վորպես ռուսական պետության զուտ գյուղատնտեսական ծայրամաս։

Ցերկաթուղիներ անցկացնելը, նրանց նշանակությունը՝ ա) հացի արտահանման համար և եքսպորտի նպատակով հացահատիկային հողագործության զարգացման համար՝ տափաստանային Ուկրայնայում, բ) ածխարդյունաբերության և մետաղագործության զարգացման համար։ Ոտարերկրյա կապիտալի ներդրումը Դոնբասի արդյունաբերության մեջ։ Մետաղի ու ածխի սինդիկատները և նրանց խանգարիչ ազդեցությունն ածխի և չուգունի հանույթի վրա։

Ազգաբնակությունը: Ազգային կազմը՝ ուկրայնացիներ, ռուսներ, հրեաներ, մոլդավներ: Ուկրայնացիների բնակման սահմանները: Անդրսահմանյան Ուկրայնա: Նրա ճնշված դրությունը (հակադրել Խորհրդային Ուկրայնային): Ազգային փոքրամասնությունների բաշխումն Ուկրայնայում: Խոության աշխարհագրությունը: Մարզային բաժանումը:

Քաղաքները՝ Խարկով, Կիև, Ոդեսսա, Դնեպրոպետրովսկ, Նիկոլաև, Խերսոն, Լուգանսկ, Արայոմովսկ, Ստալին, Մարիուպոլ, Բերդյանսկ:

Տնտեսությունը: Ուկրայնայի ժողովրդական տնտեսության կառուցվածքը և նրա փոփոխությունը վերջին տարիներում՝ ինդուստրացման ուղղությամբ:

Գլխավոր արդյունաբերական ճյուղերը: հները (ածխի, չուգունի, գյուղատնտեսական և տրանսպորտային մեքենաշինության, սննդի) և նորերը (լեռնային, մեքենաշինական, էլեկտրոտեխնիկական, քիմիական): Պայքար Նոր Դոնբասի համար: Գլխավոր ճյուղերի բաշխումը: Ուկրայնայի յերկու հիմնական արդյունաբերական շրջանները՝ ծանր արդյունաբերության (Դոնբաս, Կրիվոյ Ռոգ) և թեթև (գլխավորապես շաքարի—Աջափնյա անտառատափաստան):

Հին մետաղագործական գործարաններից լավերի վերակառուցումը և նորերի կառուցումը (Զապարոժսկի, Կրիվոյ Ռոգի, Մարիուպոլի): Հին և նոր գործարանների տեխնիկական-տնտեսական ցուցանիշները: Ածխի և հանքի հարաբերակցության փոփոխվելը նոր տեխնիկայի պայմաններում: Կոքսացման մնացորդների ոգտագործումը գործարանի ներքին մեքենացման նպատակների և քիմիական արդյունաբերության համար: Դրա հետևանքով մետաղագործական գործարանների - կողմնորոշման փոփոխությունն ածխից դեպի հանքը: Ուկրայնայի մեքենաշինության մասնագիտացումը՝ լեռնաարդյունաբերության սարքավորման, գյուղատնտեսական մեքենաների, չոդեկառքերի և վագոնների գծով: Դնեպրոգեսը և Դնեպրոկոմբինատն ՈՒՍԽՀ-ի խոշորագույն նորակառույցներն են: Դնեպրոպետրովսկի էլեկտրոկայանի ներդնտիկ և տրանսպորտային նշանակությունը: Քիմիական արդյունաբերություն՝ կոքսի մնացորդների (կոքսա-բենզոլային գործարաններ), մետաղաձուլության մնացորդների (ֆոսֆորիտային պարարտացում Թոմասշլակից՝ Կերչում), աղահանքերը (Դոնեցի

սոդայի գործարան) ոգտագործումով: ՈՒՍԽՀ-ի գործարանների նշանակությունը գյուղատնտեսության և յերկրի պաշտպանության համար:

ՈՒՍԽՀ-ի գյուղատնտեսության կառուցվածքը: Հիմնական կուլտուրաները, հին և նոր (բամբակ և մյուսները) ու նրանց տեղաբաշխումը: Ուկրայնայի գյուղատնտեսական շրջանները և նրանց բնութագիրը: Կոլեկտիվացման տեմպերի տարբերությունը զանազան շրջաններում և դրա պատճառները: Գյուղատնտեսական արդյունաբերություն և նրա տեղաբաշխումը:

Ուկրայնայի տեսակարար կշիռը յերկաթուղային փոխադրությունների մեջ. յերկաթուղային ցանց: Ջրային տրանսպորտի թուլությունը: Հիմնական բեռնահոսանքները:

Զարգացման հիմնական դծերը յերկրորդ հնգամյակում:

ՂՐԻՄԻ ԱՍԽՀ

Ղրիմն իր փոքրիկ տարածության վրա ունի յերեք տարբեր մասնագիտացումներ.—նրա հյուսիսային մեծ մասը հարթ-տափաստանային է և իր բնությամբ ու տնտեսությամբ կազմում է Ուկրայնայի հացաբեր տափաստանների շարունակությունը՝ փոքր-ինչ ավելի զարգացած այգեգործությամբ. արևելքում՝ Կերչի թերակղզին, վորը, շնորհիվ խոշոր յերկաթահանքերի, հանդիսանում է և՛ մետաղաձուլության, և՛ նրա հետ կապված քիմիական պարարտանյութերի արտադրության շրջան (Թոմասշլակից). և վերջապես, լեռներով ծածկված հարավային ափը մասնագիտացել է հարավի թանկարժեք կուլտուրաների ուղղությամբ (բարձր տեսակի ծխախոտ, խաղողի այգիներ) և միաժամանակ իր կլիմայական պայմանների շնորհիվ ծառայում է վորպես համամիութենական կուրորտ — համամիութենական բուժարան, վորը հեղափոխության շնորհիվ՝ մատչելի յե դարձել բոլոր աշխատավորների համար:

Թերակղզային դրությունը:

Բնությունը: Ռելյեֆը: Ղրիմի լեռները: Նրանց ազդեցությունը կլիմայի վրա: Զորս մասերը՝ հյուսիսային, հարավային ծովափ, լեռներ և Կերչ թերակղզին: Ոգտակար հանածոներ՝ յերկաթ (Կերչ), աղ, շինանյութեր, քարածուխ, այրվող գազեր:

Պատմական անցյալը: Ամենաայլազան ժողովուրդների կովի թատերաբեմ, վորոնք մտել են այստեղ ցամաքից ու ծովից (հին հույները և փյունիկեցիները, ճենովացիներն ու վենետիկցիները,

թաթարները)։ Ղրիմի թաթարների արշավանքը Մոսկվայի և Ուկրաինայի վրա։ Ղրիմի նվաճումը Ռուսաստանի կողմից 1774 թվին։ Հողը խոշոր ազնվականներին բաժանելը։ Ռուսական գաղութացումը, բնիկ ժողովրդին Թյուրքիա քշելը։ Ղրիմի գյուղատնտեսության բնորոշ գծերը մինչև հեղափոխությունը՝ բարձր ապրանքայնություն, սոցիալական խիստ շերտավորում, վարձու աշխատանքի բացառիկ լայն կիրառում։

Ղրիմը քաղաքացիական կռիվներում։

Բնակչությունը։ Ազգային կազմը, նրա խայտաբղետությունը։ Ղրիմի թաթարները, նրանց կենցաղը և կուլտուրան։ Քաղաքային բնակչության բացառիկ բարձր տոկոսը, պատճառները։

Քաղաքները՝ Սիմֆերոպոլ, Սևաստոպոլ, Յալտա, Կերչ։

Տնտեսությունը։ Ղրիմի տնտեսական ռայոնացումը, վոր համապատասխանում է նրա բնական ռայոնացմանը։ Յուրաքանչյուր ռայոնի բնութագիրը։ Ղրիմի ժողովրդական տնտեսության կառուցվածքն ամբողջությամբ առած։ Արտահանման և ներմուծման կազմը։ Ղրիմի կուրորտա-սանիտարական տնտեսության նշանակությունը։ Սեփական եներգետիկ բազայի անբավարարությունը։ Կերչի գործարանի նշանակությունը Ղրիմի ինդուստրացման համար։ Գյուղատնտեսության վերակառուցումը։ Կոլեկտիվացման բարձր տեմպերի պատճառը։ Խորհտնտեսությունների մասնագիտացումը։

Առաջին հնգամյակի նվաճումները։ Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը։ Հատուկ կուլտուրաների և դրանք վերամշակող արդյունաբերության աճումը։ Կերչի գործարանի վերակառուցումը։ Շինանյութերի արտադրության զարգացումը։ Սևաստոպոլի ելեկտրոկայանը։ Ազգային-կուլտուրական շինարարություն։

Զարգացման հիմնական գծերը յերկրորդ հնգամյակում։

8. ՀՅՈՒՍԻՍ-ԿՈՎԿԱՍՅԱՆ ՅԵՐԿԻՐ (4 ժամ)

ՀՅՈՒՍԻՍ-ԿՈՎԿԱՍՅԱՆ ՅԵՐԿԻՐԸ ԴԱՂՍՏԱՆԻ ԱՍՖԽՀ-ի ՀԵՏ։

Հյուսիս Կովկասյան յերկիր՝ Դաղստանի հետ։ Կոլեկտիվացած հողը գյուղատնտեսություն (յեգիպտացորեն, ցորեն, արևածաղիկ, սոյա և այլն) և վոչ պակաս ուժեղ լեռնարդյունաբերություն (նավթ, ածուխ, ցեմենտ և այլն), վորոնք կոմբինավորվում են

գյուղատնտեսական մեքենաշինության հսկայական գործարանների միջոցով (Ռոստսելմաշ և Բոստկոմբայնստրոյ), իսկ հետագայում նաև քիմիական պարարտացման գործարանների միջոցով։

ՍԱՀՄԱՆՆԵՐԸ։ ԴԻՐՔԸ

Բնական պայմանները։ Ռելյեֆը։ Գլխավոր Կովկասյան լեռնաշղթա, նրա հյուսիսային լանջերը և ճյուղավորությունը։ Ստավրոպոլի բարձրավանդակը։ Անդյան լեռնաշղթա։ Գետերը՝ Դոն-Հյուսիսային Դոնեցի, Սալի և Մանըչի հետ, Կուբան, Կումա, Թերեկ, Սուլակ գետերի նշանակությունը նավագնացության, եներգետիկայի և վոռոշման տեսակետից։ Կլիմայական տարբերություններ։—լեռնային շերտ, Սև ծովի ծովափ, Մերձկուբան, Դոնի և Մերձկասպյան տափաստաններ։ Ոգտակար հանածոներ (նավթ, ածուխ, յերկաթ, գունավոր մետաղներ, քիմ. հումուլթ)։

Պատմական անցյալը։ Յերկրի նվաճումը ցարական Ռուսաստանի կողմից, «գաղութացում», հիմնական բնակիչների դուրս մղումը դեպի սարերը, կաղակներ, այլաբաղաքացիներ, լեռնականներ։ Յերկաթուղիներ անցկացնելը։ Գյուղատնտեսության միակողմանի զարգացումը հացահատիկային հողաբուծության ուղղությամբ՝ արտահանության նպատակով։ Զարգացման ամերիկյան տիպը։ Բարձր ապրանքայնություն, մեքենաների համեմատաբար լայն կիրառում, սոցիալական խիստ շերտավորում։ Քաղաքացիական պատերազմի կատաղի ընթացքը։

Ազգաբնակություն։ Խուության աշխարհագրությունը։ ազգային փոքրամասնություններ՝ ադիղեներ, կարաչայներ, ինգուշներ, չեչեններ, ոսետիններ։ Նրանց տնտեսական կենցաղի և կուլտուրայի հիմնական գծերը։ Նրանց տեղաբաշխումը։

Ավտոնոմ շրջաններ՝ Ադըգեյ – Չերքեզական, Կարաչայի, Կաբարդինո-Բալկարյան, Չերքեզների, Հյուսիս-Ոսեթյան, Չեչենների, ինգուշների, Դաղստանի ԱՍԽՀ։ Նրա ազգային կազմի ծայրահեղ խայտաբղետությունը։

Քաղաքներ՝ Ռոստով, Նովորոսսիյսկ, Կրասնոդար, Գրոզնի, Մայկոպ, Տուապսե, Մախաչ-Կալա, Պյատիգորսկ, Կիսլովոդսկ, Որջոնիկիձե։

Տնտեսությունը։ Հյուսիսային Կովկասն առաջավոր է կոլեկտիվացման տեսակետից։ Գյուղատնտեսության հիմնական կուլտուրաները և նրանց տեղաբաշխումը։ Գյուղատնտեսական շրջանները։—Մերձկուբան, Սև ծովի ափ, բարձր լեռնային շերտ և

նախալեռնային շրջան, Դոնի տափաստաններ՝ հացահատիկային հողագործությամբ, մերձկասպյան չոր տափաստաններ՝ արոտատեղային խաշնարածությամբ, լեռնային Դաղստանի հովիտներ։ Ցանքի տարածության աճումը, վոչ հացահատիկային կուլտուրաների տեսակարար կշռի աճումը (մանավանդ խոտերի)։ Նոր կուլտուրաներ։

Արդյունաբերության կառուցվածքը։ Ծանր և թեթև արդյունաբերության հիմնական ճյուղերը և նրանց տեղաբաշխումը։

Դաղստանի ԱՍԽՀ-ի և այլ ազգային ավտոնոմիաների համառոտ բնութագիրը։

Առաջին հնգամյակի նվաճումները։ Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցում։ Ցանքի տարածության աճում, վոչ հացահատիկային կուլտուրաների, մանավանդ ցանովի խոտերի տեսակարար կշռի աճում։ Մելիորացիա։ Նոր կուլտուրաներ։ Նավթի և ածխի արտադրանքի խոշոր աճում։ Ելեկտրոկայանների կառուցում։ Արդյունաբերական շինարարություն։ Ռոստ—Սելմաշ։

Զարգացման հիմնական գծերը յերկրորդ հնգամյակում։

9. ՈՒՐԱԼ (6 ժամ)

ՈՒՐԱԼԻ ՄԱՐԶ. ԲԱՇԿԻՐԻԱՅԻ ԱՍԽՀ

Բաշկիրիայի արևելյան մասի աշխարհագրական և տնտեսական միասնականությունն Ուրալի մարզի լեռնա-գործարանային մասի հետ։ Բաշկիրիայի առանձնացումն ըստ ազգային հատկանիշների։

ՈՒՐԱԼԻ ՄԱՐԶ

Ուրալը, վոր վայտածխային տեխնիկայի տիրապետության ժամանակաշրջանում աշխարհում առաջին տեղերից մեկն եր գրավում, հանքաձուլման գյուտից հետո հետին տեղը մղվեց, վոր մինչպատերազմյան ժամանակաշրջանում սոցիալական և տեխնիկական հետամնացության որինակ եր հանդիսանում։ Այժմ, նոր սոցիալական և տեխնիկական պայմաններում, վորոնք հնարավորություն են տալիս յերկաթահանքն ահագին տարածության վրա միացնել ածխի հետ,—դառնում է վառելանյութային բազա՝ հանձին հեռավոր վայրերից բերվող ածխի և դրա շնորհիվ վերակառուցվում է բոլորովին նոր հիմունքներով, վորոնք ապահովում են նրա առաջավոր տեղը Ուրալ—Կուզնեցկի կոմբինատի կազմում։

Սահմանները։ Դիրքը Ցեվրոպայի և Ասիայի միջև, Վոլգայի և Ոբի ավազանների միջև, մեր տերրիտորիայի արդեն յուրացված (освоение) մասի և մյուս՝ դեռ նոր յուրացվող մասի միջև։

Բնական պայմանները։ Ռելյեֆը։ Ուրալի լեռները, նրանց ընդհանուր բնութագիրը։ Բաժանումը՝ Հյուսիսային, Միջին և Հարավային Ուրալի։ Զրաբաժան լեռնաշղթան։ Ուրալ—Տաու (նրա լանջերը՝ արևմտյան և արևելյան)։ Գետերը՝ Կամա—Զուսովայի հետ, Ոբ—Իրտիշի և նրա վտակ Տոբոլի հետ, Ուրալ։ Սրանց գնահատումը նավագնացության և եներգետիկայի տեսակետից։ Ուրալյան լեռնաշղթայի ազդեցությունը կլիմայի վրա։ Հողերը և բուսականությունը՝ լայնությամբ և յերկայնությամբ գոտի կազմելու տեսակետից։ Մարզի հիմնական մասերը՝ 1) Լեռնային Ուրալ, 2) Նախաուրալ, 3) Անդրուրալ, 4) Տոբոլյան Հյուսիս։

Ոգտակար հանածոներ։ Յերկաթ, նրա գլխավոր հանքավայրերը՝ Մագնիտնայա լեռ, Բակալ, Վլասովկայա, Բլագոդատ, Ալապաևսկոյե. նրանց պաշարները և գնահատումը։ Ածուխ՝ Կիզել, Ցեգորշինո, Զելյաբինսկ։ Մարգանեց, պղինձ, վոսկի, պլատին, խրոմ, վոլֆրամ, նիկել և այլ մետաղներ։ Կերակրի աղ, կալիի աղ, աղբեստ, ֆոսֆորիտներ, թանկագին քարեր, նավթ։ Ուրալի հանքային հարստությունների ընդհանուր գնահատականը։

Պատմական անցյալը։ Ուրալի լեռնային հարստությունների յուրացումն՝ ահագին հողամասերն իրենց ընդերքով խոշոր կալվածատերերին և վաճառականներին բաժանելու միջոցով և գյուղացիներին, իբրև բանվորական ուժ, այնտեղ «դուրս բերելու» իրավունքով։ Գյուղացիների ամրացումը գործարաններին։ Բանվորների գաղանային շահագործումը և նրանց բունտերը։ Ուրալի համաշխարհային նշանակությունը 17-րդ և 18-րդ դարերում՝ մինչև հանքաձուլման գյուտը։ Ուրալի անկումը՝ կապված ճորտատիրական իրավունքի վերացման և կապիտալիստական հարավի մրցման հետ։ Ճորտատիրության մնացորդները հետռեֆորմյան Ուրալում։ Լենինի տված բնութագիրը (Լենին, յերրորդ հատոր։ 4-րդ գլուխ)։

Ազգաբնակությունը։ Ազգաբնակության խտության աշխարհագրությունը։ Լեռնային մասի համեմատաբար սակավ բնակ-

ված լինելը ցուցանիշ է Ուրալի արդյունաբերական զարգացման տկզբնական շրջանի համար:

Գործարանային ավաններից լեռնային մասում առաջացած քաղաքների հատուկ տիպը: Քաղաքներ՝ Սվերդլովսկ, Զլատոուստ, Զելյաբինսկ, Մագնիտոգորսկ, Զլատոուստ, Ն. Տագիլ, Պերմ, Նադեժդինսկ, Սարապուլ: Տյումեն, Տոբոլսկ:

Տնտեսությունը: Լեռնային Ուրալն իր լեռնագործարանային արդյունաբերությամբ մի հիմնական մաս է, որի նկատմամբ մյուս շրջանները միայն լրացում են հանդիսանում: Ցարական Ռուսաստանից մեզ ժառանգություն մնացած «Հին»-Ուրալի բնութագիրը:

Կենտրոնացման, վերականգնման և մասնակի վերակառուցման աշխատանքները, որոնք կատարվել են Խորհրդային իշխանության առաջին տարիներում:

Համկոմկուսի Կենտկոմի 1930 թ. մայիսի 15-ի որոշումը և նրա շրջադարձային նշանակությունն Ուրալի վերակառուցման գործում:

«Նոր» Ուրալը կազմում է Ուրալ-Կուզնեցկ կոմբինատի բաղկացուցիչ և առաջատար մասը:

Ուրալ-Կուզնեցկ կոմբինատի հիմնական գաղափարը: Ուրալի վերակառուցման հիմնական գծերը:

Լեռնագործարանային արդյունաբերության գլխավոր ճյուղերը և նրանց տեղաբաշխումը: Քարածխային արդյունաբերություն, յերկաթահանքային սև մետաղաձուլում, գունավոր մետաղների հանքահանում: Ուրալի լեռնարդյունաբերության մի շարք ճյուղերի եքսպորտային նշանակությունը:

Մետաղամշակում, մեքենաշինություն և նրանց տեղաբաշխումը: Քիմիական արդյունաբերություն, հումույթի լրիվ ապրտիմենտի շնորհիվ նրա զարգացման համար բացառիկ բարենպաստ պայմաններ: Ուրալի բացառիկ բարենպաստ պայմանները զանազան արդյունաբերությունների կոմբինավորման տեսակետից: Այդպիսի կոմբինավորումից ստացված ոգուտը: Որինակներ: Վառելիքային բալանսը և նրա փոփոխությունները վերջին տարիներում: Ելեկտրիֆիկացիա:

Գյուղատնտեսությունը և նրա տարբեր բնույթը Նախաուրալում, լեռնային մասում, Անդրուրալում, հյուսիսում և հարավում:

Գյուղատնտեսական տարածության և գյուղատնտեսական զբաղվածության սակավությունը Լեռնային Ուրալում:

Հողատեսքերի և կուլտուրաների կազմը: Վարսակի գերակշռող նշանակությունն այն շրջանների ցանովի տարածությունների կազմում, որոնք կապված են լեռնամասի հետ: Ծանր արդյունաբերության և գյուղատնտեսության կապի ձևերը: Խորհտնտեսությունների մասնագիտացումը և աշխարհագրությունը:

Անտառային տնտեսություն: Անտառների կցումը գործարաններին: Փայտային հումքի վրա հենվող ճյուղեր:

Ուրալի ջրային ճանապարհները և յերկաթուղային ցանցը: Ուրալի անբավարար սպասարկումը կատարելագործված տրանսպորտով: Ուրալի արտաքին կապերը:

Առաջին հնգամյակի նվաճումները: Հին գործարանների վերակառուցում (Նադեժդինսկի, Զլատոուստի և մյուսների): Նոր գործարանների կառուցում: Մագնիտոգորսկի գիգանտ: Նրա նշանակությունն Ուրալի և ամբողջ ԽՍՀՄ-ի համար: Նիժնի-Տագիլի գործարանի շինարարությունը: Գունավոր մետաղաձուլության հին գործարանների վերակառուցում և նորերի կառուցում: Միջուրալյան պղնձամշակման գործարանի կառուցում:

Նոր մեքենաշինական գիգանտներ: Սվերդլովսկի Ուրալմաշտրոյը՝ «գործարաններ կառուցող գործարան» և Զելյաբինսկի տրակտորային գործարանը: Տագիլի վագոնաշինական գործարանի կառուցումը, Բերեզնիկի քիմիական կոմբինատը: Ածխի արտադրանքի խիստ մեծանալը, ելեկտրոկայանների ուժի մեծանալը, լեռնամասերի ելեկտրիֆիկացիան: Նոր յերկաթգծեր և նրանց նշանակությունը: Անտառամթերումների աճում: Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցում, ցանքային տարածությունների աճում, նրա կառուցվածքի ինտենսիվացում: Կուլտուրական շինարարություն:

Զարգացման ընդհանուր գծերը յերկրորդ հնգամյակում:

ԲԱՇԿԻՐԱԿԱՆ ԱՍԽՀ

Իրավացիորեն իր բնական հարստություններով «Հարավային Ուրալի մարգարիտ» կոչվող Բաշկիրիան նախկին ռուսական պետության ամենահետամնաց գաղութներից մեկն եր, որը տալիս եր տեղական բնակչությանը թալանելու և բնական հարստությունները գիշատիչ կերպով վատնելու ցայտուն որինակներ:

Մեր ժամանակում Բաշկիրիան ինդուստրացվում է ուժեղ տեմպերով, իսկ յերկրորդ հնգամյակի ընթացքում նա կդառնա ՈՒԿՍ սիստեմում սև և դունավոր մետաղաձուլության աչքի ընկնող շրջան, այդ հիման վրա կդարգանան պատասխանատու մեքենաշինությունը, քիմիական և անտառային արդյունաբերությունները:

ՍԱՀՄԱՆՆԵՐԸ · ԴԻՐՔԸ ·

Բնական պայմանները: Ռելյեֆը: Հարավային Ուրալի լեռները և նախալեռները՝ Բաշկիրիայի արևելյան մասում:

Բելայա գետը (Կամայի վտակ): Ցերկու մասերը՝ Բելայա գետի աջ ափը լեռնա-անտառային է, ձախ ափը՝ հարթ-տափաստանային, սևահողային: Ոգտակար հանածոներ՝ յերկաթ (Զլատաուզինսկ—Կոմարովյան հանքավայրը, նրա պաշարները և հանքի բարձր վորակը), պղինձ (Բայմակ), մարգանեց, վոսկի, խրոմիտներ, նավթ (Ստերլիտամակ):

Պատմական անցյալը: Բաշկիրիայի նվաճումը ցարական Ռուսաստանի կողմից, մի շարք ապստամբությունների ճնշում, Բաշկիրիայի հողերի զավթում, հիմնական աղգաբնակության դուրս մղելը դեպի անհարմար տեղեր, աղգային կուլտուրայի ճնշում, դաժան շահագործում:

Աղգաբնակություն: Աղգաբնակության կազմը՝ ռուսներ, բաշկիրներ, թուրքեր. նրանց կենցաղը և կուլտուրան: Խուության աշխարհագրությունը: Քաղաքները՝ Ուֆա, Ստերլիտամակ, Բիրսկ, Բելորեցկ:

Տնտեսություն: Գյուղատնտեսության խիստ գերակշռությունն առաջին հնգամյակի սկզբում՝ արտադրանքի և արտահանության կազմում (հացահատիկ, յուղ, կաշի, մեղր, ձու, սննդամթերք):

Բելորեցկի գործարանները և նրանց տեսակարար կշիռը Բաշկիրիայի եկոնոմիկայում. լեռնարդյունաբերություն: Արդյունաբերությունը և անասնապահությունն աջափնյա Բաշկիրիայում, հացահատիկային գյուղատնտեսություն՝ գյուղատնտեսական արդյունաբերության հետ՝ Ձախափնյա Բաշկիրիայում: Ցերկաթուղային տրանսպորտի անբավարար լինելը: Բելայա գետի նշանակությունը: Բաշկիրիայի արևելյան մասի ճանապարհազրկությունը և գերհետամնացությունը՝ քոչվորական անասնապահության մնացորդներով:

Առաջին հնգամյակի նվաճումները: Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը, ցանքերի տարածության աճումը: Տեխնիկական կուլտուրաների և խոտերի տեսակարար կշռի բարձրացումը, գյուղատնտեսական և անտառային արդյունաբերության զարգացումը, յերկրաբանական-հետախուզական աշխատանքներ. Բելորեցկի գործարանների վերակառուցումը: Զերնիխովի կոմբինատի շինարարությունը:

Զարգացման հիմնական գծերը յերկրորդ հնգամյակում:

10. ՍԻԲԻՐ (7 ժամ)

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԻԲԻՐԻ ՑԵՐԿԻՐ՝ ՈՅՐԱՏՆԵՐԻ ՑԵՎ ԽԱԿԱՄՆԵՐԻ ԱՎՏՈՆՈՄ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԵՏ. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՍԻԲԻՐԻ ՑԵՐԿԻՐ՝ ՑԱԿՈՒՏԱԿԱՆ ԱՍԽԱ ՑԵՎ ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՑԵՐԿԻՐ

Ընդհանուր ներածություն. Սիբիրն ամբողջությամբ առած

ՍԱՀՄԱՆՆԵՐԸ. ԴԻՐՔԸ

Բնական պայմանները: Խոշորագույն յերկիր, հեռու և կտրված կուլտուրական հին ոջախներից: Ռելյեֆը: Լեռնաշղթաները, հարավային սահմանի վրա՝ Ալթայ, Սայաններ, Արևմտյան Սիբիրական դաշտավայր և Արևելյան Սիբիրական բարձրավանդակ: Արևելյան Սիբիրի լեռները (Ցարլոնովյան, Ստանովյան, Կամչատկայի և այլն):

Գետերը՝ Ոբ—Իրտիշ վտակով, Ցենիսեյ—Անգարա վտակով, Միջին Տունգուզկայով և Ստորին Տունգուզկայով, Լենա—Վիտիմով, Ոլեկմայով, Ալդանով և Վիլյույով, Ամուր—Սունգարիով և Ուսուրի: Բայկալ լիճը:

Սիբիրի կլիման: Նրա խիստ ցամաքային և դաժան լինելը:

Պատմական անցյալը: Սիբիրի պատմական հետամնացության պատճառները: Սիբիրի բնիկ աղգաբնակությունը: Բնական ռեսուրսների ոգտագործման հաջորդական ստադիաները՝ 1) մորթեղեն, 2) վոսկի և արծաթ, 3) հաց: Ցերկաթուղային մագիստրալի նշանակությունը:

Սիբիրը քաղաքացիական պատերազմներում:

Եներգիայի ռեսուրսների և հանքային հումքի հիմնական մասսիվները: Սիբիրի ռայոնացումը: Սիբիրի շրջանների զարգացման հաջորդականությունն արևմուտքից—արևելք:

Ցարական ժամանակի Սիբիրը — աքսորի և տաժանակիր աշխատանքների վայր, և խորհրդային յերկիր Սիբիրը—հզոր սոցիալիստական շինարարության յերկիր:

Հյուսիսի ժողովուրդների վերելքը և նրանց ազգային-տերիտորիալ տեղաբաշխումը:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՍԻԲԻՐԻ ՅԵՐԿԻՐ՝ ՈՅՐԱՏԻ ՅԵՎ ԽԱԿԱՍԻ ԱՎՏՈՆՈՄ ՄԱՐԶԵՐՈՎ

Յերկիր, վորն ընդգրկում է Սիբիրի ամենից հացառատ և ամենից խիտ բնակված շրջանները — «Սիբիրի շտեմարանը» և Կուզնեցկի քարածխի ավազանը, վոր առաջինն է ԽՍՀՄ-ում իր ածխի պաշարի չափով և վորակով: Կուզնեցկի գործարանի կառուցումով սկսված յերկրի ահագին արդյունաբերական հնարավորությունների լայն ծավալումը դարձնում է նրան «Սիբիրի դարբնոցը»:

Բնական պայմանները: Յերկրի յերեք գոտիները՝ ա) տայգա, բ) անտառատափաստան և տափաստան, գ) լեռներ: Կուզբաս: Պաշարի չափը և ածխի վորակը: Ուրիշ ոգտակար հանածոներ:

Ազգաբնակությունը: Յերկրի բնակեցման ընթացքը. հիմնական բնակիչները՝ ոյրատներ, խակասներ, ոստյակներ: Նրանց կենցաղը և կուլտուրան: Ազգային ավտոնոմիաներ՝ Ոյրատի և Խակասի ավտոնոմ շրջաններ:

Քաղաքները՝ Նովոսիբիրսկ, Բարնաուլ, Տոմսկ, Ստալինսկ (Կուզնեցկ), Մինուսինսկ, Ոյրատ-Տուրա:

Տնտեսությունը: Ավելցուկ հաց ունեցող շրջանները՝ տափաստանային Ալտա, Բարաբա, Մինուսինսկի տափաստան,—սրանք ցարական ժամանակ աքսորականների ամենասովորական վայրերն եյին: Արևմտյան Սիբիրի յերկիրը «Սիբիրի շտեմարանն» է և ունի ամենից ավելի խիտ ազգաբնակություն: Թուրքսիբի նշանակությունն Արևմտյան Սիբիրի յերկրի համար:

Յերկրի տեղն ՈՒԿԿ-ի սիստեմում, վորպես ենթերգետիկ ածխային բազայի: Խակասի և Ոյրատի համառոտ բնութագիրը:

Առաջին հնգամյակի նվաճումները: Կուզնեցկի գործարանի կառուցումը: Ուրալի ածխարդյունաբերության ընդարձակումը, Նովոսիբիրսկի նորակառույցները, նոր յերկաթուղիները (Ստալինսկ—Նովոսիբիրսկ): Գունավոր մետաղագործության և քիմիական արդյունաբերության զարգացումը: Հացահատիկային, անասնապահական, կաթնատնտեսական խորհտնտեսությունների շինարարություն:

Զարգացման հիմնական գծերը յերկրորդ հնգամյակում:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՍԻԲԻՐԻ ՅԵՐԿԻՐ՝ ԲՈՒՐՅԱՏ-ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԱՍԽՀ-Ի ՀԵՏ

Ահագին յերկիր՝ մեծաղույն ենթերգետիկ և հումքային հարստություններով, բայց անհարմար դիրքով և հողագործության համար քիչ բարենպաստ բնական պայմաններով: Յերկրի հարստության բանալին Անգարայի և Յենիսեյի ջրային ենթերգիան է:

Սահմանները և դիրքը: Հարավային սահմանի ռազմա-ստրատեգիական նշանակությունը: Միջանկյալ դիրքը: Տարածությունները՝ Իրկուտսկ—Մոսկվա և Իրկուտսկ—Վլադիվոստոկ: Տերիտորիայի մեծությունը:

Բնական պայմանները: Ռելյեֆը: Կլիման: Հարստագույն ենթերգիայի աղբյուրների զուգորդումը—քարածուխ (Ջերեմխովի ավազանում և Ներքին Տունգուսկայում), անտառներ և սպիտակ ածուխ (Անգարա և Յենիսեյ): Անգարայի սահանքներն ամբողջ աշխարհում ենթերգիայի ամենաազորեղ և ամենաեժան աղբյուրներից են: Հանածո հումքեր՝ յերկաթ և հազվագյուտ մետաղներ:

Ազգաբնակությունը: Ազգային փոքրամասնությունները և նրանց տեղաբաշխումը: Բուրյաթներ, նրանց կենցաղը և կուլտուրան: Բուրյաթ-մոնղոլական ԱՍԽՀ: Քաղաքները՝ Իրկուտսկ, Կրասնոյարսկ, Վերխնեուդինսկ, Չիտա:

Տնտեսությունը: Նեղ բնակված շերտ՝ յերկաթուղու յերկարությամբ և տունդրաների ու տայգաների ահագին անմարդաբնակ տարածություններ՝ հյուսիսում և հարավի լեռներում:

Փոքրիկ հացառատ շրջաններ Կանսկի և Տուլանի մոտ: Անասնապահություն:

Մյուս ճյուղերը՝ վոսկի (Բոդայբոյի շրջան), վոսկու արդյունաբերության առանձին նշանակությունը յերկրի համար, վորսորդություն, ձկնորսություն, անտառային տնտեսություն:

Կապը Տուրուխանսկի հյուսիսի, Յակուտիայի, Մոնղոլիայի հետ: Հյուսիսային ծովային ճանապարհը:

Բուրյաթ-մոնղոլական ԱՍԽՀ-ի համառոտ բնութագիրը: Հիմնական խնդիրն է ջրային ենթերգիայի ոգտագործումը և այդ եժան աղբյուրի միջոցով զանազան արդյունաբերություններ ստեղ-

ծելը — քիմիական, մետաղաձուլական, փայտամշակման և այլն։ Անգարայի կոմբինատի պրոբլեմը։ Յակուտիայի հետ կապ ստեղծելու պրոբլեմը։ Լենայի յերկաթուղու և Զերեմխովից դեպի Անգարայի սահանքները տանող դծի նախագիծը։

ՅԱԿՈՒՏԻԱՅԻ ԱՍԽՀ

Սիբիրի տերրիտորիալ միավորներից Յակուտիան ամենամեծն է, ամենից սակավաբնակը, ամենադաժան կլիմա ունեցողը, ամենաքիչ մատչելին և ամենաքիչ հետազոտվածը։ Աշխուժացման բանալին հարմար կապեր ստեղծելն է։ Ամենից քիչ մատչելի և հեռավոր դիրք։ Դեպի Յակուտիա տանող ճանապարհները։ Կլիմայի ծայրահեղ դաժանությունը։ Ցրտի բևեռը Վերխոյանսկում։

Պատմական անցյալը։ Հեռավոր դաղութ, վորը ցարի ժամանակ ամենասովորական աքսորավայրն եր։

Ազգաբնակության աննշան խտությունը։ Ազգություններ, նրանց տեղաբաշխումը և տերրիտորիալ կառուցվածքը։ Յակուտներ, նրանց կենցաղը և կուլտուրան։ Յակուտսկ քաղաքը։

Տնտեսությունը։ Մորթեղենը գլխավոր ապրանքային ճյուղն է։ Մյուս ճյուղերը՝ անասնապահություն, փոքր չափով հացահատիկային ցանք, հյուսիսում յեղջերվապահություն և ձկնորսություն։ Աչդանի վոսկեբեր շրջանը։

Հիմնական խնդիրներն են՝ արտաքին աշխարհի հետ ամուր կապերի հաստատում (նոր ճանապարհների նախագծերը), կուլտուրական մակարդակի բարձրացում, բնական հարստություններին և նրանց ոգտագործման ուղիների հետազոտություն։

ՀԵՌԱՎՈՐ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ՅԵՐԿԻՐ

Յերիտասարդ յերկիր, վորը դտնվում է յուրացման (освоение) սկզբնական շրջանում, վորը դեռևս ապրում է հումքի արտահանումով (փայտ, մորթեղեն, ձուկ, վոսկի), բայց մեծ ապագա ունի՝ շնորհիվ բնական հարստությունների և մերձավորագույն դիրքի։ Նրա դիրքի առանձնահատկությունները՝ սեծովային յերկրի կենտրոնից հեռու և դիշատիչ իմպերիալիստների քաղաքի տակ դտնվելն ստիպում է առանձին ուշադրությամբ վերաբերվել նրա կարիքներին և նրա պաշտպանունակության բարձրացմանը։

Սահմանները։ Հարավային սահմանի ռազմա-ստրատեգիական նշանակությունը, մանավանդ Մանջուրիան յապոնացիների կողմից դրավելու կապակցությամբ։

Բնական պայմանները։ Հեռավոր Արևելյան Յերկրի կազմը — հարավային մաս (Մերձամուր, Ուսսուրիի յերկիր) և հյուսիսային մաս (Ոլոտի ծովափ, Հյուսիսային Սախալին, Կամչատկա, Անադիրի յերկիր, Զուկոտի թերակղզի)։ Կլիմայի և բուսականության առանձնահատկությունները։ Ոգտակար հանածոները՝ նավթ, ածուխ, յերկաթ, բազմամետաղներ (պոլիմետալ), վոսկի։

Ազգաբնակությունը։ Յերկիրը յերիտասարդ է և նրա դաղութացումն անավարտ։ Նվազ բնակվածությունը։ Ազգային փոքրամասնություններ՝ հիմնական բնակիչներից և արտասահմանից յեկածներից (չինացիներ, կորեացիներ, յապոնացիներ), նրանց տեղաբաշխումը։ Բիրոբիջան։

Քաղաքները՝ Խաբարովսկ, Վլադիվոստոկ, Բլագովեշչենսկ, Նիկոլայեվսկ՝ Ամուրի գետաբերանում և Նիկոլսկ—Ուսսուրիյսկի, Պետրոպավլովսկ—Կամչատկայի վրա։

Տնտեսությունը։ Ճանապարհաշինություն։ Ամուրը և յերկաթուղային մագիստրալը վորպես յերկրի միակ տրանսպորտային յերակներ։ Հիմնական դյուղատնտեսական շրջաններ,—ՄերձԽանկայի դաշտավայրը և Զեյ-Բուրեյինի հարթությունը։ Հիմնական կուլտուրաները և նրանց տեղաբաշխումը։ Բրինձ և սոյա։

Վոսկու արդյունաբերությունը, ձկնորսությունը, վորսորդությունը, փայտարդյունաբերությունը և սրանց նշանակությունը յերկրի համար։

Յերկրի հյուսիսային մասը, նրա հարստությունը և անմատդաբնակությունը։ Հյուսիսային և հարավային մասի կապը։ Հեռ. Արևելյան Յերկրի տնտեսության հիմնական փոփոխությունները մինչհեղափոխական ժամանակի համեմատությամբ։— անտառանյութերի արտահանման և ձկնորսության զարգացում, յերկիրն ըստ արտաքին առևտրի բալանսի դեֆիցիտայինից դարձել է ավելցուկային։ Կոլեկտիվացում։ Կապի աշխուժացումը Կամչատկայի հետ։ Տնտեսական շինարարությունը Սախալինում։

Խորհրդային Հեռավոր Արևելքը և իմպերիալիստների պայքարը Խաղաղ ովկիանոսում։

Հիմնական խնդիրն է՝ ստեղծել «Հեռավոր արևելյալ հենարան» և պաշտպանունակության բարձրացում։

Զարգացման հիմնական գծերը յերկրորդ հնգամյակում։

11. ԿԱԶԱԿՍՏԱՆ ՅԵՎ ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (6 ժամ)

Ընդհանուր ներածություն: Կազակստանի և Միջին Ասիայի նման գծերը,—խիստ ցամաքային, չոր կլիմա, ջրափակ ավազանի շրջան (բացի Կազակստանի հյուսիսային և հյուսիս-արևելյան մասերից), գաղութային դրությունը նախկին ռուսական պետության մեջ, բոչվորական անասնապահության քիչ թե շատ նշանավոր դերը:

Այն ընդհանուր խնդիրները, որոնք բղխում են այդ յերկրում սոցիալիզմ կառուցելու հատուկ պայմաններից, յերկիրը, որը չի անցել արդյունաբերական կապիտալիզմի ստադիայով և հարուստ է մինչկապիտալիստական հասարակական հարաբերությունների մնացորդներով:

Տարբերության գծերը,—Կազակստանի հյուսիսում՝ անտառատափաստանային շերտում արոտատեղային անասնապահությունը փոխվում է անջրդի հացահատիկային հողագործության, իսկ Միջին Ասիայում հարթավայրային և լեռնային տիպի արոտատեղային անասնապահությունն ընդմիջվում է ոռոգիների ջրով, բարձր ինտենսիվություն ունեցող հողագործությամբ:

Կազակստանի և Միջին Ասիայի հանրապետությունների սահմանը:

ԿԱԶԱԿՍՏԱՆ

Կազակստանը նախկին ռուսական կայսրության ամենահետամնաց գաղութներից մեկն եր՝ ազգաբնակության խիստ ցածր կուլտուրական մակարդակով, քոչվորական անասնապահությամբ, որը հիմնական մասնագիտացումն եր: Կազակստանն այժմ՝ նոր սոցիալական պայմաններում, շնորհիվ կոլեկտիվացման, խորհտնտեսությունների, արդյունաբերական ձեռնարկությունների և յերկաթուղիների շինարարության, դառնում է մի յերկիր՝ իր համամիութենական նշանակություն ունեցող ներքին տիպ բաղադրով, որպիսին և Կարագանդայի ածխի ավազանը, գունավոր մետաղաձուլությամբ, իր բազմազան գյուղատնտեսությամբ, անասնապահությամբ ու հացահատիկային հողագործությամբ, ինչպես և տեխնիկական կուլտուրաներով:

Սահմանները: Դիրքը: Տարածությունը և բնակչությունը (համեմատել ԽՍՀՄ-ի մյուս մասերի հետ և արևմտ. յեվրոպական պետությունների հետ):

Բնական պայմանները: Ռելյեֆը: Հարավային Ալթայ՝ Կիրգիզիայի ծալքավոր յերկրով, Տյան-Շան: Դաշտավայրեր—Մերձկասպյան, Թուրանի, Արևմտյան Սիբիրի:

Ներքին ջրերը.—Կասպից ծով՝ Ուրալ և Եմբա գետերով, Արալյան ծով՝ Սիր-Դարիայով, Բալխաշ լիճը՝ Իլի գետով, Իրտիշ: Բազմաթիվ լճեր: Կազակստանի ներքին ջրերի գնահատումը՝ խմելու ջուր մատակարարելու, նավագնացության, ենթերգետիկայի և վոռոգման տեսակետից:

Կլիմայի ծայրահեղ ցամաքային և չոր լինելը: Հողաբուսական գոտիները: Կըզըլ-Կում անապատը: Աննշան անտառները և նրանց տեղաբաշխումը: Սակսաուլ և նրա նշանակությունը: Ոգտակար հանածոներ՝ ածուխ (Կարագանդա), նավթ (Եմբա), պղինձ (Կոունրադ և այլն), բազմամետաղներ (պոլիմետալ, Ռիդդեր և այլն), ֆոսֆորիտներ (Ակտյուբինսկ), վոսկի, աղ:

Պատմական անցյալը: Բոչվորական նատուրալ անասնապահության տիրապետությունը Կազակստանում՝ նրա ինքնուրույնության ժամանակ: Կազակստանի նվաճումը ցարական Ռուսաստանի կողմից: Գաղութացում, լավ հողերի խլում, անասնապահության վանումը դեպի չոր տափաստանները: Բոչվորական անասնապահության քայքայումը: Քաղաքացիական պատերազմի և 1921 թ. սովի ազդեցությունը Կազակստանի տնտեսության վրա:

Ազգաբնակությունն: Խտության աշխարհագրությունը: Հիմնական ազգություններ և նրանց տեղաբաշխումը: Կազակներ, նրանց տնտեսական կենցաղը և կուլտուրան:

Կազակստանի մարզային բաժանումը:

Քաղաքներ՝ Ալմա-Աթա, Սեմիպալատինսկ, Ակտյուբինսկ, Պետրոպավլովսկ, Ուրալսկ, Կզլ-Որդա, Կարագանդա, Կարսակպայ, Կոունրադ, Ռիդդեր: Քաղաքների դասավորումը ծայրամասերում և դրա պատճառները:

Տնտեսությունը: Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը: Բայության լիկվիդացիան: Կոլեկտիվացում: Բոչվորների նստակեցության անցնելը: ՄՏԿ-ների, ՄԹԿ-ների (Մեքենա-խոտհարքային կայան) և հացահատիկային, մսային ու մասնագիտական խորհտնտեսությունների շինարարությունը: Նոր բամբակային շրջանների կազմակերպումը: Նոր կուլտուրաների պատվաստումը՝ քենդրրի, բրնձի, կաուչուկի, յուղատու բույսերի և դեղաբույսերի:

Գյուղատնտեսության տիպերը, նրանց տեղաբաշխումը:

Գյուղատնտեսության անկայունությունը, մանավանդ անասնապահության. դրա պատճառները. անկայունության դեմ պայքարելու միջոցները: Ջուրը և պայքար նրա դեմ:

Ցերկաթուղային շինարարություն: Թուրքստանը և նրա նշանակությունն արևելյան Կազակստանի յուրացման (освоение) համար: Պետրոպավլովսկ—Ակմոլինսկ—Կարագանդա գիծը: Առբերման (под'ездные) ճանապարհներ: Ջրային ճանապարհներ՝ հին և նոր:

Գունավոր մետաղաձուլության և քիմարդյունաբերության զարգացումը.—Դիզեր, Կոուներադ, Մերձ-Բալխաշ, Կարսակպայ, Ակտյուբինսկի քիմկոմբինատ: Կարաբուղաս: Սնունդ-համի արդյունաբերություն և մսի կոմբինատներ:

Նոր կադրերի դաստիարակությունը: Կազակների ներգրավումն արդյունաբերության մեջ: Նրանց ազգային կուլտուրայի վերելքը: Նոր քաղաքների կառուցումը:

Զարգացման հիմնական գծերը յերկրորդ հնգամյակում:

ՄԻՋԻՆ ԱՍԻԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՈՒԶԲԵԿՍՏԱՆԻ ՍԽՀ, ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆԻ ՍԽՀ, ՏԱՋԻԿՍՏԱՆԻ ՍԽՀ՝ ԼԵՌՆԱԲԱՂԱՇԽԱՆԻ ԱՎՏՈՆՈՄ ՇՐՋԱՆՈՎ: ԿԱՐԱԿԱԼՊԱԿՆԵՐԻ ԱՍԽՀ, ԿԻՐԳԻԶԻԱՅԻ ԱՍԽՀ

Միջին Ասիան մի յերկիր է, վորն աչքի յե ընկնում բացառիկ բազմազանությամբ՝ թե՛ իր բնական պայմաններով, թե՛ ազգային կազմով, թե՛ բնակչության կուլտուրական մակարդակով և տնտեսության ուղղությամբ: Հիմնական մասնագիտացումը բամբակագործությունն է: Մինչհեղափոխական ժամանակաշրջանում, յերբ Թուրքմենստանը ցարական Ռուսաստանի գաղութն եր, այդ մասնագիտացումը հենվում եր հին տեխնիկայի և բամբակի անմիջական արտադրողների բազմահարկ շահագործման վրա: Այժմ, յերբ Միջին Ասիայի հանրապետությունները դառել են Խորհրդային Ֆեդերացիայի հավասարազոր անդամներ, այդ մասնագիտացման կենսագործումը (վորը նրան զարձնում է Միության գլխավոր բամբակային բազա) հանդիսանում է Միջին Ասիայի սոցիալական և տեխնիկական վերակառուցման առանցքը և անքակտելիորեն կապված է նրա բազմակողմանի ինդուստրացման հետ:

Սահմանները: Պարսկաստանի և Ավղանստանի հետ ունեցած սահմանի կարևոր ռազմա-ստրատեգիական նշանակությունը, Հնդկաստանի մոտիկությունը, վորտեղից սպառնում է Անգլիան:

Դիրքը: Տարածությունները՝ Տաշկենդ—Մոսկվա, Տաշկենդ—Նովոսիբիրսկ:

Բնական պայմանները: Միջին Ասիան մի յերկիր է՝ բացառիկ հզոր և խիստ հակոտնյա բնությամբ: Դա զուգորդումն է ԽՍՀՄ-ի ամենաբարձր սարերի և ծովի մակերևույթից ցածր գտնվող փոսերի, դաշտավայրերի, արևադարձային տապի և սառերի բարձունքների սառցադաշտերի, ծաղկող և խիստ բնակված ոազիսների և մեռյալ ու անմարդաբնակ անապատների:

Ռելյեֆը: Կոպեն-Դաղ լեռնաշղթան, Գամիր լեռնային յերկիրը: Տյան-Շան, Սարակամբչի փոսը, Ֆերղանի հովիտը: Գետեր՝ Սիր-Դարյա (վերին հոսանք) և Ամու-Դարյա՝ նրան չհասնող վտակներով: Զարևշան, Մուրհաբ, Տեջեն: Միջին Ասիայի գետերի ռեժիմի առանձնահատկությունները, նրանց գնահատականը՝ նավաղնացության, ենթերգետիկայի և վոռոգման տեսակետից: Կլիման խիստ ցամաքային է. կլիմայի հիմնական տարբերությունները: Հողը և բուսականությունը: Կարա-Կում և Կզըլ Կում անապատները: Բարձրադիր անտառները և Սաքսաուլը: Հիմնական լանդշաֆտները՝ 1) լեռներ, 2) անապատներ և կիսաանապատներ, 3) ոազիսներ, 4) լեռնային և նախալեռնային տափաստաններ:

Ողտակար հանածոներ՝ ածուխ, նավթ, ռադիոակտիվ հանքեր (Ֆերղանա), ծծումբ (Կարա-Կում), Գլաուբերի աղ (Կարաբուղաղ):

Պատմական անցյալը: Միջին Ասիայի ոազիսները հին կուլտուրայի օջախներից են, վորոնք կապ են ունեցել Չինաստանի, Հնդկաստանի և Միջագետքի հետ: Պարսկական, հունական, չինական, արաբական, մոնղոլական, ուզբեկական ազդեցությունների հաջորդումը:

Քոչվորական անասնապահության պայքարը ջրովի հողագործության հետ, ավազոտ անապատների պայքարը ոազիսների հետ: Հին կուլտուրայի մնացորդները — Բուխարա, Խիվա, Կոկանդ:

Թուրքեստանի նվաճումը ցարական Ռուսաստանի կողմից: Գաղութային շահագործում: Փոփոխություններ տնտեսության մեջ.—յերկաթուղային շինարարություն, բամբակագործության զարգացում, տեղական արդյունաբերության քայքայում:

թյան նշանակությունը Միջին Ասիայի համար։ Ջրա-հողային ռեֆորմ։ Բայության լիկվիդացիան։ Կնոջ ազատագրումը։

Ազգաբնակությունը։ Միջին Ասիայում բնակվող ժողովուրդները, նրանց բնութագիրը և տեղաբաշխումը։ Ազգային սահմանորոշումները Միջին Ասիայում՝ 1924 թվին։ Միջին Ասիայի Խորհրդային հանրապետությունները։ Ազգաբնակության խտության աշխարհագրությունը և նրա կապը յերկրի հիմնական լանդշաֆտների հետ։

Քաղաքները՝ Տաշկենդ, Սամարղանդ, Բուխարա, Կոկանդ, Խիվա, Ստալինաբադ, Աշխաբադ, Կրասնովոդսկ, Լենինսկ (Զարջույ), Ֆրունզե, Տուրտկուլ։

Տնտեսությունը։ Գյուղատնտեսության հիմնական տիպերը՝ ա) ջրովի տնտեսություն, բ) անջրդի հողագործություն, գ) հարթավայրային քոչվորական անասնապահություն, դ) լեռնային քոչվորական անասնապահություն։ Այդ տիպերի տեղաբաշխումն ըստ հանրապետությունների։ Ջրովի հողագործության աշխատանքա-ինտենսիվ բնույթը։ Նրա կուլտուրաների կազմը։ Ջրովի հողագործության խիստ գերակշռումը Թուրքեստանի գյուղատնտեսության մեջ և բամբակի գերակշռումը ջրովի հողագործության մեջ։ Համեմատել ջրովի հողերի, բամբակի ցանքերի, բնակչության և յերկաթուղիների տեղաբաշխումը։ Վոչխարաբուծություն (Կարակուլ), մեսաբուծություն։

Միջին Ասիայի ապրանքափոխանակությունն արդյունաբերական կենտրոնի, Կաղակստանի և արտասահմանյան յերկրների հետ։ Թուրքսիբի նշանակությունը։ Միջին Ասիայի առանձին հանրապետությունների համառոտ բնութագիրը։

Առաջին հնգամյակի արդյունքները։ Բամբակի ցանքի խիստ ավելացումը՝ վոռոգվող տարածության աճի և ջրովի հողերից մյուս կուլտուրաները, հատկապես բրինձը դուրս մղելու հաշվին։ Վոչ ջրովի (богарный) ցանքի ընդարձակում, բամբակագործության մեքենացում, ՄՏԿ, ՄԽԿ, բամբակագործական խորհտնտեսությունների շինարարություն, յեգիպտական բամբակի բուծում. քոչվորների նստակյաց դառնալը, տեղական հումքը վերամշակող արդյունաբերական ձեռնարկությունների շինարարություն (բամբակագործիչ, յուղի, կոնսերվի, կաշու, ջերմի և այլ գործարաններ)։ Բամբակագործական ֆաբրիկաներ, քիմիական պարարտանյութերի գործարան Տաշկենդի մոտ։ Լեռնային արդյունաբերություններ)։ Ելեկտրիֆիկացիա։ Կուլտ-շինարարություն։ Կնոջ ազատագրումը։ Բնիկներին արդյունաբերության մեջ ներգրավելը։

Զարգացման հիմնական գծերը յերկրորդ հնգամյակում։

12. ՄԻԶՄԱՐԶԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ (2 ժամ)

ԽՍՀՄ-ի տերրիտորիայի վրա միջմարզային կապերի ամրությունն ու հաստատ լինելը։

ՄԻԶՄԱՐԶԱՅԻՆ ԿԱՊԵՐՆ ԱՊՐԱՆՔԱՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Բեռնահոսանքի քարտեզի դիտում։

1. Արդյունաբերական կենտրոնի մարզերի կապը մյուս արդյունաբերական և գյուղատնտեսական ու մինչհողագործական մարզերի հետ։ Արդյունաբերական կենտրոնի հատուկ դերը Միության միջմարզային կապերի սիստեմի մեջ, այդ կապերի ունիվերսալ բնույթը։

2. Բացի արդյունաբերական կենտրոնից, մյուս արդյունաբերական մարզերի կապը միմյանց և ուրիշ մարզերի հետ։

3. Գյուղատնտեսական մարզերի միջև յեղած կապը՝ հիմնված արտադրանքի զոնալ տարբերությունների վրա (հաց-անտառ)՝ յեվրոպական մասի և արևմուտքում, յեվրոպական մասի արևելքում, ասիական մասի արևմուտքում։

Ներմիութենական կապերի ուժեղացումն ի հաշիվ արտաքին՝ արտասահմանյան կապերի. սրանք վորպես հետևանք նոր շինարարության և վորպես ցուցանիշ մեր տնտեսության՝ կապիտալիստական շրջապատի յերկրներից՝ աճող անկախություն։

Կապի նոր ձևեր։

«Աշխատանքի աշխարհագրական բաժանումը, վորը կապիտալիզմի շրջանակներում տարբերյալորեն կատարվող պրոցես է, մեղնում դառնում է աշխատանքի տերրիտորիալ կազմակերպության պլանաչափ իրականացվող մեթոդ, հիմնված նրա մասնագիտացման վրա, ըստ ռայոնների՝ հնարավոր մաքսիմալ եֆեկտիվության հասնելու համար» (Հնգամյա պլան, յերրորդ հատոր, եջ 10)։

Ուրալ-Կուզնեցկի կոմբինատը վորպես միջմարզային կոմբինատի որինակ։

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺԻ ՄԻՋՄԱՐԶԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ

Բանվորական ուժի ժամանակավոր եմիգրացիայի հիմնական հոսանքները (արտադնացություն, հավաքագրում և բանուժը վայրից-վայր փոխադրելը)։ Այն փոփոխությունները, որ արդյունաբերության և գյուղատնտեսության սոցիալիստական շինարարության մացնում է բանվորական ուժի բալանսի մեջ։ Կադրերի պրոբլեմն առաջին անգամ ինդուստրացման յենթարկվող հետամնաց վայրերում։

Հին արդյունաբերական ռայոնների դերը վորակավոր բանուժ մատակարարելու գործում։ Քաղաքների «դերամերիկյանացում» գիգանտ-նորակառույցների շուրջը։ Գաղթի հիմնական հոսանքները։ Արտագաղթի և ներգաղթի մարդերը։

ՈՒՍՄԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

III ՄԱՍ

ԽՍՀՄ-Ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋ (ՃՅՈՒՂԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ) (40 ժամ)

1. ԽՍՀՄ-Ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (4 ժամ)

1. Մինչպատերազմյան Ռուսաստանի ժողովրդական տնտեսության կառուցվածքը։ Ռուսաստանը վորպես ագրարային յերկիր, թույլ զարգացած արդյունաբերությամբ։ Գյուղատնտեսության եքստենսիվ, հիմնականում հացահատիկային բնույթը՝ անծայրածիր չողտագործված տարածություններով։ Մինչպատերազմյան Ռուսաստանի արդյունաբերությունը հիմնականում ուրալյան տեքստիլ բնույթ, թույլ զարգացած ծանր արդյունաբերությամբ։ Արդյունաբերության տեսակետից Ռուսաստանը կախված էր արտասահմանից։ Մինչպատերազմյան Ռուսաստանի սոցիալ-տնտեսական կազմը։ Նորազույն մոնոպոլիստական կապիտալիզմը մի կողմից և զանազան մինչկապիտալիստական մնացորդները՝ մյուս կողմից։ Կապիտալիզմի ամենաարագացած ձևերն արդյունաբերության մեջ ու կիսաֆեոդալական տնտեսակարգ գյուղում, ցարական Ռուսաստանի իմպերիալիստական դեմքն Արևելքի նկատմամբ և կիսագաղութային դեմքը՝ Արևմուտքի նկատմամբ։

Ռուսաստանի սոցիալ-տնտեսական կառուցվածքը վորպես բնական հարստությունները յուրացնելու և արտադրողական ուժերը զարգացնելու արդելակ հանդիսացող գործոն։ Ռուսաստանի արտադրողական ուժերի մինչպատերազմյան տեղաբաշխումը վորպես տեղաբաշխման կապիտալիստական սկզբունքների արտահայտություն (համառոտ—ընդհանուր ակնարկ, կապը հասարակագիտության հետ)։

2. Հոկտեմբերյան հեղափոխությունը, պրոլետարիատի դիկտատուրան, արտադրական միջոցների ազգայնացումը, տնտեսության պլանային սիստեմն ստեղծեցին արտադրողական ուժերի հզոր զարգացման և արտադրության ռացիոնալ տեղաբաշխման համար բոլոր անհրաժեշտ նախադրյալները։

Արտադրողական ուժերի տեղաբաշխման հիմնական սկզբունքները ԽՍՀՄ-ում.—

ա) աշխատանքի արտադրողականության բարձրացում.

բ) գյուղի և քաղաքի հակադրության վերացում։

գ) արդյունաբերության ավելի համաչափ տեղաբաշխում,

դ) արդյունաբերության մոտեցումը հումքի և ենթերգիայի աղբյուրներին և

ե) ազգային ու ծայրամասային շրջանների արտադրական ուժերի զարգացում։

3. Միության ժողովրդական տնտեսության զարգացման հիմնական ետապները (համառոտ. կապը հասարակագիտության հետ).—

ա) քաղաքացիական կռիվների և ռազմական կոմունիզմի ժամանակաշրջան,

բ) նոր տնտեսական քաղաքականության սկիզբը,

գ) կուսակցության 14-րդ համագումարը — ինդուստրացման համագումար,

դ) կուսակցության 15-րդ համագումարը — կոլեկտիվացման համագումար,

ե) կուսակցության 16-րդ համագումարը — սոցիալիզմի հիմքի կառուցման և ամբողջ ճակատով ծավալուն հարձակման համագումար,

զ) 17-րդ կուսկոնֆերենցիան — սոցիալիզմի կառուցման և անդասակարգ հասարակություն ստեղծելու պլան։

4. Ժողովրդական տնտեսության կառուցվածքի և արտադրողական ուժերի տեղաբաշխման տեղաշարժերը վորպես ար-

դյուցք սոցիալիստական շինարարության և կուսակցության գլխավոր գծի կիրառման:

Ժողովրդական տնտեսության կառուցվածքի հիմնական ցուցանիշները.—

ա) Միության բնակչության սոցիալ-դասակարգային կազմը 1927—1932 թ.,

բ) ազգային յեկամտի կառուցվածքը և դինամիկան 1927—1932 թվերին,

գ) Ներմուծման և արտահանման կառուցվածքն ու դինամիկան 1927—1932 թ.:

դ) Պետական բյուջեյի կազմությունը և դինամիկան 1927—1932 թ.:

Արտադրողական ուժերի աշխարհագրության տեղաշարժերը (համառոտ ընդհանուր ակնարկ):

2. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԵՆԵՐԳԵՏԻԿԱ. (16 ժամ).

1. Մինչպատերազմյան Ռուսաստանի արդյունաբերության զարգացումը: Արդյունաբերության տեսակետից Ռուսաստանի կախումն արտասահմանից (ներմուծման և արտահանման տվյալներով): Մինչպատերազմյան Ռուսաստանի արդյունաբերության տեղաբաշխումը: Ցարական Ռուսաստանի արդյունաբերական ռայոնների՝ կենտրոնի, Պետերբուրգի, Ուկրաինայի դերը վորպես մետրոպոլիաներ ծայրամասերի վերաբերմամբ:

2. Արդյունաբերությունը վորպես ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության ղեկավար ճյուղ: Խոշոր մեքենական արդյունաբերությունը վորպես սոցիալիզմի անհրաժեշտ նյութական բազա: Ծանր արդյունաբերության դերը ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման մեջ: «Հասնելու և անցնելու» խնդիրը: Ոտարերկրյա կախումից ազատվելու խնդիրը և առաջավոր տեխնիկայի յուրացումը:

Հնգամյակի հիմնական հանձնարարությունները.—

«Փոխադրել մեր յերկիրն իր հետամնացության տեխնիկայով—նոր, ժամանակակից տեխնիկայի ռելսերի վրա:

ԽՍՀՄ-ն ագրարային ու անզոր, կապիտալիստական յերկրների քմահաճույքներից կախված յերկրից վերածել ինդուստրիալ ու հզոր յերկրի, միանդամայն ինքնուրույն և անկախ համաշխարհային կապիտալիզմի քմահաճույքներից:

Վերածելով ԽՍՀՄ-ն ինդուստրիալ յերկրի, մինչև վերջը դուրս մղել կապիտալիստական տարրերը, ընդարձակել տնտեսության սոցիալիստական ձևերի ճակատը և տնտեսական բազա ստեղծել ԽՍՀՄ-ում դասակարգերը վոչնչացնելու և սոցիալիստական հասարակություն կառուցելու համար:

Ստեղծել մեր յերկրում այնպիսի ինդուստրա, վորն ընդունակ լիներ վերազինել ու վերակազմել վոչ միայն ամբողջ արդյունաբերությունը, այլև տրանսպորտը և գյուղատնտեսությունը՝ սոցիալիզմի բազայի վրա:

«Փոխադրել մանր ու ցիր ու ցան գյուղատնտեսությունը խոշոր կոլեկտիվ տնտեսության ռելսերի վրա, դրանով իսկ ապահովել սոցիալիզմի տնտեսական բազան գյուղում և այդպիսով վերացնել ԽՍՀՄ-ում կապիտալիզմի վերականգնման հնարավորությունը:

Ստեղծել յերկրում տեխնիկական ու տնտեսական բոլոր անհրաժեշտ նախադրյալները յերկրի պաշտպանունակությունն առավելագույն չափով բարձրացնելու համար, մի բան, վոր հնարավորություն է տալիս վճռական դիմադրություն կազմակերպել դրսից ռազմական ինտերվենցիա կազմակերպելու բոլոր և ամեն տեսակ փորձերին, դրսից ռազմական հարձակում գործելու բոլոր և ամեն տեսակ փորձերին» (Ստալին, ԿԿ և ԿՎՀ-ի հունվարյան պլենումի զեկուցումից):

3. Ենթրգետիկայի նշանակությունը ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության մեջ: ԽՍՀՄ-ի ենթրգետիկ ռեսուրսները: Ենթրգետիկ ռեսուրսների քարտեզը. ածուխ, նավթ, գյուրավառ թերթաքարեր, տորֆ, փայտ, հիդրոենթրգիա: Ենթրգիայի տարբեր տեսակների արժեքավորումը: Ենթրգետիկ ռեսուրսների պաշարն ըստ տեսակների: Յերկրի ենթրգետիկ ռեսուրսների չհետազոտվածությունը: Վերջին տարիների պաշարների հսկայական աճումը՝ վորպես արդյունք յերկրաբանական – հետախուզական աշխատանքների լայն ծավալման:

Ժողովրդական տնտեսության վառելանյութային–ենթրգետիկ բալանսը: Վառելանյութի տարբեր տեսակների տեսակարար կշիռը բալանսում (դրաֆիկների դիտում): Վառելիքի բալանսում քարածխի, նավթի և փայտի գերակշռող դերը: Թանկարժեք վառելանյութերի այրման անռացիոնալությունը (քարածխի լավագույն տեսակները, նավթ, փայտ և այլն): Նրանց փոխարինումը վառելանյութի յերկրորդական տեսակներով (չոր, գորշ ածուխ,

տորֆ, դյուրավառ թերթաքար): Զրաեներգիայի լայն ոգտագործում: Տեղաշարժեր վառելանյութի բալանսի ռացիոնալացման մեջ՝ առաջին հնգամյակում: Վառելանյութի արդյունահանման և նրա սպառման աշխարհագրությունը (ըստ մարզերի): Տարածական խզումներ վառելանյութի արտադրանքի և նրա դործածության գլխավոր շրջանների միջև: Վառելանյութի հանքահանման մեծադույն կենտրոնացում յերկու կենտրոններում — Դոնբաս (քարածուխ), Կովկաս (նավթ): Հիմնական արդյունաբերական շրջաններում (Մոսկվայի մարդ, Իվանովայի մարդ, Լենինդրադի մարդ և Գորկու յերկիր (վառելանյութի հիմնական տեսակը բերվում է հեռվից): Ժողովրդական տնտեսության տեսակետից այդ դրության անռացիոնալությունը: Տեղական եներգետիկ միջոցների մաքսիմալ ոգտագործման և հեռվից բերվող վառելանյութի տեսակարար կշռի նվազեցման խնդիրը: Ելեկտրիֆիկացիայի նշանակությունն այդ խնդրի լուծման ասպարեզում:

ԽՍՀՄ-ի վառելանյութային ռեսուրսների աշխարհագրությունը: Վառելանյութային ռեսուրսների քարտեզի դիտում: Քարածխի ամենանշանավոր ավազանները (Կուզբաս, Դոնբաս, Կարագանդա, Մերձմոսկովյան ավազանը, Կիզիլ, Զելյաբինսկի, Չերեմխովի): Հանքահանման աշխարհագրության և պաշարների աշխարհագրության անհամապատասխանություն վորպես արտադրության կապիտալիստական տեղաբաշխման ժառանգություն: Կուզբասի, Մերձմոսկովյան ավազանի, Կարագանդայի, Ուրալի հանքահանման աճումը: Կուզբասը վորպես ԽՍՀՄ-ի յերկրորդ քարածխային բազա, Կարագանդան՝ յերրորդ:

Քարածխային արդյունաբերության վերակառուցումը:

Քարածխի արդյունաբերության ծրագիրը յերկրորդ հնգամյակում:

4. Նավթ. Նրա պաշարը և հանքավայրերը՝ Բաքու, Գրոզնի, Մայկոպ, Եմբա, Սախալին:

Նավթի նոր շրջաններ՝ Ուխտա, Սաերլիտամակ:

Նավթի հանքահանումն ըստ հանքավայրերի, հնգամյա պլանը և նրա դերակատարումը:

Նավթի արտահանումը: Նավթի արդյունաբերության վերակառուցումը: Նավթամուղներ՝ Բաքու—Բաթում, Գրոզնի—Տուապսե:

Նավթի արդյունաբերության պլանները յերկրորդ հնգամյակում:

5. Թերթաքարեր. Նրանց նշանակությունը վորպես եներգիայի աղբյուր և վորպես քիմիական հումք: Ամենագլխավոր հանքավայրերը (Ոբշչի Սիրտ (Общий Сырт) և ուրիշները):

6. Միության տորֆի ռեսուրսները: Նրա տեղաբաշխումը: Տորֆի արտադրության աճումն առաջին հնգամյակում: Արտադրության նոր յեղանակները:

Տորֆի արդյունաբերության ծրագիրը յերկրորդ հնգամյակում, նախագծվող կայաններ, վորոնք պիտի տորֆով աշխատեն:

7. Միության անտառային ռեսուրսները: Նրանց տեսակարար կշիռը համաշխարհային ռեսուրսներում: Անտառների աշխարհագրությունը: Փայտամթերման գլխավոր շրջանները: Փայտամթերման և անտառային ռեսուրսների աշխարհագրության անհամապատասխանությունը: Փայտը վորպես քիմիական հումք: Փայտի տեսակարար կշիռը վառելանյութի բալանսում նվազեցնելու խնդիրը: Անտառային և անտառաբուծական արդյունաբերության մնացորդների ոգտագործումը վորպես վառելանյութ՝ ելեկտրոկայանների համար:

8. Միության ջրային եներգիայի ռեսուրսները և նրանց շրջանները: Զրային եներգիայի ամենագլխավոր աղբյուրները՝ Անգարա, Յենիսեյ, Վոլգա, Կամա-Դնեպր, Սուլակ: Հիդրոեներգետիկ ռեսուրսների քարտեզի դիտում: Զրային ռեսուրսների ոգտագործումն առաջին հնգամյակում: Ամենագլխավոր հիդրոելեկտրոկայանները:

Յերկրորդ հնգամյակի հեռանկարները:

Զրային եներգիան վորպես բացառիկ եժան ելեկտրոեներգիայի աղբյուր: Զրային ռեսուրսների կենտրոնները վորպես եներգիա արդյունաբերական կոմբինատների կենտրոններ: Զրային եներգիայի նշանակությունն արդյունաբերության տեղաբաշխման համար:

9. ԽՍՀՄ-ի ելեկտրիֆիկացիան: Շողին կապիտալիզմի եներգետիկան է, ելեկտրականությունը՝ սոցիալիզմի:

Ելեկտրականությունը վորպես եներգիայի ամենակատարյալ տեսակ: Լայն ելեկտրիֆիկացիայի անհնարինությունը կապիտալիզմի ժամանակ: Տնտեսության սոցիալիստական սիստեմը վորպես լայն ելեկտրիֆիկացման նախադրյալ:

Ելեկտրիֆիկացիան և նրա դերը սոցիալիստական պայմաններում՝ արդյունաբերության ռացիոնալ տեղաբաշխման գործում: Ելեկտրիֆիկացիան և գյուղի ու քաղաքի միջև յեղած հակադրու-

թյան վերացումը: Լենինի դերը յերկրի ելեկտրիֆիկացիայի խնդրում՝ «կոմունիզմը խորհրդային իշխանությունն է, պլյուս ելեկտրիֆիկացիան» (Լենին): Գոելրո-ի պլանը (Ռուսաստանի ելեկտրիֆիկացման պետական հանձնաժողով) և նրա պատմական նշանակությունը: «Գոելրոյի պլանը՝ վորպես իրոք միասնական և իրոք պետական պլան» (Ստալին): Գոելրոյի պլանը և նրա կենսագործումը: Գլխավոր ելեկտրոկայանները. ելեկտրիֆիկացիայի քարտեզը:

10. Արդյունաբերությունը:

Սև մետաղաձուլությունը: Ցերկաթի պաշարը: Համեմատությունը համաշխարհային պաշարի հետ: Ամենագլխավոր հանքատեղերը և պաշարը — Ուրալում (Մագնիտնայա, Վիսոկայա, Բլագոդատ, Բակալ, Ալապաևի, Սինար, Կամարովո-Զիգազին, Լիպեցկ, Գրիոկ). Կուրսկի մագնիսային անոմալիա: Մեր պաշարների թույլ հետախուզումը և նրանց աճումը վերջին տարիներին:

Ցերկաթի հանքահանման և սև մետաղաձուլության տեղաբաշխումը հնգամյակի սկզբին: Ուկրաինայի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը վորպես Միության ածխի և մետաղաձուլության միակ բազա հնգամյակի սկզբին: Ու. ԿԿ-ի վորպես յերկրորդ մետաղաձուլական բազայի առաջին հնգամյակի պլանը: Մետաղաձուլական գիգանտ-գործարանների նոր տիպը: Նոր գործարանների համեմատությունը հների հետ՝ տեխնիկայի և արտադրանքի ինքնարժեքի տեսակետից: Սև մետաղաձուլական նոր գործարանների կառուցումն I հնգամյակում՝ Մագնիտոգորսկի, Կուզնեցկի, Նիժնիտագիլի, Զապորոժի, Կրիվոյ Ռոգի, Ազով-Ծովի: Ջերժինսկու, Տոմսկու, Վորոշիլովի անվան մետաղաձուլական գործարանների վերակառուցումը հարավում: Ուրալի հին լավագույն մետաղաձուլական գործարանների մասնագիտացումը՝ փայտածխով պատրաստվող բարձրորակ պողպատ արտադրելու գծով: Սև մետաղաձուլության աշխարհագրական տեղաշարժերը հնգամյակի վերջին: Սև մետաղաձուլության քարտեզի դիտումը: Սև մետաղաձուլության ծրագիրը յերկրորդ հնգամյակում: Սև մետաղաձուլման գծով ԽՍՀՄ-ի տեղը համաշխարհային տնտեսության մեջ առաջին և յերկրորդ հնգամյակի վերջին: Համեմատություն ՀԱՄՆ-ի, Գերմանիայի, Անգլիայի և Ֆրանսիայի հետ:

Գունավոր մետաղաձուլություն: Գունավոր մետաղների պաշարը և նրանց համեմատությունը համաշխարհայինի հետ: Պղնձի, ցինկի և ուրիշների ամենագլխավոր հանքավայրերը: Գունավոր մետաղաձուլության թույլ զարգացած լինելը I հնգամյակի սկզբին: Ուրալը վորպես գունավոր մետաղաձուլության հիմնական բազա առաջին հնգամյակում և Կազակստանը՝ գլխավոր ու հիմնական բազա յերկրորդ հնգամյակում, բազա, վորն ունի համաշխարհային նշանակություն: Նոր գործարանների շինարարությունն Ուրալում, Կազակստանում և Կուզնեցկի ավազանում:

Առաջին հնգամյակի ընթացքում ալյումինի նոր ստեղծված արդյունաբերությունը:

Գունավոր մետաղաձուլության պլանը յերկրորդ հնգամյակում:

Մետաղամշակման արդյունաբերություն: Մետաղամշակման արդյունաբերության դրությունը հնգամյակի սկզբին: Մեքենաշինության ղեկավար դերը ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման գործում:

Մեքենաշինության նոր ճյուղերի ստեղծումն առաջին հնգամյակում (ավտոյի, դաղդյահի, տրակտորի, կոմբայնի, տուրբինի, դիզելի, շարիկ-պոդշիպնիկի, ֆրեզերի արտադրություն, ելեկտրոտեխնիկա և այլն): Հնգամյա պլանը և նրա կենսագործումը: ԽՍՀՄ-ի տեղը համաշխարհային մեքենաշինության մեջ՝ արտադրության գլխավոր ճյուղերի գծով: Հին արդյունաբերական շրջանների մասնագիտացումը (Մոսկվայի մարզ, Իվանովոյի, Լենինգրադի)՝ մեքենաշինության բարձրորակ և պատասխանատու տեսակների գծով: Այդ շրջանների դերն առաջավոր տեխնիկայի տիրապետման ասպարիզում: Այդ շրջանների դերը նոր արդյունաբերական շրջանները տեխնիկապես վերազինելու և ինդուստրացման յենթարկելու ասպարիզում: Նոր շրջանների (Ուրալ, Արևմտյան Սիբիր, Բաշկիրիա և այլն) մասնագիտացումը մեքենաշինության շատ մետաղ պահանջող և կոպիտ տեսակների վրա՝ շոգեքարշեր, վագոնաշինարարություն: Ծանր մեքենաշինության փոխադրումն արևելք, վորպես մոտեցում հումքի աղբյուրներին և սպառման շրջաններին:

Մետաղարդյունաբերության գլխավոր ճյուղերի տեղաբաշխումը և կենտրոնները: Մետաղարդյունաբերության քարտեզը: Ելեկտրոտեխնիկական արդյունաբերությունը և նրա տեղաբաշխումը:

Մետաղամշակման արդյունաբերության զարգացման հեռանկարները յերկրորդ հնգամյակում։

Քիմիական արդյունաբերություն։ Քիմիական արդյունաբերության թույլ զարգացումը նախապատերազմյան Ռուսաստանում։ Ցերկրի քիմիացումը, վորպես ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման ակտուալ խնդիր։ Քիմիացում և յերկրի պաշտպանունակություն։

Քիմիական արդյունաբերության հումքի շրջանները։ Ֆոսֆորիտների հանքեր (Վյատկա), ապատիտներ (Խիբին), կալիի աղեր (Սոլիկամսկ), կերակրի աղ (Արտեմովսկ, Բասկունչակ, Ուսոլյե), գլաուբեր յանաղ (Ղարաբուլաղ)։ Սև ու գունավոր մետաղների, կոքսի արդյունաբերության, վայտամշակման և անտառ-արդյունաբերության մնացորդները վորպես հումք քիմիական արդյունաբերության համար։

Առաջին հնգամյակի արդյունքները։

Պարարտանյութերի, արհեստական թելի, սինթետիկ կաուչուկի, ազոտի, սինթետիկ ամիակի և այլ արդյունաբերական ճյուղերի ստեղծումը։ Բոբրիկովի, Վոսկրեսենսկու, Բերեզնիկովի, Մագնիտագորսկի, Կեմերովսկի, Խիբինոգորսկի և մյուս կոմբինատների շինարարությունը։ Ցերևանի սինթետիկ կաուչուկի գործարանի կառուցումը։ Քիմիական արդյունաբերության ամենանշանավոր շրջաններն ու կենտրոնները։—Ուրալ (տեղական քիմիական հումք և մետաղների մնացորդներ), Դոնբաս (կոքսացման և մետաղաձուլական արդյունաբերության մնացորդներ), Միջին Վոլգայի մարզ (թերթաքարեր և Վոլգայի եժան էներգիա), Մոսկվայի մարզ (ֆոսֆորիտներ, Մերձմոսկովյան քարածուխ և բերովի հումք), Հյուսիսային Կովկաս (քիմիական հումք և ջրային էներգիա), Սիբիր (կոքսացման և մետաղաձուլման մնացորդներ)։

Քիմիական արդյունաբերության տեղաբաշխման տեղաշարժերն առաջին հնգամյակում։ Քիմիական արդյունաբերության քարտեզը։ Հումքին և էներգիային մոտենալը (Դոնբաս, Ուրալ, Սիբիր)։ Քիմիական արդյունաբերության ծրագիրը։

Տեքստիլ արդյունաբերություն։ Տեքստիլ արդյունաբերության քարտեզը։ Տեքստիլ արդյունաբերության տեղաբաշխման (բամբակի, վուշի, բրդի և մետաքսի) նշանավոր շրջաններն ու կենտրոնները։ Բամբակի գործված քների արդյունաբերության տեղափոխումը հումքի աղբյուրներին մոտ՝ Միջին Ասիա, Անդրկովկաս և Սիբիր։ Հին շրջանների մասնագիտացումը բարձրորակ գործված քների գծով։ Տեքստիլ արդյունաբերության մեջ նոր արտադրությունների ստեղծում՝ տեխնիկական հյուսվածքներ, արհեստական թել և այլն։ Առաջին հնգամյակի նորակառույցները։ Տեքստիլ արդյունաբերության հեռանկարները յերկրորդ հնգամյակում։

Արդյունաբերության այլ ճյուղեր։ Փայտամշակման, սնունդ-համի, չինանյութերի։ Նրանց զարգացումն առաջին հնգամյակում։ Սնունդ-համի արդյունաբերությունը խոշոր ինդուստրիա դարձնելը։ մսի կոմբինատների, սառցարանների, բեկոնի գործարանների կառուցում և այլն։ Շինանյութերի արդյունաբերության զարգացումը՝ կապված կապիտալ շինարարության զարգացման հետ։ Տեղական շինանյութերի մաքսիմալ ոգտագործման խնդիրները։ Այդ ճյուղերի հեռանկարները յերկրորդ հնգամյակում։

3. ԽՍՀՄ-Ի ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ (10 ժամ)

1. Գյուղատնտեսության հետամնացությունը մինչպատերազմյան Ռուսաստանում—հետամնաց, պրիմիտիվ տեխնիկա, արորի տիրապետություն, տնտեսության յեռադաշտյան սիստեմի գերիշխումը, ցածր բերքատվություն, անասնաբուծության թույլ զարգացումը։

2. Հոկտեմբերյան հեղափոխությունը և ագրարային հարցի լուծումը։ ԽՍՀՄ-ն մանր ու մանրադույն գյուղացիական տնտեսության յերկրից աշխարհի խոշորագույն գյուղատնտեսական յերկրի վերածվելը։ ԽՍՀՄ-ի ինդուստրացումը և խորհտնտեսությունների ու ՄՏԿ-երի շինարարությունը վորպես նախադրյալ գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացման լայն ալիքի։ Կոլեկտիվացման ընթացքը։ «Ով-ում»-ի հարցի լուծումը վոչ միայն արդյունաբերության, այլև գյուղատնտեսության մեջ։ Սոցիալիստական սեկտորը վորպես գերիշխող սեկտոր հնգամյակի վերջում՝ ցանքի տարածությամբ, ընդհանուր և ապրանքային արտադրանքով։ Գյուղատնտեսության սոցիալ-տեխնիկական վերակառուցումը։ Ցանքի տարածության ընդհանուր աճումը։ Տեխնիկական բույսերի և ցանովի խոտերի աճումը։ Բերքատվության բարձրացումը։ Գյուղատնտեսության տեխնիկական վերազինումը։ Տրակտորների, կոմբայնների, խրձկապների, այլ հավաքող գործիքների, ցանող մեքենաների, ճակնդեղահանների, ճակնդեղի

կոմբայնների, վուշաթակերի, կարտոֆիլահանների և այլն կիրառումը: Հանքային պարարտանյութերի գործադրման աճումը: Ագրոտեխնիկական տեղաշարժերը.—վաղ աշնանավարի աճումը, տեսակավոր սերմեր ցանելը, շարքացան և այլն: Մեքենայացման արմատացումն անասնաբուծության մեջ՝ ելեկտրոկիթ, կերի պատրաստման մեքենայացում, սիլոսացման մեքենայացում և այլն: Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հեռանկարները յերկրորդ հնգամյակում:

3. Գյուղատնտեսության մասնագիտացումը: Կուսակցության 16-րդ համագումարի վորոշումներն այդ հարցի առթիվ: Գյուղատնտեսության ռացիոնալ և հետևողական մասնագիտացման անհնարին լինելը կապիտալիզմի ժամանակ և մանր դյուղացիական տնտեսությունների պայմաններում: ԽՍՀՄ-ի գյուղատնտեսության մասնագիտացման սոցիալ-տնտեսական նախադրյալները:

Արդյունաբերության ղեկավար դերը գյուղատնտեսության մասնագիտացման պրոցեսում: Բնական պայմանների դերը գյուղատնտեսության մասնագիտացման հարցում: Տրանսպորտի վերակառուցման և նոր տրանսպորտի շինարարության ազդեցությունը գյուղատնտեսության տեղաբաշխման վրա:

Գյուղատնտեսության արտադրական մասնագիտացման քարտեզ:

4. Հացահատիկային տնտեսություն: Մինչպատերազմյան Ռուսաստանում գյուղատնտեսության մեջ եքստենսիվ դիչատիչ հացահատիկային հողագործության գերիշխումը:

Հացահատիկային տնտեսության տեղաբաշխումը հնգամյակի սկզբին: Այդ տեղաբաշխման անռացիոնալությունը — հացահատիկային կուլտուրաների զգալի տեսակարար կշիռ սպառող շերտում, վորոնք հողա-կլիմայական և տնտեսական պայմաններով ավելի հարմար են տեխնիկական կուլտուրաների և կաթնատու անասնապահության համար, բ) հացահատիկային կուլտուրաների զգալի տեսակարար կշիռ մերձ-արևադարձային շրջաններում (Անդրկովկաս, Սև ծովի ափը), այսինքն՝ այն շրջաններում, վորոնք պլտանի յեն բարձրարժեք կուլտուրական բույսերի և պտղաբուծության համար, գ) ցորեն Կազակստանի և Միջին Ասիայի դաշտային հողերում՝ փոխանակ բամբակի և առվույտի և դ) չոգտագործված հսկայական հողային տարածություններ Անդրվոլգայում, Կազակստանում, Սիբիրում: Հացահատիկային

տնտեսության աշխարհագրության տեղաշարժերն առաջին հընդամյակում: Հացահատիկային տնտեսության տեղափոխումը դեպի արևելք: Վարելահողերի հսկայական աճում Անդրվոլգայում, Կազակստանում, Սիբիրում: Հացահատիկների տեսակարար կշռի կրճատումն Անդրկովկասում, Միջին Ասիայում և վոչ սևահողային շերտում: Տեղաշարժեր հացահատիկային կուլտուրաների հարաբերությունների մեջ: Գարնանացան ցորենի և յեղիպտացորենի ցանքերի աճումը: Հացահատիկային գլխավոր կուլտուրաների տեղաբաշխումը: Հացահատիկային կուլտուրաների քարտեզի դիտումը: ԽՍՀՄ-ի ցորենի գոտիները: Ցորենի յերեք բազա՝ 1) հիմնականը՝ ՌՍՖՍՀ և Հյուսիսային Կովկաս, 2) Պովոլժյե, 3) Կազակստան ու Սիբիր: Աշնանացան և գարնանացան ցորենի շրջանները: Հաճարի և վարսակի արտադրության շրջանները: Ապրանքային հացահատիկային տնտեսության շրջանները: Հացահատիկային կուլտուրաների բեռնահոսանքները և միջշրջանային կապերը: Դիտել հացահատիկների բեռնահոսանքների քարտեզը:

Հացահատիկային տնտեսության հեռանկարները յերկրորդ հնգամյակում:

5. Տեխնիկական կուլտուրաներ: Տեխնիկական կուլտուրաների ցանքի տարածության աճումը հեղափոխությունից հետո: Ճակնդեղի ցանքի տարածության դինամիկան: ԽՍՀՄ-ի տեղը համաշխարհային ճակնդեղացանության ասպարիզում: Ճակնդեղի տնտեսության սոցիալական ստրուկտուրայի փոփոխությունը: Ճակնդեղացանության և ճակնդեղի շաքարի արդյունաբերության շրջանները (ՌՍՖՍՀ և ԿՍՄ): Ճակնդեղացանության աշխարհագրության տեղաշարժն առաջին հնգամյակում դեպի արևելք և հարավ (Հյուսիսային Կովկաս, Կիրգիզիա, Սիբիր, Հեռավոր Արևելքի յերկիր): Ճակնդեղացանության քարտեզի դիտում: Ճակնդեղացանության և ճակնդեղի շաքարի արդյունաբերության հեռանկարները յերկրորդ հնգամյակում:

Վուշ: Ցանքի տարածության դինամիկան: Խորհրդային Միության տեղը համաշխարհային տնտեսության մեջ՝ ըստ ցանքի տարածության և ըստ արտահանման: Վուշի խորհտնտեսությունների և ՄՏԿ-ի շինարարություն: Վուշի գործարանների կառուցում:

Վուշագործության տեղաբաշխումը: Վուշի քարտեզի դիտում: Արևմտյան մարզ, Լենինգրադի հարավը, Իվանովոյի,

Մոսկվայի հյուսիսը, Գորկու յերկրի արևմուտքը և Հյուսիսային յերկրի հարավ-արևմուտքը վորպես վուշագործության գլխավոր շրջաններ: Ցանքերի աճումն Արևմտյան Սիբիրում, Արևելյան Սիբիրում և Հեռավոր Արևելքի յերկրում: Վուշամշակման արդյունաբերությունն այդ շրջաններում: Վուշագործության հեռանկարները յերկրորդ հնգամյակում:

Բամբակ: Մինչպատերազմյան Ռուսաստանում բամբակագործական արդյունաբերության կախումը ներմուծվող բամբակից: Բամբակագործության գլխավոր շրջանները (Միջին Ասիա, Հարավային Կաղակստան, Անդրկովկաս): Ցանքի տարածության աճումն այդ շրջաններում: Արհեստական վոռոգումը և բամբակի ցանքերը: Հացահատիկային կուլտուրաների դուրս մղումը ջրովի հողերից (ցորենի և բրնձի) և նրանց փոխարինումը բամբակով: Հին վոռոգման ցանցի վերակառուցումը և վոռոգման նոր շինարարություն: Բամբակագործական խորհտնտեսությունների շինարարություն: Բամբակագործության նոր շրջաններ (Հյուսիսային Կովկաս, Ուկրաինա, Ղրիմ): Բամբակագործության հեռանկարները յերկրորդ հնգամյակում:

Նոր տեքստիլ կուլտուրաներ: Քենդիրի, կենաֆի և ռամիի ցանքերի զարգացումն ու նրանց տեղաբաշխումը:

Յուղատու կուլտուրաներ: Արևածաղկի ցանքերի դինամիկան: Արևածաղկի աշխարհագրությունը և ձեթի արդյունաբերությունը: Արևածաղկի աշխարհագրության տեղաշարժերը՝ շարժումը դեպի ՌՍՖՍՀ, Միջին Վոլգա և Սիբիր: Սոյայի, կանեփի բույսերի, թեյի, ծխախոտի, ցիտրուսային բույսերի աճումն ու տեղաբաշխումը: Պղաբուծության ու խաղողագործության զարգացումը:

Մերձքաղաքային բանջարաբուծություն, նրա աճումը վերջին տարիներին և նշանակությունը պրոլետարական կենտրոններն սպասարկելու տեսակետից:

Անասնաբուծություն: Կերի բազան: Խոտհարքների և արոտատեղերի աշխարհագրությունը: Խոտացանության շրջանները: Խոտացանության աճումը հեղափոխությունից հետո: Ցեղիպտացորենի, սոյայի, լորի բույսերի և այլ կերի կուլտուրաների ցանքի զարգացումը: Ոդեգործության արդյունաբերության մնացորդները վորպես անասնապահության կերի բազա: Մեքենաթոտհարքային կայանների շինարարություն, նրանց տեղաբաշխումը և նշանակությունը՝ արևելյան շրջաններում կերի հարցը լուծելու տեսակետից:

Անասնաբուծության պրոբլեմը և նրա լուծման ուղիները: Անասունների քանակը: Անասնաբուծական խորհտնտեսությունների, ՄՏԿ և ԿԱՏ-ի (կաթնա-ապրանքային ֆերմաներ) շինարարություն: Անասնաբուծության տեսակարար կշիռը սոցիալիստական սեկտորում: Անասնաբուծության կոլեկտիվացման ընթացքի առանձնահատկությունները: Կաթնային անասնապահություն: Կաթնատնտեսության և յուղագործության գլխավոր շրջանները: Կաթնային խորհտնտեսությունների, ԿԱՏ-ի շինարարությունը, նրանց տեղաբաշխումը:

Մսացու խոշոր յեղջերավորների անասնաբուծություն: Մսային խորհտնտեսությունների շինարարությունը և նրանց տեղաբաշխումը:

Խոզաբուծություն: Խոզաբուծության գլխավոր շրջանները:

Վոչխարաբուծություն: Վոչխարաբուծության գլխավոր շրջանները (փափկարուդ, կոշտ բուրդ ունեցող):

Ձկնորսություն և վորսորդություն: Ձկնորսության և վորսորդության նշանակությունը ԽՍՀՄ-ի տնտեսության մեջ:

ԽՍՀՄ-ի ծովերը վորպես ձկնավայրեր: Ձկնորսության տեխնիկայի ցած դրությունը և դիշատիչ բնույթը ցարական Ռուսաստանում: Ձկնային տնտեսության սոցիալական և տեխնիկական վերակառուցումը: Վորսի բուռն աճումը: Ծովային ձկնորսության գլխավոր շրջանները: Ներքին ձկնորսություն գետերում և լճերում: Ձկնորսություն և ձկնարդյունաբերություն: Արհեստական ձկնաբուծություն: Ձկնային տնտեսության ռացիոնալացումը: Յերկրորդ հնգամյակի հեռանկարները:

Մորթու հարստության գնահատականը: Մորթու արհեստագործության սոցիալական բնույթը ցարական Ռուսաստանում: Նրա դիշատիչ բնույթը և մորթու հարստության նվազումը: Այդ դրությունքի սոցիալական և տեխնիկական վերակառուցումը: Ֆակտորիաների կազմակերպումը: Գազանաբուծության զարգացումը: Մորթու արհեստագործության գլխավոր շրջանները: Խորհրդային մորթիները համաշխարհային շուկայում:

Յերկրորդ հնգամյակի հեռանկարները:

4. ԽՍՀՄ-Ի ՏՐԱՆՍՊՈՐՏԸ (6 ժամ)

1. Տրանսպորտի նշանակությունը միջշրջանային և ներշրջանային աշխատանքի բաժանման համար: Տրանսպորտի տարբեր

տեսակների (գետային, երկաթուղային) դերը Ռուսաստանի տնտեսական զարգացման տարբեր ետապներում: Առաջին հնգամյակում տրանսպորտի զարգացման հետ մնալը ժողովրդական տնտեսության մնացած ճյուղերի զարգացումից: Տրանսպորտը վորպես ժողովրդական տնտեսության նեղ տեղը և նրա արմատական վերակառուցման խնդիրը:

Ապրանքաշրջանառության չափը տրանսպորտի ամենագլխավոր տեսակներում:

2. Երկաթուղային տրանսպորտը: Երկաթուղիների քարտեզը: ԽՍՀՄ-ի երկաթուղային ցանցի երկարությունն ու խտությունը: Համեմատել մյուս երկրների հետ: Երկաթուղային ցանցի աշխարհագրության մեջ եղած առանձնահատկությունները վորպես հետևանք ցարական իշխանության երկաթուղային քաղաքականության և կապիտալիզմի ժամանակ արտադրողական ուժերի վոչ-ռացիոնալ տեղաբաշխման: Երկաթուղային ցանցի ամենախիտ ռայոնները: Առանձնապես թույլ սպասարկված և երկաթուղիներից բոլորովին զուրկ շրջանները: Հիմնական երկաթուղային մագիստրալները: Կենտրոնը Սև ու Բալթիկ ծովերի նավահանգիստների հետ միացնող մագիստրալները: Կենտրոնից դեպի Վոլգայի նավահանգիստները ձգվող մագիստրալները: Սիբիրի մագիստրալ, Որենբուրգ—Տաշքենդ մագիստրալը, Թուրքսիբ, Կովկասյան մագիստրալ: Երկաթգծերի շինարարությունն առաջին հնգամյակում: Գլխավոր մագիստրալների ապրանքաշրջանառության բնույթը: Երկաթուղային տրանսպորտի նշանակությունը նոր շրջանների յուրացման (освоение) գործում: Երկաթուղային տրանսպորտի դերը ներշրջանային աշխատանքի բաժանման գործում՝ Դոնբաս, Կրիվոյ Ռոգ, Ուրալ, Կուզբաս, Անդրկովկաս և այլն: Կուսակցության վորոշումները երկաթուղային տրանսպորտի մասին: Ելեկտրիֆիկացիան վորպես երկաթուղային տրանսպորտի վերակառուցման գլխավոր գիծ: Ելեկտրիֆիկացիայի յենթարկված ուղիների շինարարությունն առաջին հնգամյակում. Ճանապարհների ելեկտրիֆիկացիան Ուրալում և Արևմտյան Սիբիրում, Հանքային Ջրերի (Миналоводск) ճյուղում, Սուրամի լեռնանցքում, Մոսկվայի հանդուցյալ մերձքաղաքային գծում և այլն: Երկաթուղային տնտեսության վերակառուցումը: Նոր երկաթգծեր երկրորդ հնգամյակում:

3. Գետային տրանսպորտը: Միության եվրոպական և ասիական մասերի ներքին գետային ճանապարհների ցանցը: Ներքին գետային ճանապարհների քարտեզի դիտումը: Գետային տրանսպորտի տեսակարար կշիռը ԽՍՀՄ-ի բեռնաշրջանառության մեջ: Գետային տրանսպորտի տնտեսական գնահատականը երկաթուղային համեմատությամբ: Գետային բեռնաշրջանառության կազմն ու դինամիկան առաջին հնգամյակի ընթացքում: Համեմատություն միջազգայինների հետ: Միության եվրոպական մասի առանձին գետային սիստեմների նշանակությունը (Վոլգայի, Դնեպրի, Հյուսիսային Դվինայի ավազանները): Ասիական մասի գլխավոր ջրային ճանապարհները: Գետերի նշանակությունը վորպես Միության դանդաղ ռայոնների հաղորդակցության ճանապարհների, հատկապես հյուսիսի, Սիբիրի և Հեռավոր Արևելքի երկրի համար: Գետային տրանսպորտի հետամնացությունը: Ջրային տրանսպորտի վերակառուցումն առաջին հնգամյակում և հեռանկարները երկրորդ հնգամյակում: Նոր ջրանցքների շինարարությունը՝ Սպիտակ ծով—Ոնեգա, Կամա—Պեչորա, Մոսկվա—Վոլգա և այլն:

Դնեպրի վրա ջրային անընդհատ ուղի սահմանելը:

Ծովերի միջև ջրային մագիստրալներ ստեղծելու պրոբլեմը: Ծովերի միջև ջրային մագիստրալներ ստեղծելու շինարարությունը:

Գետային նոր նավահանգիստների շինարարությունը: Գետային նավաշինարարությունը: Կուսակցության վորոշումը ջրային տրանսպորտի մասին:

Ծովային տրանսպորտը և նրա տեսակարար կշիռը ԽՍՀՄ-ի արտաքին առևտրի մեջ: Ներմուծման ու արտահանման կազմը և հարաբերությունը: Առաջին հնգամյակի տեղաշարժերը: Մեծ ու փոքր յեզրանավում (կաբոտաժ): Ծովային տրանսպորտի բնութագիրը (նավարկելու պայմանները, բեռների կազմը և ուղղությունը, կարևորագույն նավահանգիստները):

1. Հյուսիսային Բևեռային ծովի նավահանգիստները՝ Մուրմանսկ, Արխանգելսկ, Նովի պորտ, Իգարկա:

2. Բալթիկ ծովի՝ Լենինգրադ:

3. Սև և Ազովի ծովերի՝ Ոդեսա, Խերսոն, Նիկոլաև, Սևաստոպոլ, Կերչ, Ռոստով—Դոնի վրա, Նովորոսիսկ, Փոթի, Բաթում:

4. Կասպից ծովի՝ Բաքու, Աստրախան, Կրասնովոդսկ:

5. Յապոնական և Ոխոտի ծովերի՝ Վլադիվոստոկ, Նիկոլաևսկ՝ Ամուրի վրա, Պետրոպավլովսկ՝ Կամչատկայում:

Նավահանգիստների վերակառուցումը: Կուսակցության վորոշումը ծովային տրանսպորտի մասին: Ծովային նավատորմիղ, նրա վիճակը· տեսակարար կշիռը, փոխադրումների մեջ: Ծովային նավաշինությունը և նրա հեռանկարները:

Հյուսիսային ծովերին տիրապետելու պրոբլեմը: Կարայի եքսպեդիցիաները: Հյուսիսային ծովափի նոր նավահանգիստների շինարարությունը: Առաջին և յերկրորդ միջազգային բևեռային տարին և ԽՍՀՄ–ի առաջատար դերը: Ռադիոկայանների ցանցը:

Ավտոճանապարհային տրանսպորտը: Ավտոճանապարհային տրանսպորտի նշանակությունը՝ թույլ զարգացած տրանսպորտ ունեցող շրջանների յուրացման (освоение) համար: Ավտոճանապարհային տրանսպորտի զարգացումը և հեռանկարները:

Ոդային տրանսպորտ: Նրա նշանակությունն առանձին շրջանների կապի տեսակետից: Ամենանշանավոր ոդային գծերը:

Կապի միջոցներ: Փոստ, հեռագիր, հեռախոս–ռադիո: Նրանց տնտեսական և կուլտուրական նշանակությունը: Կապի ցանցը, նրա զարգացումը և հեռանկարները: Ռադիոկապի հատուկ նշանակությունը:

5· ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ԽՍՀՄ–Ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄՅԱԿՈՒՄ ՅԵՎ ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ (4 ժամ)

1· Սոցիալիզմի հիմքի կառուցումը: Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը: Սեփական ծանր արդյունաբերության ստեղծումը:

Նոր ճյուղերի յուրացում, ռատարերկրյա կախումից ազատվելու պրոցեսը: ԽՍՀՄ·ը ագրարային–ինդուստրիալ յերկրից ինդուստրիալ–ագրարային յերկրի փոխվելը:

2· Կապիտալիստական յերկրների պատմության մեջ չտեսնված՝ ԽՍՀՄ–ի արտադրողական ուժերի աճման տեմպերը առաջին հնգամյակում: Հետևել այդ տեմպերին ամբողջ ծանր արդյունաբերության (առանձնապես նավթաարդյունաբերության, մեքենաշինության՝ ամբողջությամբ առած և գյուղատնտեսական մեքենաշինության առանձին վերցրած), գյուղատնտեսության ցանքերի տարածությունն ամբողջությամբ առած և առանձնապես տեխնիկական, հատուկ կուլտուրաների ու ցանովի խոտերի տարածության) և տրանսպորտի աշխատանքների (հատկապես յերկաթուղիների) որինակների վրա: Համեմատել կապիտալիստական առաջավոր յերկրների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և ՀԱՄՆ–ի հետ:

Գրաֆիկների և աղյուսակների դիտում:

Շինարարությունը մեզ մոտ և կապիտալիզմի ճգնաժամը նրանց մոտ:

3· Միության տեղը համաշխարհային տնտեսության մեջ՝ հնգամյակի սկզբին և հնգամյակի վերջում, ըստ գլխավոր ճյուղերի—նավթ, քարածուխ, ավտոմեքենաներ, տրակտորներ, կոմբայններ, մեքենաշինություն, ելեկտրոներգիա, ցանքերի տարածություն, բեռնաշրջանառություն, յերթևեկողների շրջանառություն:

Համեմատել ՀԱՄՆ–ի, Անգլիայի, Գերմանիայի և Ֆրանսիայի հետ: Ի՞նչպես ենք մենք հասնում նրանց ու անցնում:

Գրաֆիկների և աղյուսակների դիտում:

4· Տեղաշարժեր ԽՍՀՄ–ի ժողովրդական տնտեսության ճյուղերի կառուցվածքի մեջ՝ առաջին հնգամյակի ընթացքում: Արդյունաբերության, առանձնապես ծանր արդյունաբերության տեսակարար կշռի խիստ մեծացումը: ԽՍՀՄ–ի ժողովրդական տնտեսության ներկա կառուցվածքի համեմատությունը կապիտալիստական առաջավոր յերկրների ժող· տնտեսության ճյուղերի կառուցվածքի հետ:

5· Արտադրողական ուժերի աշխարհագրության մեջ տեղի ունեցած տեղաշարժերը: Արդյունաբերության, հացահատիկային տնտեսության, անասնաբուծության շարժումը դեպի արևելք: Բամբակագործության նոր շրջանների ստեղծումը: Սպառող շերտը արտադրող շերտի վերածելու պրոցեսը: Արդյունաբերական նոր շրջաններ ու կենտրոններ ստեղծելը: Ուրալ—Կուզնեցկի կոմբինատը (ՈՒԿԿ):

6· Ժողովրդական տնտեսության զարգացման հիմնական գծերը յերկրորդ հնգամյակում: Յերկրորդ հնգամյակի սոցիալ–քաղաքական խնդիրը՝ անդասակարգ սոցիալիստական հասարակության ստեղծում և աշխատավորության բարեկեցության աճում: Ժողովրդական տնտեսության տեխնիկական ծավալուն վերակառուցման խնդիրը յերկրորդ հնգամյակում: Մեքենաշինության գլխավոր դերը: Արդյունաբերության և տրանսպորտի լայն ելեկտրիֆիկացման խնդիրը և ելեկտրոներգիայի արմատացումը գյուղատնտեսության մեջ:

Քարածխի, նավթի, սև մետաղաձուլման, քիմիական, տրանսպորտի և թեթև արդյունաբերության հեռանկարները:

Գյուղատնտեսության զարգացման հեռանկարները: Ամենագլխավոր կուլտուրաների և անասնապահության ճյուղերի տեղաշարժումը յերկրորդ հնգամյակում: Գյուղատնտեսության տեխնիկական վերակառուցումը:

10-ամյա դպրոցի աշխարհագրության ծրագիրը, աննշան փոփոխություններով, թարգմանված է ՌՍՖՍՀ Լուսժողկոմատի ծրագրից:



ԳԻՆԸ 1 Ռ. 50 ԿՈՊ.

ПРОГРАММА

Средних школ

IV Выпуск

ГЕОГРАФИЯ

Для 5—8 групп

Арменгиз Эривань 1933

«Ազգային գրադարան»
NL0229951

51.740